



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W. G.


1154



Ն Ո Ւ Ա Գ Ք

Հ. ՂԵԻՈՆԴԵԱՅ Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ՌՅԷ - 1858

Կ Ր Ա Կ Ո Տ

ՄԱՆՆՈՒԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

Մ Ա Ն Ո Ի Կ Պ Է Յ Ի

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ



REVISED

STENOGRAPHY

THE

OF

A

MANUAL

By
J. B. LITTLE
Author of
"The Principles of Stenography"
and
"The Art of Stenography"
New York
G. B. LITTLE & CO. PUBLISHERS
1880



ՀԱՆԳԻՍՏ

ՆՆԶԵՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԻՄՈՅ ԱՐԵԱՆԱՌՈՒՄՅ

ԵՒ ՀՈԳԻՈՅ ՀԱՐԱԶԱՏԱՅ

Ի ՍՓՈՓԱՆՍ

ԹԱՂԾԵԼՈՅ ԵՒ ԶՐԿԵԼՈՅ

ՆԱԽԵՐԳ

Տ Խ Ր Ո Ի Ն Ի

Ըզմէ խորշիս յիկեկն զուշր .
Ոշր միանգամ ժամանակ
Եշ ոշր ասմանք քածկն փակ՝
Չիք ինչ անդեկն անտրխոշր .
Չիք անաղօտ կեանք աշոշր .
Ոչ մի ծաղիկ անքառամ
Ոչ յեղանակ յամերամ .
Չիք ինչ աստեկն անտրխոշր :
Սեցանեք բեաշ ընդհանոշր ,
Եշ յոյս եշ գեղ եշ սիրոշն ,
Եշ միտք եշ սիրտ ըզգայոշն .
Չիք աստ անանց ոշ անտրխոշր :
Ո՛վ դուզ գուշոզ սիրտ ամուշր՝
Յանկայ կերկայդ ասբաստան ,
Յերբ է յոշսոյն այն պայման .
Չիք աստ անյեղ ոշ անտրխոշր :
Ե՛կ բաղձեա՛ւրդ , կեկ լաց մաքոշր ,
Չի տրխորոշքեան իսկ գոյ վերջ .
Գոյ յարագոշաւրձ եշ վայր պերձ ,
Չըրկեղոց տո՛շրք անտրխոշր :

ՅՈՒՇՔ ԵՒ ՎՍՇՔ



ՅՈՒՇՔ ԵՒ ՎԱՇՔ



Ա՛Յ

Ա՛Յ . Բարձր և խոր ձայն , և դահիճ և դայեակ .
Կապանք դառինք եւ գերութիւն քաղցրունակ : . . .
Զխարդ քաղցր ինձ՝ կարկառեալ ընդ սլարեխս
Ընդ որ հարեալ Հանգրին դռնչին ընդ ուղեղս ,
Ընդ հոտորեալ եւ հուտակեալ հոհակս հոծ ,
Չայնրս խառնել եւ ընդ մըռունչ սրբաակոծ ,
Ծովու 'ւ ամանց դաշնակելով ըզըրթունս
Յորժամ՝ Նոտոս թռակցէ զթուխ մըկանունս ,
Եւ վարիցի սիրտ յեզր անզուսպ անսպայման ,
Ա՛Յ շառաչել եւ ա՛հ կրկնել մեծ վախճան ,
Քստմնասարսուռ սահեցուցեալ ընդ ալիս
Զանթարդման զայն ներքին եւ խոր ըզգալիս :
Ա՛Յ . . . Չայն վըսեմ՝ չիք քեզ կըչիւ , չիք բընաւ ,
Ամենայն ձայն դուսանութեան չէ քեզ բաւ .

Անձրն թաղծեալ՝ նա լոկ ձայնիս վարդապետ .
 Ինքրն հիւանդ , ինքրն բրժիշկ հնարագէտ :

Ա՛հ . զհա՛րդ քաղցր առեալ ծաւալ դու յինքեան
 Եւ իբրեւ խուճիկ վերածըխես ընդ բերան .
 Զխա՛րդ ընդ շուրթ՝ նրման նետի կարեւիւր
 Ու անօտրագոյն քան զամէն իղձ թրուչիս վեր .
 Ի նըրբագոյնն ի թել՝ յոր այլք չըմատչին ,
 Ընդ կիրս սիրոյ՝ մենամարտիս դուդ ուժգին .
 Եւ մինչ փութայ ի յաղթանակս անժոյժ սեր՝
 Դու զճակատուն տեղի ունիս անվէհեր :

Ա՛հ . . . Յուրա շնչովս եւ ապառաժք լեռնականք
 Ի ջուրս եւ յող ինձ յերիւրեն արձագանդ .
 Ի սեաւ սրբինդ շրթոճուրք բնութեան պահէ պահ
 Զի՛ սրբաառուչս եւ նուրբս հընչեն ինձ ա՛հ ա՛հ . . .

Ա՛հ . . . Ծիր կենաց յերկուս յայս շունչս ըմբռնի .
 Ա՛հ՝ յեւանեղն ի յարգանդէն մայրենի ,
 Եւ Ա՛հ՝ ի մայրն անկանելով հուսկ յետին
 Եւ յանողոքն յարտասուաց ծոց՝ հող ցըրտին :
 Այլ բա՛րէ , ա՛հ . սա եւ շնչից է շաղկապ
 Ոյր առք եւ տուրք կաղմեն ըղկեանս հապըշ-
 տապ . . .

Ա՛հ . չըկեայ սիրա ըզգայուն լուս եւ անահ .
 Բայց ի հընչել զանարձագանդն այն հուսկ Ա՛հ . . .

ՎԻՇՏՒԻ ԼՈՒՌԻ

Ոչ, ոչ եւս վիշաք են թէ 'ւ թըւին առիւծունք
 Եւ ծախիցեն ըզսիրա անմաշ առամունք,
 Մինչ ելանեն դեռ ի սրբաէ խոր մաքնչմունք •
 Չէ վէր անբոյժ՝ որ հարկանէն զաղաղակ •
 Չայն վըշտաբեկ սրբաի է ձայն ներդաշնակ,
 Խաղաղարար ցաւոց իւրոց եւ կամակ :
 Վիշաք եւ տաղնապք են որ զգիշեր եւ ըզաիւ
 Ճակատիցին կուռք անմեկինք ըզսրբաիւ •
 Որպէս դայք չարք զանօգնականն հօտիւ •
 Եւ պակուցեալ սիրա ի միջի ահաբեկ,
 Ոչ փախըստեան գրտանիցէ հուն ուրեք
 Եւ ոչ աղագս ելից ձայնին չարահէգ •
 Որպէս պղպղակք սրղպըջակաց հեռահանք
 Չհառաջանաց հեռ վաղիցեն հառաջանք,
 Եւ ոչ մի խուն արձակիցին արձագանդք •
 Ալէտք ահեղք բողոքիցեն արտաքուստ
 Եւ սիրա լռեալ մըմկեալ կայցէ ի ներքուստ •
 Ո՛վ լռութիւն սրբաի, ո՛վ կապ անխախուստ :
 Ծուխ ջերաջերմ՝ ցրնդեալ ի հնոցսրն թաքուն
 Շըրջան առեալ ճարակիցի անդր համբուն
 Եւ ծրխիցի ու ոչ ծախիցի սիրա ի բուն :
 Այս են վիշաք • այս լռութիւն չար քան մահու :
 Եւ ժուժայցէ՞ սիրտ առ հարուածս այս աղղու • -
 Բեւ միայն տէր, մարթ է կեալ, դո՛ւ եւ հուժկու :

ԸՆԴԷՐ

ՏՐՏՈՒՄ ԵՍ ԱՆՁՆ ԻՄ

Ընդէր տրտում էս անձն իմ.
 Է՞ր գրչեսակոր՝ սիրտ աղու.
 Եւ չիցէ՞ ոք մըտերիմ
 Տառապանաց քոց հասու.
 Զի ամբապինդ ի շրթունս
 Ի գողունի հեծեծանս
 Նըստեալ ի խոր լըռութիւնս
 Տապէս առայտես ըզսուղ կեանս :
 Ծաղիկ նուազեալ դէռ յայգուն՝
 Զոր չեթաց ցօղ զովարար,
 Ոչ սուրհանդակն երիկուն
 Սողոխ քեզ այց ինչ արար.
 Իբր ըղկընիւն առ խաղի
 Զոր արկ արջառն առաթուր
 Ի սիկ մածեալ ճապաղի
 Ի դերդ գեղոյն զուրկ թափուր.
 Որպէս անգրի տիրական
 Պատկառելին տեսողաց՝
 Խոնարհ քան զիւր պատուանդան
 Վայրաբերեալ գեանամած.
 Որպէս այրի միամայր
 Անկեալ ի սնար անգրանկին՝
 Զոր հար մանկաղ մահասայր՝
 Կամփցի կալ անմեկին :

Գուճարեալ ինքդ ի յինքեան
 Հրաժեշտ ի բնաւ կենցաղոյս ,
 Հաստեալ աշխարհ քեզ ունայն
 Մըխիս եւ դու յալս անգոյս .
 Կասեալ են ոտք կըրից քոյ ,
 Դադարեալ թունդք եւանդեան .
 Ամենայն կիրք յանքոյթ ծոց ,
 Ամէն հառաչք ի լուսթեան :
 Յորժամ հարուած էր արտուսա
 Բըժըշկէիր դու քեզէն .
 Իսկ մինչ ցաւխոդ ի ներքուստ ,
 Ո՞վ է որ դքեզ բըժըշկէն :

Բ

Ընդէր արտուճ ես անձն իմ .
 Արի խօսեանց յունկն հոգւոյս .
 Ես քո անբաժ մըտերիմ ,
 Մի եւ յինէն տացես խոյս :
 Խօսեանց , ո՞վ սիրա յարախոով ,
 Ընդէր կաս այդպէս արտուճ .
 Հիմ հանապազ ի վերդով ,
 Զի յար ի վիշտ ապառուճ .
 Ընդէր միշտ այդպէս արխուր
 Ամբխիթար հիմ այդպէս ,
 Վասն էր խոցեալ քո անսուր
 Եւ անհարուած վէրք կըրես :

Այդչափ իցէ կար վըշտաց
 Մինչեւ սանձել զհառաչանս .
 Այդչափ մըթին քո զգացուած
 Որ ոչ գըացէ իւր թարգմանս .
 Երկբայութեան խօշ խաւար
 Այնչափ արդեօք թանձրացաւ՝
 Զի զյուսոյն դէմս իսկ դալար
 Ի քէն յանկարծ գողացաւ : . . .
 Ե՛րթ սիրտ , խօսեաց առ հողի ,
 Առ օժանդակ քո ներքին .
 Են գեղք ամէն վրտանդի ,
 Լուռ տրտմութեան՝ չիք բնաւին :

Գ

Սրդ անձն իմ՝ հիմ ես տրտում ,
 Է՛ր զիս տանջես անդադար .
 Միթէ առ կեանք ի սրգում
 Հաստատեցար վայրապար .
 Տես զի հաստիչն յարազուարձ
 Յուրախութիւն հաստեաց զէս .
 Սիրո՛յ ձեռին արարած՝
 Ընդէ՛ր սրգով զքեզ մաշես .
 Հիմ հանապաղ բիբ ի հող
 Գերեզմանի հետս յուզել .
 Ո՛չ եւ որդան գեանասող
 Տըւաւ առ լոյս թեւ վարել :

Ո՞չ գերեզման խկ անձուկ
 Նախագաւիթ վերելից .
 Եւ ո՞չ անբաւ ոլորախք
 Երկին պատի զքեւ անբիծ :
 Ամբարձ աղէ զաչա ի վեր ,
 Վերինք ի ծաղր են եւ խինդ ,
 Հիմ ի ստորինս կարեւէր
 Դեգերիցիս անձնապինդ :
 Մի զառածիս յանդուլ ցաւս .
 Բաժին սրտի 'բարձունս է .
 Արհամարհեա զաւերկրաւս
 Եւ արամութիւնդ ոչ եւս է :

Դ

Իսկ արդ ուստի՞ ցաւք քոյին .
 Թէ զքեզ կոխեաց ինչ աշխարհ ,
 Ո՞չ վաղադոյն դու ինքնին
 Եդեր ըզնա ոտընհար :
 Միթէ վրիպեաց ի քէն յոյս . —
 Եւ է՞ երբեք յոյս անվրէպ .
 Խոստումն անխաբ՝ լոկ հողւոյս՝
 Որ առ Աստուած կրթի դէպ :
 Թէ ուժացան սիրելիք . —
 Չիք մրտերիմ սերտ յերկրի ,
 Բայց որ ըղկեանս իւր ելիք
 Թափել զմահուանըս գերի :

Ի անհալւոյդ ես անջատ . —
 Ի ծոց անդր երթ մերձեցիր՝
 Ուր ամենայն սէր ազատ
 Դրնէ գրաւ զսիրտ սիրալիր :
 Եւ թէ մեռան անձկալիք . —
 Ուրեմն առ նա կանխեցին
 Առ որ եւ քո են գնալիք ,
 Ի ժամակէտն հանդրստին :
 Սահի հասակ եռանդուն . —
 Այլ ժամանեն տիք ըզգօն .
 Կասի կենաց սար զուարթուն . —
 Անմահութեան մերձի տօն :
 Երազերադ գայ օրհաս . —
 Յաւերժական ճեպի օր .
 Չեւ ի լուսոյս հրաժեշտ տաս՝
 Ու ահա ծագէ արեւ նոր :
 Ամէն վայրկեանք որ ի քէն
 Յառաջընթացք կորընչին ,
 Յանմահութիւն անդ դիմեն
 Որ ի թիկանցըդ մատչին :
 Սիրտ , որ յերկրէ անցանեա ,
 Ե՛րթ վրստահ , երթ , մի արամիր .
 Ի լաւն ի վայր դէմ գրնեա՝
 Ուր ոչ է սուդ , ոչ ձանձիր :

ՍԻՐՏ ՆԺԴԵՀ

Յովկա ցաւոց նըժգեհ գերի՝
 Ո՞ տայր ինձ յերգ օտարի
 Երգել անգուլ ու արգահաանել,
 Եւ ըզուծեալ սիրարս պընդել:
 Ա՛հ, պանդուխտ է սիրա յերկնից,
 Եւ ըզձագնեալ իւրոց կայից
 Ընդ հող ընդ աղբ թէ հարկանի,
 Սակայն փորձէ զլաւիղ երկնի:
 Ա՛հ, տայր ինձ ոք արագարագ
 Վազել ընդ խոչ եւ հակառակ,
 Եւ փոյթ ի յելս ուղւոյս ժաման
 Հանդէս սիրոյն ի հանգըրւան:
 Ո՞վ իմ հողի պանդուխտ յերկիր
 Ի բուն բարեացըդ տարագիր,
 Ի հող կապեալ եւ բանտարգել
 Յորմէ կըրիլ եւ հարկ է կրել,
 Հայեաց յերկինս՝ ի քո բնավայր
 Եւ արձակեա զչըրթանցըդ ծայր.
 Հայեաց ի վեր՝ յանձառն ի սէր,
 Հայեաց ի վայր՝ սրտիդ ի վեր:
 Տես զանցաւորս, լաց թախծագին,
 Տեսեալ զանանցն հայցեա ուժգին.
 Յիշեա՛ վասն ո՞յր հաստեալց իցեա
 Ու արհամարհեա զառքստորեա:

Ամենայն կերֆ կրկնավերտակ
 Խաղան ընդ դուրս սրտափակ .
 Մին երկնապող ցայտէ ի վեր
 Միւս խորասոյզ յարտօսը եւ յերբ .
 Երկւոր քընար սըրտին իմոյ ,
 Մի լար սըգոյ մի լար սիրոյ .
 Երկու ձայն յար ընդ սիրտ բախին
 Ու ի մի բարբառ զուգախառնին :
 Հանպա հոգիդ ան դու զմահան
 Ըզիտքրոզի խաչին հեծան ,
 Կախեալ անտի զսըրտիդ բեռինս
 Ե՛րթ ընդ դժուարս եւ ընդ դիւրինս :

ՍԻՐՏ

Տ Ա Ռ Ա Պ Ե Ա Լ

Քանի՛ անձուկ սրբախի կողար
 Եւ խկութեամբ անբաւատար •
 Յօրէ յորմէ սա սկիզբն էառ •
 Եւ զգաց անձին յերկրի թըշուառ ,
 Ո՞րքան հեղեղք զեղան կրրից
 Եւ դեռ սա զխորս իւր ոչ ելից •
 Ո՞րքան ի սմա կիրք հանապաղ ,
 Որ վերացայտ որ դարաւաղ ,
 Ըզգայութեանց յազատ շաւիղ
 Եւ ընդ մըտաց զանխուլ բաւիղ •
 Քան ըզծովու առեալ ծաւալ
 Ընդարձակի սիրտ ծալ ի ծալ ,
 Եւ յամենայն հարուած յալեաց
 Սարսեն ափուներն մըթաղգեաց •
 Մինչեւ յեախնըն թուխ կոհակ
 Պայթուսցէ մահ համախորտակ :
 Եւ դեռ ի խաղժ յարաւըրդով
 Ծըփեալ կոծի քան զամէն ծով •
 Բերանաբաց ընկալեալ զուխ ,
 Զալիս ճերմակ գունէ ի թուխ •
 Ունայն՝ խռովի , լընու՝ խռովի •
 Յագուրդ խընդրէ , միշտ ծարաւի •
 Խոնջեալ խընդրէ կալ յանդորրու
 Ու ամբոխ յամբոխս իւր յաւելու :

Զի՛նչ արարից սրբախա այսմիկ
 Զի հանգիցէ ի կրից ուսմիկ . . .
 Աստուած իմ, արկ եւ դու շիթ մի
 Շիթ մի սիրոյ, ու այլ ոչ խառնի :

ԱՌ ՍԻՐՏ

Է՛ տառապեալ իմ սըրտիկ ,
 Ոստիք ըզքեւ որպիսիք .
 Եւ այս ո՛րքան խոչընդոտ՝
 Գարշապարացըդ գայթոտ .
 Անհընարինքն ի ներքուստ
 Նիւթեալ դառինք արտաքուստ .
 Սահմնաբար ի բարձանց
 Դիմես ի կէտն յաւիտեանց .
 Կոչուք կըրից կենցաղոյս
 Խարոցք կան յով եւ տաս խոյս
 Կըարեւ յառուս բաղմադէմ՝
 Վառնեւ յերկիր տարադէմ :
 Բա՛րէ , միոյ կարճ կենաց
 Ո՞րքան դարանք են , Աստուած .
 Ամենայն կիրք պահանջեն
 Հարկ բընաւոր ի նմանէն .
 Ի հարկ , ի սակ եւ ի բաժ
 Ահա սպառի սիրտ ի քարշ .
 Առողք նորին կարք բըռուէք ,
 Տարողքըն տեարք աննըկուէք : . . .
 Ո՞ զերծուացէ զսիրտս անզօր
 Յաւարառուաց բընաւոր : —
 Աստուած իմ , մասն եւ դու առ
 Եւ քեզ լնցի սիրտ խաղառ :

ՀԱՐԲԷՆ

Ի ՔՍԱՆ ԱՄԵԱԿՆ ԻՄ

ՅԱլպեայ ի սար մենաւոր
 Յերեկորին լռութիւնս՝
 Ճեմէր ի սիրտ սրգաւոր
 Յականողիս խաժագոյնս
 Տիրուացի սլատանեակ .
 Մերթ ըզլերանց արջնաթոյր
 Դիտելով վախս եւ կոհակ ,
 Մերթ ըզձորոցըն սպարոյր .
 Արտասոււաբեռըն շուրջ դայր
 Հեզիկ հեզիկ բըբացն հիւս
 Ի գեղձկական տաղաւար՝
 Որ ի հովտին երեւիւր .
 Եւ աչքն աղու կապուտակք
 Լըճանային շիթ առ շիթ ,
 Եւ հառաչանք տըխրորակք
 Ելանէին խիտ առ խիտ :

Որպէս տատրակ զաւեր դալարըն բընկան՝
 Չանդարձ փախուտան ողբայր նա զուարթ ման
 կութեան ,
 Յօտար լերինս սահէր սլանդուխտ տարագէմ
 Չինուորութեան առնուլ ըզձեւըս նըսեմ .
 « Եւ էր չազդէ , ասէր , սըրտիս ըզգայուն
 Դարարագէղ լերանց հովտաց սիւս սիրուն .

Գարեւանդից հիմ ծածկին գողք քընաբեր ,
 Եւ տըխրահան աստ ամենայն ինձ պատկեր •
 Ի դառնաշունչ հողմոց՝ լերինըս ճակատ
 Յիր թօթափէ զանկայուն հերս սառնապատ •
 Եւ ի քարուտ բունոց հաւուց կառաչին
 Քստմնասարսուռ հարթուցանէ զիս համբուն •
 Մեռելատիպ անդ տարածեալ լիճ լըռիկ
 Յեղերական շամբից խօշին տղմասիկ :
 Ո՛վ անիծեալ զըժօխըմբեր դու նախանձ
 Որով թունից դարանք կազմի սիրոյն դանձ ,
 Յոյս ի ծնողաց կորդեալ՝ նեցուկ ծերութեան •
 Յօտար երկիր կարգի բերդից պահապան •
 Խօսանանայ դաշտիկն հարանց եւ մարմանդ ,
 Եւ մըշակին հարկ է լալով կալ վտարանդ :
 Ո՛վ անիծեալ գիւտ արուեստից խաղմարար
 Որ ետ կըռել կոփել սուսեր եւ ասպար •
 Եւ դարնայնի ծաղկենըկար ընդ օթոց (գւոց •
 Յարտասուս մարց խառնեաց զարիւն հէք որ •
 Ո՛հ , եւ ես ինքն հարկեալ բաղդի սեւադէմ
 Զաղէտ սըրտիս արձագանդացս աւանդեմ » :

Ո՛վ դուք անբաժ ճայնիս ընկեր՝
 Որ առ հըրճուանս իմ եւ առ վիշա
 Ղօղեալ թաքուն ի քարածեռ
 Կարեկցաբար խօսէիք միշա ,
 Աս դեռս օտար վարիմ նըժդէհ
 Ի սիրելեաց կորդեալ խըմբէն •
 Որոց սիրով սիրաք ի հրդէհ
 Լալով զինէն թէ զձեզ հարցցեն ,

Ո՛վ արձագանգք, խառն ի զեփիւս
 Առէք զիմ ձայնս գողէք նոցին,
 Թէ գնամ լալով բլրէ ի բլուր
 Եւ աչքս ընդ կրօնիկըն յար հային :
 Ընդ առաւօտն եղբայր կըրսեր
 Ըզմայր հարցցէ, ընդէր հարբէն
 Սափորն ի յուս չերեւի դեռ
 Կաթն անուշակ ածել՝ հօտէն .
 Եւ երբ լալով յերեկոյին
 Պար բոլորեալ որբ ընտանիք
 Զփոխինդն ուտեն առ հըրատին,
 Զիս յիշելով եւ կան լրօնէք .
 Դուք արձագանգք խառն ի զեփիւս
 Առեալ զիմ ձայնս գողէք նոցա՝
 Յօտար քաղաք նըստիմ ես հիւր,
 Թաքչին յինէն կողք Տիրուայ :
 Յանչըքանալ բուրաստանիս՝
 Ուր եղեմեան իմ խաղալիէք,
 Ուր արնկէի արդայ ի ախ
 Հովանոցակս ի վարդ յասմիկ,
 Ի ծարաւել առուին փոքու
 Զորոյ ձեռօքս ես հատի խրամ,
 Երբ յիշատակն յարտօսը աղու
 Լացուցանէ զեղբարցս երամ,
 Դուք արձագանգք խառն ի զեփիւս
 Առեալ զիմ ձայնս գողէք նոցին,
 Յաշխարհ օտար ի բերդ արխուր
 Ես կամ պահնակ զէն ի ձեռին :
 Յաւուրս ասնից մանկուէք շինին
 Լըռեաց ասեն, փողն հարբէնայ .

Աջ եւս զայժեամն ի դար լերին
 Խրատուցէ ձայն ոտից նորա
 Աջ եւս լըսի սոյն ի մայրիս ,
 Ընդ երթ նորին ցրնծան թռչունք .
 Աջ եւս սահի լասան ի լըճիս
 Չերժք ի ցանցէն կայտուն ձրկունք .
 Դուք արձագանգք խառն ի զեփիւս
 Առեալ զիմ ձայնս գողէք նոցին .
 Թէ արտասուօք ծովուն ըզճուր
 Յորդեմ ես յոտս անգութ ամբին :

Բարձու լերինս ի սարաւանդ
 Ընդ բորբոսեալ անկոփ վիմօք
 Յըստուերամած մահուն ի բանդ
 Կան խաղաղեալք երկար ամօք
 Նըշխարք հաւուց եւ հայրենի .
 Աջ մատչի սնդ պիղծ գարշապար ,
 Այլ ցողաթուրմն աջօք հայի
 Հեռաստանէ անցորդ մողար .
 Դուք արձագանգք խառն ի զեփիւս
 Առեալ զիմ ձայնս գողէք նըմին ,
 Թէ զուր արտօսր իմ եւ համբոյր
 Խընդրեն ըզհօրս հանգիստ շիրմին :

Հընչէ Եւրոս ցըրտասարսուս
 Չասրաքատակ ըզլուս խըրճթաւ .
 Թափին լերանց վարսք յոքնախուռն ,
 Կարծէ մայրիկըս զիս անձկաւ : . . .
 Ա՛հ , մի մայրիկ , մի կարկառիւր
 Ընդ պատուհան , ձիւն չար տեղայ ,
 Աչքն իւր պտղեալ պըշնուն յերկիր . . .
 Ա՛հ , լըու.թիւն է զհարբենայ :

Գուք արձագանդք խառն ի զեփիւս
 Առեալ զիմ ձայնս գողէք նըմին ,
 Թէ կեանք որդւոյդ կարճին յողք իւր ,
 Պանդուխտ միշտ մօտ է տապանին : . . .

Զայս աւանդեալ արձագանդաց՝ սրատանւոյն՝
 Երթայր եւ զհետ արհանէր աչք խաժագոյն :
 Եւ թըւի զեւ ձայնն յարձագանդս յար ամուր
 Հրնչել վանդիւնս խաղաղականս եւ արխուր :

ՅԱՌԱՋԻՆ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

ԵՒ Ի ՀԱՐՍՋԱՏՄՆ ՈՐ ՈՉ ԵՒՍ ԵՆ

Ո՛րք են աւուրքն այն եւ ո՛րք ամբն առաջին .
 Ո՞ր զժամանակ դարձուցանէր ինձ նախկին ,
 Ըզմանկութեան երբ ծաղկէի վրտակաւ
 Փափուկ ի տիպ համասարամաց գիրդ խոնաւ .
 Ո՛րք այն դարուն տիտց , կենաց առաւօտ ,
 Մինչդեռ եւ լայր եւ խրնդայր սիրտ անկարօտ :
 Եւ դու լուսնակ որ յար հնանաս եւ նորիս
 Արդեօք բաւե՞ս նորեւ ըզթերթ իմ սրտիս .
 Մինչ ի կաղնեաց պատգամախօսն ազդես խանդ
 Թեւաբախել երգել ի մուծ պահու անդ ,
 Եւ ըզժամուկն յերկնէ զըրդեալ մըխիթար
 Սըփուես հեզիկ ի հիւժեալ սիրտ վըշտահար .
 Մենասիրաց մեկնակ զովող , յիշե՞ս զիս
 Մանուկ երբեմն այտիւք վառեալ աղարծիս ,
 Յեց ի շիրիմս , դանկ առ ոտիւք ցեցակեր ,
 Ի ցամաքեալ ճակատն յառեալ անվեհեր՝
 Թէպէտ մահու նըշխար՝ չազդէր ահ ի յիս .
 Մանուկ անմանկ՝ եւ խաղայի մահուամբն խի :
 Զխարդ թեթեւ ի դաշտ սահէր դարչապար
 Եւ ընդ բըլտոց ընդ թամին առնոյր զառ ի վայր ,
 Եւ գէպ հերացըս ծեծէին զուլն եւ զուս ,
 Մինչեւ յարմին նոճւոյ նըստեալ անտըխուրս
 Ըզձօձաւորսն չափիէի զըստուերս շուրջ
 Յերկայնութիւն մամուտգատից վիմայ լուրջ ,

Յորոց ի խաան, ա՛հ, եւ իմ արդ զոյդք արեանց
 նընջեն քուն խոր ը նընջեցեալն յաւիտեանց : . . .
 Ըզարտարեկ լանջօքս ո՞ տայր ինձ քընար՝
 Քաղտագողի մխել ի սրահըն խաւար,
 Ի հինաւուրց մահարձանացն ի սպառուած,
 Ուր լռութեան թաւամուր թեւք ի տարած,
 Գըլուխ ի ծոց նըստել ի խոհս անցելոց,
 Եւ զորորանն իմ թոյլ դիտել՝ զալեաց ծոց .
 Քստմնածածան ուր ծուփք յեռեալք ը աստեղս
 Զանցեալ ամացս ազդեն շըջանս սրբաթեւս,
 Սարսեալ սահին սաղապաճեմ կրտաւիք
 Որպէս երամք օղականք տար աշխարհիկք
 Տարեալ բերեալ բօթ եւ աւետ առ աղինս .
 Ո՛հ, զի՛ նըրբին է անջրբակա ընդ նոսին :
 Իսկ դու լուսնակ յոյր սընարից կաս նոճւոյ,
 Զա՛հ գալկահար հըսկող կենաց անցելոյ .
 Ոյր է արձանս ում պահանջի սրտիս տառ .
 Ա՛հ, համարիւն իմ հարազատ իմ սրտառ
 Ես ըզսիրտ զայս կըռեալ կախեմ ըզվիմէդ,
 Ուղեւորաց եւ սիրելեաց ոտընխէթ :
 Արձանացիր անցորդ մուրար ու անմուրար,
 Աստ հարազատ սրտի նընջէ վաղահար .
 Մահ զիս կանգուն, ըզնա եհար դիտապատ,
 Եւ երկոքեան էաք զոյգ սերտք, արդ զեանրդ .
 Մահածին մայրն երկիր՝ ըզնա գըգուէ ցուրտ,
 Զիս ի հասակ վարէ ու ի կիրս անփախուտ .
 Ես յայնց կըրից խեթկեալ՝ դառնամ զիմ կընի
 Ու անղօր յունել զփախըստեայ տիս մանկունի,
 Բուռն հարկանեմ զհարազատաց տապանէս
 Նոցա հանգիստ եւ ինձ ժըտիմ քաջալերս :

ԱՌ ՄԻԻԹ՝ԱՐՈՒԹԻԻՆ

Խորշակ խարշատող անկեալ խամբէ զսիրտս ող,
 ջոյն •

Վարեալ վրտարեալ եւ ըսպառխո՛ յիմ ծոցոյն •
 Թախիծ , անձկուի , կարօտ , լըքուսն եւ ամօթ՝
 Ի բուն բնութենէս թըւին առնել զիս շրկօթ •

Արտօսըր ներքին յեռանդն արեան սաստկազայր,
 խարշեալ հաշէ զսիրտս իբրեւ սրտառ ինչ ընդ
 վայր •

Խօսելն անօգուտ , լըռել՝ դահիճ է անձին •

Բրժի՛շկ ժամանակ , քանի՞ դանդաղ արդ յանցին :

Մըխիթարութիւն • կեանք դու սըրտից յօրահաս ,
 Մըխիթարութիւն երբ առնես այց եւ յիս դաս •
 Առ վիշա կարգեցար յօճան , փութալ զի՛ յամես •
 Յաւք զիս վարակեն , առ քեզ թըռչել չկարեմ
 ես :

Ոչ եւս հանդուրժեմ , ձայն վերացո , ո՛ւր իցես ,
 Ի տապ տապակի սըրտիս զի՛նչ գիւր մատու
 ցես :

Գուցէ՞ հնար արդեօք քեզ սրտահէլ ինձ յերկրի ,
 Թէ ընկ հառաչէ սիրտս՝ եւ ի նոյն ըսպառի : • • •

Աստուած մըխիթար սըրտի՛ որ տաս կիրս եւ
 կեանս ,

Աստուած , մի թողուր զեզկեւրին յայտքան կըտ
 տանս :

ՆԱԻԱՌԵԿՆ

Նաւն ի բախմանէ վայրենի արեայն խոր-
տակեցաւ . . . Նաւուղիդն հանդէպ նա-
ւին գեգերեալ ողբայ . ձեռն ի ծնօտի
եղեալ՝ արտասուաց գետս իջուցանէ :

ՆԱՐԵԿ

Այսպէս ի սուգ իմ՝ դանդաղ
Ի լռութեանս սնխաղաղ
Նստեալ մղձկիմ՝ անըջունջ
Վայրենամոլ յօգոց շունչ ,
Որ սրահ մ՝ յառաջ ի ծովն
Որորելով յիս գային ,
Զայրացեալ՝ սրահ մի զկրնի
հարին զիս զի կենդանի . . .
Ահա շրինդըն լըսի ,
Ահա գուսարք հիւսիսի .
Ահա ահա լեռանաձեւ
Կոյտք կըլանեն զիմ արեւ ,
Ահա հարին քակեցին
հողմք ու արեք զհեա ձրդեցին ,
Ահա ի խորս իջի ջուրց ,
Յանկարծ ի վէմս մաղապուրծ .
Ես որ ի դոյզըն տախտակ՝
Ահեղ ծովուն նահատակ՝
Ես նաւուղիդս անտեղեակ
Ի յառազաստ եւ ի զեակ ,

Որ ընդ ալիս այս անխորձ
 Զանձն արկի ոչ փոքր է գործ .
 Այն ինչ յածեալ ըստ կամի
 Յանդիւտ կորուստ խրնդայի ,
 Կեանքս ընդ նաւուս վեր է վայր
 Արտասահման յայս է ժայռ՝
 Ընդ ծով աւաղ միջամէջ
 Յեղակարծուց է վայր էջ ,
 Ի գրլսոց սէգ կոհակաց
 Անկեալ գրնխմ սարսափած .
 Զխարդ ըզսիրտս հանդուցից ,
 Ո՞ւմ զիմ արկած սրտամեցից : . . .

Ահա նըշխարք թաղծաղէմ
 'Նըշխարք նաւուս տարաղէմ ,
 Կէսք խորասոյղ հիգոյս պէս
 Ընդ մըկանանց կանաչ գէս
 Հանեալ գրլուի գողգոջուն՝
 Անհետանան եւ է նոյն .
 Եւ հեռագոյն դարձեալ գան
 Յաշխարելի երեւան .
 Եւ կէսք ընկեր առ ընկեր
 Վարեալ գրնան մըշտերեր ,
 Խեղք , առաջք , կող ընդ կողին
 Ի մի հարուած կողկողին :
 Յորժամ եւրոսն այն հընչեաց
 Ետ ճարճատիւն ճոպանաց ,
 Վըկայեաց սիրտ իմ ներքուստ՝
 Թէ ամենայն է կորուստ .
 Ի խաւարէն շանթ խաւար
 Էջ եւ մահուամբ դարձ արար .

Բզմէն խարխախ իմ ամուր
 Բզոյս՝ տարաւ ծովահուր .
 Զխա այսր ընկէց միայնակ
 Չոր մորենուոյ հանդուռակ ,
 Յամաք հողմոց խաղալեակ
 Տարուքերիլ անխնէակ . . .
 Ո՛հ , զե՛նչ լինիմ եղկելիս
 Նաւահորոյս նաւուղիս :
 Ա՛հ , սիրտ իմ , սիրտ իմ հարեալ
 Չար քան ըզնուս է մանրեալ .
 Բեկոր եմ ես ալէկոծ
 Մինչ ի յատակս անդընդոց :
 Ձեզ երանի՛ մընացուածք
 Իմ նաւակիս աւերածք ,
 Որ տակաւին ընդ նոյն ծով
 Նոյնպէս գընայք ծըփալով ,
 Յանյուշ հարեալ զալեասատ
 Ովկիանու գալար դաստ .
 Ի նոյն կոհակս ելեւեջ
 Աներկեւանք յահու մէջ ,
 Անաստղ , անլոյս , անուղիղ
 Անհող հորդէք ըզաւիղ ,
 Մըշտասարսուռք մըշտերերք ,
 Այլ ընկըղմել՝ ոչ երբէք .
 Մինչեւ յեախնն այն կոհակ՝
 Զձեզ արարեալ շրիթակ
 Ի կայս ուրէք հեռաւորս ,
 Յընդաւաղեալ կայջլիք խորս .
 Կամ թէ ոմանք ախրասէր
 Այսպէս ոտիցս առընթեր՝

Արաստուէլի՛ կերպարան ,
 Եւ կենախուղ որորան :
 Ո՛հ ո՛հ , այդ ո՛րքան ալիք
 Որ ուս ընդ ուս ծրփծրփիք ,
 Որ լեռնանայք եւ ցածնուք ,
 Որ գայք գընայք խուսափուկք ,
 Բերանարաց որ անյադ
 Վ իշապուսոյց ընթանայք ,
 Ի թուխ կանաչ ըսպիտակ
 Մաղձ ըղգայռէք դառնորակ :
 Ո՛ւմ դուք դուռղք ուսուցիկք
 Ի գիմի այգուէս հարջիք •
 Ալի դալեաւ ի թաւալ
 Իբրեւ պարիսպ հորովեալ՝
 Մերթ ի կործան մերթ կանգուն
 Յայս իմ՝ գիմեալ սար համբուն •
 Վ իմիս ստնանել , եւ ո՛ տայր ,
 Այլ ճըգնեօջիք վայրասպար •
 Իսկ եթէ զիս խընգրիցէք ,
 Որս ձեր անջան է , առէք •
 Առէք տարայք ի ձեր խորս
 Ի ձեր յորձանս ահաւորս ,
 Ուր կան աշխարհք անյարիբ
 Յաւիտենից ի թըմբիբ ,
 Ուր աւերակք մահացուաց
 Անհիմն արկեալ յալս ալեաց •
 Ուր նընջէ զքուն իւր անյոյս
 Վ աճառական ոսկեյոյղ •
 Ուր նընջէ հայր՝ որ յանգէաս
 Եթող զորդիան որբս եւ հէգս •

Ուր սիրելւոյն կայ նըշխար ,
 Ոյր մըտերիմն՝ իջեալ դայր
 Յափուենս ըզծովն հարցանէր
 Փարեղի գիրկս ընծայէր . . .
 Այլ դուք հարեալ եւ փշփշ
 Անփոյթք զինէն՝ կորընչիք : . . .
 Դուք որ ըզհետ նոցուն դայք
 Գէթ դուք առեալ զիս տարայք .
 Երթայց եւ ես նընջեցից
 Ուր իմ ամէն նընջէ ինչ .
 Ուր եթող յոյս իմ զարեւ
 Իբր ըզգօս ծառ՝ սին տերեւ .
 Թողեալ զիս յինքըն միայն
 Քան զոր տեղի չիք ունայն .
 Երթայց առ իմ ծիրանի
 Առագաստիկս ընտանի ,
 Եւ կոչկոճեալ իմ մարմնոյս
 Եզից պատաներս սիրունս՝
 Երթայց տեսից զոսկեման
 Ակընկալեացրս ճուպան .
 Երթայց գրտից զիմ ուղղեակ
 Որ չըրջեաց զբաղդրս յահեակ .
 Երթայց միայն ընդ միայն
 Յովկիանու յորովայն .
 Ամէն կոհակք մէտ ի մէտ
 Հարցեն լալօնս ինձ յաւէտ . . .
 Այ ծով , այ խորք , այ ալիք ,
 Զորս ձեր առէք աւաղիկ »

Եւ յառապար կարկառէն
 Իբրու զկուտակ մ' ի ծովէն
 Աս այլ կուտակ գահավէժ
 Ո՛հ, վանէր զանձն իւր յաւէժ
 Յանդընդախորն ի յորձանս,
 Յորմէ չգարձաւ որ ի կեանս.
 Բողոր մարմինն ի ժայռէն
 Յանկրրկնէլի յայն բոպէն
 Ընդ աւազ, օդ եւ ընդ ջուր
 Բացածըգեալ վայր բերիւր : . . .

Այլ ո՛վ անկարծ թարուն բաղդ.
 Բուռն ըզմիջացն աջ անցաղթ
 Հարեալ հիգոյն՝ եւ ի վեր
 Չարաժանի ջուրցն եբեր,
 Թեթեւակի զարկուցեալ
 Ընդ առապարն՝ ուր ողբայր.
 Ոչ ինչ ետես, այլ լըւաւ.
 « Ո՛վ կորանաց յուսաղբաւ.
 Ըզհեա նաւուդ ի կորուստ
 Տան զանձն յալեաց որկորուստ . . .
 Որ հար ըզքեզ՝ ո՛չ գիտէ
 Նոր կազդուրել յայամ հեռէ,
 Վամ եւ ո՛չ այն իցէ շատ
 Ըզգաստացեալ կալ քեզ աստ
 Ընդ հովանեաւ սանձողին
 Ըզծուփ հողմոց եւ ծովին » :
 Ոչ կրրկնեաց ձայնն անձանօթ.
 Նոր ծագեցաւ առաւօտ.
 Խաղաղական են ամուսնք,
 Ալիփոլնի կազմին բոյնք :

Ինքն ըզնաւուն նըշխարիկ
 Առեալ փոխէ ի խըղիկ •
 Յերկրէ կըրկին մենաւոր ,
 Դէմ այն ծովուն ահաւոր՝
 Որ յար աչացն առաջի
 Դեռ ամիք յըրարս չըրջի ,
 Փոխան ալեաց՝ ի հող արդ .
 Յեց ի վարսեալն ողնափայտ
 Արձանացեալ լուռ նըստի
 Հէզ նաւուղիդն ի դիտի ,
 Կըկտտեւով շուրջ անաս
 Զալիս՝ որ գան պահ ընդ պահ ,
 Բաղխին փշին առ ոտիւք
 Խորհրդաւոր շառաչիւք •
 Եւ թէ երբէք ի բացուտ
 Հատուկրտիրք ի փախուտ
 Միային աչացն՝ յիւր նաւէն
 Կամ պատասիկ մի ծըւէն ,
 Տակաւին ձեռնն զաչօք
 Լայ զգառնութիւն իւր ամիք ,
 Ընդ արտասուացն իւր ընդ յեռս
 Վերադիտեալ ընդ եթերս :

Ի ՍՈՄՆԱՅԻՆ

Գլուխ իմ, գլուխ իմ:

Ի կի՛ծ կենցաղոյս գրլխահարեալ տօթակէզ
Տագնապ ի տագնապըս ինձ նիւթէ սիրտ ցաւա-
գին .

Գլուխ իմ գլուխ իմ, ո՛հ, խորհրդակոծ խաւովա-
գէզ՝

Ոչ եւս ունի ժոյժ անձին :

Իսկ արդ ո՛ւր իցէ գրրկամատոյց ինձ մայրիկ ,

Առ որ՝ տեսեալ հօր զվտանդեալս յարտիս այս
արխուր՝

Ուր յողք զծայրախուզըն շարուրեմ՝ զորայիկ՝

Ասէր՝ Տարայք զգա՛ս մայր իւր :

Գո՛յշ, թէ եւ իմ գոյր մայր աղէխարշ եւ գորով՝

Որոյ ժողովեալ ի գիրկ զաղիսըն գալար

Գընէր թաւալէր զգէմսըն փութով եւ սիրով

Յորդեկիս գէմս անդալար :

Ո՛հ, անդ՝ թ՛ եւ անժամ՝ յելլս կենաց լեալ ժաման՝

Սակայն ի գրրկաց մէջ գրդուելեաց մայրենեաց՝

Ըզգառնըն տայի քաղցրութե՛ք շունչ անջատման

Առ որ ըզուռնչն իմ երկնեաց :

Աչք իմ նուաղէին յաչս հայելով խանդակաթ ,

Եւ ձեռքրս լուծեալք ի ջերաջերմ մէջ մատանց

Շուրթնրս սաւնորակ ի մէջ շրթմանց վարդա-

հատ

Գործէր զյետին զանդարձն անց :

Ի ծոցս անդ կենաց խնոց տայի ես զիմ կեանս ,
 Եւ մօր արտասուս կաթէր ջերմիկ ի ցուրտ
 քունս ,

Կաթէր եւ խառնէր ի սրազ քրտանցրս ծորանս
 Եւ փոխէր զմահ իմ ի քուն :

Զխորդ ցանկալի էր ինձ նրնջել ըզքունն այն ,

Քանի տենչալի անշունչանալ ի շունչ մօր ,

Քան զուրիկ ի նմանէն շնչել ըզսիւզս ամենայն

Ի ձորս ու ի սարս խրնկաւոր :

Գլուխ իմ գլուխ իմ , ո՛վ մայր , ծանրացաւ ու ան-
 կանի .

Փութա՛ւ ու մայր , եկ , զի ահա 'նձին ջունիմ
 Ժոյժ .

Ի խէթ խորհրդոց 'նուաղեալ որդեակ քո գրնի .

Ե՛կ բարձ ի ծոց զիս անոյշ :

Գլուխ իմ ծանրացաւ , եւ սիրս անկաւ , մեռայ
 ես , . . .

Մեռաւ մայր որդեակ քո . ես մեռայ եւ հանդ-
 չիմ . . .

Ո՛վ մահ գեղեցիկ ի մօր զբրկաց աստարէս ,

Ո՛վ հեշտալիդ ինձ շիրիմ : —

Իսկ այդ ո՛վ , ո՛վ է երագեալց ի մեր կոյս ,

Խոհք ըզգրլսով , ցուս ծերութեանն առ երի

Մեծաքայլէ , խոստանալով 'նորս ինչ յոյս : . . .

Չրկամիմ մայր , չրկամիմ ես զտեսողն այն

Իարձուցանել զարտաշնչեալ զիմ հողի

Ի տաղաւար միարմնոյս արխեղծ եւ ունայն :

Ո՛հ , մի մայր իմ , մի լըսել արդ զըմայ , (եւ փակ ,

Փութա՛ւ , զգրունս արկ ընդդէմ , պընդեա՛ զնիդ

Ըզգուշացիր առ կենսագործդ այդ հրմայ .
 Մի զիս թողուր ի քոց գըրկաց հանգըստիդ .
 Այլ ի բարձուէ պատըշգամիդ ըզձայնդ արկ
 Եւ հեռացո՛ զտեսանողդ այդ շընչառիթ :

Ասո՛ « Ինձ չէս պիտոյ արդ ո՛վ մարդարէ ,
 Ի բայց կաց , մի զարթուցանես զօրդեակս իմ .
 Դարձիր տեսողդ , դարձիր զ՛ ի քուն սա քաղցր է
 Հիմ՛ այդքան փոյլթ քեզ . բարուք կեայ իմ աղիս .
 Այո մեռեալ սա , խոստովան արդ լինիմ ,
 Այլ քաղցր է մահս , չկամի զարթնուլ իմ որդիս :
 Երջանիկ սա յժմ է ի մահուս քան ի կեանս ,
 Ի վիշտ էր , արդ յանդոյր . ի ցաւս , արդ ի սէր :
 Ո՛հ թէ քանի՛ քաղցր է սմա դիւր հանգըստեանս .
 Քանի՛ չըքնաղ մեռեալս քան մինչ կենդանի . . .
 Տես մարդարէ , երբ զայս քո շնորհս տեսեալ էր
 Զոր տեսանեսդ այժմիկ յանշունչս դիմի .

Ե՛րբ նայեցան աչիւնքն այսքան աղուականս
 Իբր ի ներքուս թերաքամեալ յունիցն արդ
 Կիսահայեացք քաղէն զողիս իմ եւ կեանս .
 Իցէ՞ տեսեալ քան զայտքըս զայս կարմրորակ
 Եւ յենգադդի զսիրահրոջակըն զայն վարդ
 Յոր Բերսաբէ Սողովմոնի հիւսէր թագ :

Ես ըզվարդս այս մահու փթըթեալ ի դէմս աստ ,
 Ըզմեռուակ մանոյշ բրբացս բացխըրիկի
 Եւ ըզուշանըս ծըղեբէկ յանպատրաստ ,
 Ես չըփոխեմ զսոսա՝ նդ ծաղկունս եւ գոհար .
 Ես չըփոխեմ ըզնընջեցեալս այս յիմ՛ գիրկ
 Ընդ նահատակս եւ ընդ հրսկայս դեղապար :
 Նընջել կամեաց որդեակս իմ այս եւ նընջէ
 Նընջեաց յանդորր եւ չախորժէ սա զարթնուլ .

Եւ ինձ սրմա հակառակել կամք ոչ է •
 Թող նընջիցէ արդ ի վտանգաց կենցաղոյս
 Ձհանդիսա ցաւոց սրբալին գըլխոյն աաա աա
 նուէ
 Մինչեւ յանանցըն զարթիցէ կենաց լոյս » :

Ա՛հ, գլուխ իմ, ա՛հ, սիրտ իմ, ցերք հեծես, արդ
 լուռ լեր,

Գուցէ լուեալ մօր գիւրազգածի կաթողին
 Եւ սիրտ խոց առեալ հառաչիցէ կարեւլէր
 Վերայ գըրկաց զաւակին :

Այլ ո՛ր եւ իմ մայր՝ որ ժողովէր զիս ի ծոց •

Ո՛ր որ ժողովէր զհասկըլեալ շունչս ահ ընդ
 ահ,

Որ մասն արկանէր ի գլուխ ու ի սիրտ յարակոծ
 Եւ խաղաղէր գէթ մի սահ :

Ո՛ր որ գայր ի դատ ընդ կոծեալ գլուխ եւ ընդ
 խոհս,

Ո՛ր որ լըսելի զխաղաղութեան ձայնն առնէր •

Ո՛ր իմ ծընող, ո՛ր գայեակ՝ որ զայսքան ան
 դոհս

Ի մի ժրմիտ լուծանէր :

Աստուած իմ, հասն առ իս զբարբառդ հայրա
 կան,

Հրաման տուր տանել զորդիդ ի դիրկս յուսոյն
 մօր

Բարձցեն արբանեակք գըլթոյ տարցեն առ ծոցի
 այն,

Եւ գըացէ սիրտ զիւր անգորր •

Գրացէ սիրա զանգորդ . մեզին խորհուրդքն ինք
նատանջ .

Մեռայց ես ցաւոց , հանդեայց ի յոյս եւ ի սէր .

Ապա տեսանողն հոգեկորոզ հիասքանչ

Յարուսցէ զես ի քեզ Տէր :

Ս.Ն.ԶԱՏՈՒՄՆ

Ի ՆԱԻԱԶՈՒ ՍԻՐԵԼԵԱՅ

Ի զուր . . . եւ անգամ նըրբինք զգացմանց .
 Զգացմունք սրբաի , ս՛հ , եւ դուք ի զուր .
 Զամենայնիւ հարկ լուրջ արար զանց ,
 Հարկն այն ժանա արխուր :

Ծով դեռ անալիք , ալիք դեռ մերձ ,
 Նաւակն հուպ ի նաւն , աչք յիրար դեռ
 Զանջառ սիրելեաց զնրնեն պատկերս .

Այլ հարկն անջրբաւեա : . . .

Ահա ել անխառով ու անգուժ յոգի
 Եկաց ի դիտակսրն պաղպաջուն .
 Ազգէ մասնացի , փողէ սրընգի
 Անփոյժ սլեա նաւուն :

Ահա ի կայմէն էջ դրօշն ի վայր ,
 Դրօշն այն սեաւ , եւ յոյս սարսեաց ըզսիրա .
 Հընչեաց փողն , եւ դող զհամայն էառ .

Միայն հարկն անխլիրա :

Ահա երկաթի թեւք շարժեցան .
 Անիւն երկաթի՝ զոր վարէ հարկ
 Քան սեաւն այն մըրուր որ ընդ ծըխան ,
 Քան թ՝ ալիքրն բարկ .

Ահա նիւրն դիրկ ընդ խառն ի ծով ,
 Ու ահա ելանեն ու իջանեն դասաք .
 Խայտայ փրփուր զինչ ձի նդ հեծելով .
 Սահիլ առնուն լասաք .

Նաւըն շարժի , նա՛ւն առնու գրնալ . . .
 Ա՛հ , ա՛յ , կացէք , ո՛ւր տանիք , յո՞ գնայք .
 Անդ են սիրելիք բազուկ ձրդեալ՝
 Գոչեն , ո՞ղ մընայք : . . .

Մընա՛լ . զի՛ մընալ՝ երբ երթայք դուք ,
 Եւ ո՛ւմ եւ զիա՛րդ թէ անջատիմք .
 Լըսէք մեզ արդեօք , ըզգայք զանձուկ՝
 Ա՛լ մեր մըտերիմք :

Մեկնի նաւն , երթայ եւ հեռանայ
 Լընուն աչք ծըխով՝ զոր արձակէն ,
 Եւ ծով ի միջի մեր լայնանայ ,
 Հետք ըզհեա ծածկեն . . .

Ա՛ւր են , յո՞ գնացին . ո՛ւր սիրելիք .
 Հազիւ նըշմարին ողունք նաւուդ .
 Միայն ծուխըն սեաւ՝ նի՛շ սրտալիք
 Գնարոյդ փոյթ ընդ փոյթ :

Երթայք ուրեմն , ա՛հ , երթայք ողջամբ
 Թէ կալ ու արգելուլ չիք մեզ հընար ,
 Եւ թող ծածկէ ծուխս ըզսըրախցս ամբ ,
 Իցի՛ւ թ՛ անդադար : . . .

Ծածկի եւ ծուխն յօդ . զուգին ալիք .
 Համայն հեռանայ եւ հանդարաի .
 Ա՛հ , անջատ կայցեն լոկ սիրելիք . . .
 Զի՛ բուռն է սըրաի :

ԳԱՐՉ ՅԱՐԵՒԵԼՍ

ԱՆՋԱՏՄԱՄԲ Ի ՍԻՐԵԼԵԱՅ

Ահա ծագեաց լոյսն արեւելից , դարձին լոյս .
Գառնան աչք ի նոյն , սիրտք հայրենեացս անդր ի
կոյս՝

Ի կէան ըղձիցս եւ ի յոյս :

Օ՛ն անդր յարեւելս , ընկերակիցքդ յարեւելս .
Քանի՞ զուարթ այգուն նըրբին երանդք յեւելս
Անտուտ յոգւոյս խառնին թելս :

Ահա մբարձեալ հողմն յարեւմտից լինու զգրօշ
Ի ծագ անդրու վար նաւուն՝ խընդից ապարօշ ,
Դէմ յարեւելս՝ վայր ակտրժ . . .

Ողջամբ կացլիր եղր արեւմտից բազմաշնորհ ,
Ազատ արգելան սրանդրխառնութեանս բարէօր
Եւ հայրենիք մեղ լեալ նոր .

Ի բունն արդ գառնամբ եւ զարտասուս հրաժեշտի
Բարձեալ յաչս անջինջ՝ խառնել յարտօսըր խընդի
Ի սիրելեաց մեր գընդի .

Յորոց ուժացեալ առ սէր բանին եւ ի գիւտ
Յօտար քո ափունս ժուժեալ տարաք անըստգիւտ
Ամս երկար յերկն եւ ի փոյլթ .

Որով վառեալ միտք , սիրտք եռանդուն , հողի
զուարթ՝

Առ հին հարազատս առ կենակիցս երթան արդ .
Յերկիր՝ որ տայ զկաթն եւ վարդ :

Ահա շաւիղն հին՝ որ յար հասեալ չունի ծիր •
 Գարձիր ընդ նոյն հետս յոր բերեր, նաև մեր հրակիր
 Ուստի բարձեր՝ զմեզ անդ դիր :
 Խառնեա՛ զանջդ յալիս, հերձ սրատառեա երթ յա-
 ռաջ •
 Ըզգօն միտս առ սէր տանիս, նաև, երթ սրարառաջ,
 Յարդ, սէր ելցեն ընդ առաջ : • •
 Այլ սէր, բա՛րէ, ո՛ւր արդ տեսանեմ զքեզ ի սուդ,
 Յափու՛նս զոր թողումք կաս ձեռն ի դուրս ողոր-
 մուկ •
 Եւ զհետ կաթեա արտասուք •
 Դու զնաւս եւ ըզսիրտս առ սիրելիսն հին վարես,
 Եւ դու յորոց արդ զատչիմք՝ այդրէն զհետ բերես :
 Երկուս բացեալ ասպարէս :
 Ահա հեռանամք • նուաղին ափունք զոր թողումք,
 Եւ աչք յառին յետս յարեւմուտս անդրր տրտումք,
 Յանկամս կամաւ ըզկայ՝ ռնումք •
 Յերկուց մէջ ափանց բռնաբարիմք յերկու սէր •
 Երթալն է ախորժ, այլ հրաժարել՝ սաստկավէր,
 Կալն՝ անհրնար ու աննըւէր :
 Եւ նաւս յառաջէ՛ • քաջալերեաց սէր անձուկ
 Պանդուխտքս՝ ըզքեզ մի սանդուխտ յափու՛նս այդ
 թողցուք •
 Կարկան ըզձեռն, եկ բարձցուք :
 Զհանձար ժողովեալ՝ մի՛ մոռացուք ըզսէր անդ •
 Ո՛հ, մի սիրելիք նրժդէհութեանս սարաւանդ,
 Մի կարծիցիմք մէք աստ անդ •
 Յանքոյթն եդեալ վայր սրտի զգորով ձեր եւ յուշ
 Արդոյ քան զամէն յարգոյս՝ տանիմք զայն ըզգուշ
 Ի հայրենիս մեր անուշ •

Ո՛վ քաղցր յիշատակ նրժդեհակից սիրելեաց .
 Քեւ սիրտք մեր առեալ թունդ՝ զնոյն տացեն սի-
 րելեաց՝

Առ որս երթամքն անձկայրեաց :

Քեւ սիրտք մեր հալեալք երազադոյնս խառնեսցին
 Ի սիրտս՝ որ յելիցն արեւու մեզ արդ հալին .

Ո՛վ խառնութիւն երրեկին .

Այո՛ նդ մեզ տարցուք ըզքեզ սէր՝ յով եւ եր-
 թամք ,

Եւ քեւ եւ նոքօք մերս յայսմհետէ բուծցին ամք .
 Մի մոռասցին բարեկամք .

Ե՛կ սէր , եկ ընդ մեզ Ի հայրենիս մեր քաղցրիկ ,
 Ի ծոցըս ծնողաց , եկ , Ի գիրկ քեռ , յեղբօր գիրկ ,

Ուր եւ ուրեք երթան սիրտք : —

Օ՛ն անդր յարեւելս արդ վարեսցուք համարձակ ,
 Ահա բլուրք դալարք ընդ նիւս ալեաց դան երազք .

Ահա երկրին մեր ցամաք :

Սուրա՛ սլացիր հիմ՝ յամես հրաշունչ անդրուվար .
 Փախչին բլուրք եւ սարք , միայն ախուհք գեղա-
 պար ,

Ու ամբօխ շարժի վեր Ի վայր .

Կարմիր եւ սպիտակ ահա թաշկէնք Ի ծածան ,
 Եւ ձեռք եւ բազուկք եւ գլուխք շարժեալք սի-
 րանշան ,

Եւ սիրելեաց եհաս ձայն : . . .

Հայր մեր . . . ահա մեր հայր , ահա մեր քաղցր
 եղբարք .

Ծաղկեալ են գլուխք հարց , այլ քանի՛ հուր յաչ-
 սրն բարկ ,

Ո՛վ մեր կենացըս սրտածառք :

Ահա որդիդ, հայր, զոր խնդրես՝ կայ ի քո դերկ,
 Եկայք իմ եղբարք համբուրեսցուք զուգակիրք,

Թող արբեսցին կարօտ սիրաք :

Այլ ճն փութասցուք ի սուն, ոչ եւս ժուժէ մայր
 Անգուլ կարկառեալ ընդ սրտը շգամբն իւր ի վայր

Գրեւով զվայրկեանս քան ըզգար : . . .

Մայր իմ, անձկալիդ մայր, տես զորդեակ քո սի-
 րուն . —

Որդեակ իմ, առ մայր քո եկ որդեակ սիրասուն . .

Ո՛վ անթարգման ըզմայրումն : . . .

ԱՌ ՆԱԻՆ

ՈՐ ԶՍԻՐԵԼԻՍ ՏԱՐԱԻ

Զի՛նչ տեսանեմ, դո՛ւ այն ես նաւ ապառուս
 Որ զսիրելիան իմ կորզեցեր յանկարծում,
 Եւ վայրապար տարուքերեալ ընդ ալիս
 Խաղ արարեր զայնքան անձուկս ու՛ղձալիս •
 Քանի՛ք ընդ քեզ տատանեցան սիրտք ի ծովի
 Մտք եւ հեռիք՝ այլ անժամանք եւ անհուս • • •
 Արդ ի ծովեզրդ տակ առեալ յանդորրու
 Կաս անրզգայ եւ գրգռես վերս յիս ազգու •
 Ե՛րթ ի բաց, երթ թաքիր ի ծիրքս ծովուն
 Զի մի անէծքս հարցեն ըզքեզ խաղ նորուն •
 Եւ հողմ ցամանքս հետամուտ հալածիչ
 Խարակս եւ խուժ արասցէ քեզ ժանտ գահիճ • •
 Այլ մի • կայցես մնասցես նազէլ ընդ ալիս
 Քանզի զիմոյ սրբաի տարար սիրելիս •
 Բայց երթ թաքիր յաչացս եւ թող ըզվրնէժ,
 Զի մի յանկարծ զայրոյթ խեթկեալ լուծցէ
 զվրէժ :

ՄՈՌԱՍՅԻՍ ԶՎԻՇՏԱ ՔՈ

ՈՐՊԷՍ ԶԱՒՍ ԱՆՑԵԱԼՍ

- Ս, յս ամենայն աղէտք եւ վիշտք սրտահար
 ժամանակի ժահր եւ մըթին եւ մըթար
 Անժամանակն էից՝ սիրտ՝ դու աղըն կալ :
 Փոխոխի եւ անցանէ ամենայն .
- Անց երիկեանն , անցցէ եւ հուս վաղորդայն ,
 Եւ ժամանակ ինքնին անցցէ լրուելայն :
- Ս, յլ գան մերձին օրէնք որ զհինս եղծանեն
 Եւ ահա ժամք որ զառաջինսն մերժեն ,
 Եւ պահ որ զսիրտ վրկէ ի բնաւ ի չարէն :
- Վիշտք եւ վրտանդք մաժեալք ըզբեւ անբաժին ,
 Եկեսցէ օր՝ եւ ի սրտէդ վերասցին ,
 Եւ մուսացիս որպէս զալիս որք անցին .
- Եկեսցէ օր , եկեսցէ պահ՝ եւ ընդ հուս
 Որ զամենայն հարթեալ հարցէ սրտիդ ծուփ
 Մուսացութեամբ մաժուսցէ զվերս սրբաշուփ :
- Անցցեն եւ այդք , անցցեն եւ այլ վիշտք ըստ քէն
 Որպէս ալք վարեալք ի խօլ մըրըրիէն ,
 Եւ խաղայցէ հեղանաւեալ սիրտ անդրէն :
- Ո՛հ , եկեսցէ հասցէ անշուշտն ամանակ
 Յորում անցեալ ընդ սիրտս իցէ բնաւ կոհակ
 Եւ յամենայն տաղնապոյ կրից անվարակ .
- Ո՛չ եւս մըրըրիկք , ոչ եւս կասկած , ահ եւ յոյս ,
 Եւ մուսացին ամենայն ուխք խռովայոյզ
 Որ բախեցան եւ կըռուեցան ընդ հողւոյս .

Անցեալ գնացեն որպէս ալիք որ գնացին
 Ամենայն ծուփք մինչեւ խապառ ջրնջեացին ,
 Եւ սիրտ՝ միայն գիտասցէ զհեշտն եւ բարին :
 Անցցեն եւ դարբ հոլովակոյտք քան զալիս
 Եւ դիշատակս չաճցեն ի յուշ տիրալիս .
 Անդորր եւ սէր կացցէ միայն ի սրբախ : :

ՄԱՀՈՒ ՄՐՄՈՒՆԶՔ



ՄԱՀՈՒ ՄՐՄՈՒՆՁՔ

ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՀՈՒ ԵՒ ՄԵՌԵԼՈՅ

Զի քեզ՝ սիրտ տառապեալ, զի այդ սարսուռ,
Հայեացք եւ խորշմունք ակամայք, —
Ոչ է քրնար ոյր շիցէ լար անարխուր,
Սուրբ են մեռելոց խակ հըմայք:
Արի, անցցուք ընդ մահացու կայս կենաց,
Ընդ աղմբկայոյցն աղաղակ,
Սեւապօղեալք իջցուք ի ժամս ըստուերաց
Ի լայնածաւալն աղարակ,
Ուր մերձ առ մերձ հողապատեան ընդ ձորձովք
Որդի առ հօր ցուրտ անյարիր
Ազամածընաց հարըստութեան կան ժողովք
Յաւիտենական ի թըմբիր:
Անդ ընդ շաւիղ՝ յոր փախչի լոյսն յարեւմուսս՝
Գիշերահանաւ սաղապմամբ
Խաղայ ոգի խաղաղաւէտ ի յերկնուսս
Թըխաղոյն զիւրեաւ արկեալ ամբ:

- Ի հուսկ սահման յիշատակաց մարդկային
 Ու ի մոռացութեան նախկին կայս ,
 Յարտասոււայեղց մըթնականաչ մարմանդին
 Արկանէ զգահոյս քաջասեաւս .
- Ի քառակողմն ի հաւատոց բարձր յամուր
 Զանձերանալի դրօշն յուսոյ
 Թուուցեալ ի վեր՝ վառէ առ նոյն ի շունչ իւր
 Աղօտաճաճանչ ջահ սիրոյ .
- Առ խարրօխին ինքն ակրնկոր ի մեղմ՝ լոյս՝
 Որ ըզլրութեամբն հեղանի՝
 Զմահու գերեալսն խաղաղէ յարտասուս
 Ծայրիւ խաչանիչ մականի ,
- Ըզձիւնաթոյր սրփոեալ թեւոցն հովանիս
 Զեռուցանել զցուրտ զայն արգանդ՝
 Յոր ազգ մարդկան ըստ մէն քթըթեւ վայրկենիս
 Երթան յանտրիտուր ի յաւանդ .
- Որպէս անպէտք եւ հողմավար ունդք յարդի
 Կամ սաղարթ տընկոց տեռաղերծ
 Անհակառակ թողեալ յանյուշ ի հովախ ,
 Զոր ոչ եւս թանայ ցող աստեղց :
- Զխարդ նա՝ զձայ յանմահութեան իւր ի շունչ
 Յարուցանել զգուճոյն անկենդան .
- Այլ յերկնից բաղդ ակրնկառոյց անշրշունջ՝
 Լինի՝ լալիս լոկ ապատտան :
- Կըթութիւն՝ զուր յերկնից առ վէմն իջանէ
 Ընդ աղէտս որդեացն աղեկէզ ,
 Փափկիկ մատամբն ոչ ըզվըճիւն եղծանէ
 Ի ոչ զպարտեացն հոսել զօրէ գէզ :
- Բիրք մըշտալոյսք , արտեւանուճք լուսաբակք
 Որ զանմահութիւն յար քնընեն ,

Զաչս ի մըրըրալից յածել ի դաշտ մեռունակ
 Եւ ցողըս քամել՝ ոչ գիտեն .
 Եւ թէ ցողեն՝ չիք քաղցրունակ դառնութիւնն
 Ընկերաց վըշտին զուգակիր .
 Ըղմահացու լալ՝ գիտէ լոկ մահացուն՝
 Այր կէս յերկինս , կէսն է յերկիր .
 Նա գիտէ զոյս , զահ , զանծանօթս յանմահից ,
 Զտաղաուկ ծանրաբեռն յարկի .
 Ար երազէ զուրախութիւն եւ թախիծ
 Յեղափոխութեամբք վիճակի .
 Ար ողբայ զանձն առ հողացեալ ընկերուն ,
 Եւ մորմոքի զվէրս օտարին .
 Ար գիտութեամբ մահու լընու կենդանեան
 Զունայնութիւն խոր տապանին .
 Ար գիտէ զճահ հանուրց կենաց զիւրաշէջ ,
 Երեկ նոցայն , իմն առ վաղիւ .
 Ար այն գիշեր՝ որ ոչ անկեալ լար ընդ մէջ
 Զատուցէ զերկուց կենաց տիւ :
 Մի է եւեթ կենաց բոպէ , ժամ ճնընդեան .
 Եւ մահ գընայ նախ եւ յառաջ ,
 Ի մօրն իսկ խինձ ի տարրանոց բընութեան
 Զեռնամուխ լինի մահու աջ .
 Չեւ ըզկաթին քաղցրութիւն , չեւ զօգ ձրգեալ
 Չեւ արեամբ ուղղեալ զերակունս՝
 Ըզթոյն մահու բերեմք ի մեզ ամբարեալ .
 Քան ըզոյս կանխէ մութ յաչկունս :
 Թեթեւահիւթ ոգեաց անօթք զիւրաբեկք
 Յուղեալք ի բաղգէն յեղյեղուկ
 Աչ գըտանեմք ըզցանկալի գիւրն ուրեք՝
 Թէ ոչ խորասակեալք եւ անկցուք :

- Այլ հակառակ գրգիռ բնութեան եւ հոգւոյն
 Այլափոխէ զգէմըս մահու .
- Աչք ի ծիծաղ, ճակատ անկոփնձ, գէմք աժգոյն
 Դիմեմք՝ եւ սարտնումք ի գնացու .
- Իսկ ինքն անբաժ գիտակցութեան անձին պէս՝
 Թէ փախչիմք՝ հասեալ գայ խէթի ,
 Թէ զկայ առնումք եւ թէ կոչեմք ինչ առ մեզ՝
 Յուշիկս ընթանայ եւ ժրպտի .
- Անմահութե՛ն խնդրակ.ք՝ ընդ մահ փորձեմք մուս .
 Պակաս իսկ գրէաք ըզհրճուանա՝
 Գաղտագողի թէ ոչ մահուն ի հեռուսս
 Աղօս ինչ շողայր ըստուերած :
- Ծակ է սիրտ , ոչ լըցցի լըրիւ աշխարհաւ
 Թէ եւ տարածի տիպ ծովու ,
 Ի յղլփութեան դեռ աւելեաց ցանկայ նձկաւ ,
 Բաւականանայ լոկ մահու : —
- Ա՛հ . Ժամ է , Ժամ՝ յորում փառք , շնորհք , տուրք
 Հանգուցանել զանձն ոչ բաւեն . (բաղդի
 Յորժամ նըստեալ սիրտ իբր յերկիր անջըրդի
 Զուարթագէմ ինչ ոչ տեսանէն .
- Ժամ է՝ յոր բիւրք զարմանալեաց աշխարհի
 Մատեան մի թըւին հնակարկատ ,
 Եւ բնութիւն՝ ծով ըսքանչեւեաց առ երի՝
 Ունայն իմն եւ լուս մագաղաթ .
- Ժամ՝ յորում ոչ հեշտ զօրէ շունչ խընդութեան
 Պարզել ըզկընձիուն անպատճառ ,
 Ու ոչ մըտերմին ըսփոփական ազգէ ձայն
 Յանաշխարհիկ սիրտ խուլ յամառ .
- Ժամ՝ յորժամ ոչ ինչ նըշմարի՝ բաց յանձնէ .
 Եւ անձն՝ իբրեւ սիւն մ՝ յաւերակ

Ի վերայ բիւր յիշատակացն արկանէ
 Զիւր եւեթ ըստուեր տխրորակ .
 Ճամ՝ յոր հանգոյն յետին վանգից քընարին
 Կամ ողբերգական բերանոյ
 Որ մահագոյժ լուծեամբ առ սիրտ մըտերմին
 Ազգողագոյն տայ զվերս հագւոյ ,
 Յանմըխիթարն յայն յանհանգիտան այն սրահու
 Իբրեւ յաշխարհէ հեռաստան
 Ճամանեալ գայ 'նդոստուցիչ ձայնըն մահու ,
 Եւ խոնարհի սիրտ ի տասան : . . .
 Ո՞ր մահացուի յայս խորիմաստ լուր անուան
 Սիրտ անկարեկիր ժուժկալեաց ,
 Եւ ո՞չ գաղտնի հեկեկ դրդեալ ընդ բերան
 Ըզխոր դառնութիւնս առակեաց .
 Զո՞ յեղծական կենցաղումս՝ մահ առ շընորհս
 Կացոյց ի վերացն ապահարկ .
 Ո՞ր ահանջ այնքան խուլ , ո՞ր միտք ի ցընորս՝
 Որ չըզգաց զահեղ ժամուն զարկ : . . .
 Ճամն այն . . . հընչեաց , եւ սոսափիւնս այս ձայնի
 Սըփուեալ ընդ թեւս գիշերայնոց արհաւրաց՝
 Թանգուղելով հրաւիրէ զսիրտ յարթմընի
 Անդ՝ ուր քնարանքն յաւխտենից հողածնաց :
 Ո՞վ կապեացէ զիս ընդ մեկնակ լուծութեամբ
 Ըստուերածօժ խաչին ի դաշտն անկենդան .
 Կամ ո՞ բացցէ զհընակարկատ ցեցաջամբ
 Ըզվնադրոյս՝ մեռելութեանցըն մատեան : . .
 Ե՛կ ի ծագաց հողմոց շո՛ւնչ , բարձ ըզծածկոյթ ,
 Ե՛կ՝ ի մըրըրկաց մահու զմոխիրս այս կորդէլ ,
 Որ ի դաշտն անդ ոսկերտուոյն մեծակոյտ
 Յաւերակաց կենաց՝ հաներ զԽորայէլ :

- Ա՛ . . Է . . լուարուք սիրտք , ոսկերք ցամաքեալք ,
 Ի մահացուէ առ մահացեալս ձեզ ողջոյն .
 Բարձիք դըլուխք նրնջեալք , բացիք աչք խրցեալք՝
 Որոց իցէ 'նդ հուսւ այցելուս ձեր հանգոյն :
 Խաղաղութիւնն արդ ընդ ձեզ զո՛հք հանգըստեան ,
 Որք յանկայունն ոչ եւս ծըփեալ յաշխարհիս
 Զօրէն տրկար փայտից յանհաշտ ուկէան՝
 Ընդ առօրեայ եղբարց սահիք այլ ի կիրս .
 Երիթամած ոսկերք , ունայն եղեգունք ,
 Յորս ողբաձայն հճըճեն հողմոց սին բարբառք ,
 Ո՛վ գեղայնոյն արարածոց փուս հիսնունք ,
 Թէ կանգնեիք իբր յաւերաց նոր տաճարք :
 Ա՛յլ գուք նրնջէք զանգորրաւէտըն զայն քուն՝
 Ում այցելու չիք արեգակն յայտմ հեռէ . (քուն ,
 Քո՛ւն անըզբաղ , քո՛ւն անաս , ոչ դառն իսկ
 Բայց զի զարթնուլ , ա՛հ , զի զարթնուլ ոչ գիտէ :
 Ո՛վ , զի զանխուլ կայք անդանօր խաղաղիկ .
 Քանի՛ գարնան ծաղկունք ըղձօք փթըթեցան ,
 Ո՛րքան նորեկ հընջեաց հաւուց աւետիք
 Եւ որ չեբարձ ի ձէնջ ըղգլուխն ընդ տասան :
 Ա՛յդ սրգաւոր ձեր քառաթեւք եւ դրասանդք՝
 Յոր արտասուք ուստեք ուստեք գան հեղիկք ,
 Ա՛յդ աճնցուն սիւնք լալեաց՝ նոճք , կաղամախք
 Ըստուերաձիգ մեղամաղձուտ ձեմեիք ,
 Որ զիմաստնոյն եւ զանխմաստ գերեն սիրտ ,
 Որում զըկող ընդ զըրկելոյն կան պատկառ ,
 Ուր գոռ մարտկին յանկամս առնուն լանջք խը
 Ուր անյուսից եւ տխրելոց հուսկ դադար , (լիրտ
 Ոչի՛նչ աղղեն դոքա ի յարկ ձեր լուին . .
 Եւ ո՛չ պըղինձք դանդաջեալք ծանր ի գանգիւն

Յեկեղեցւոյ անտի ողջոյն բարբառին . . .
 Այլ զի՞նչ . . . լուսնիք . . . ընդ ին խօսիք թէ՛նդ հող
 Եկայք ի դող իմ, չքսարանու՛մ չքփախչի՛մ (մոյն . . .
 Զի փայտ փրրկչին իմոյ կանգնի առննթեր .
 Սուրբ էք նովաւ, յանիրան դիրկ ձեր փարիմ,
 Ուրուահանացդ հեղում ըզջերմ սրբախ սէր .
 Գանկք փոշէլիցք, խորակնագոյն դուքք աչաց
 Եկայք լացից լուացից ըզձեզ արտասուօք .
 Գոնեա մի օր զերծեալ ի կարծրող վիմաց
 Յերերուն գաշտ ծոցիս առջիք դիւր ամոք .
 Յետ այնքանեաց ձմերանց անհաշտ հիւսիսոյ
 Առէք շնչէլ շունչ մ'ի դէլգէլ յիմ շնչից .
 Զի յիշատակք ձեր անմոռացք են յուշոյ
 Եւ անբաժ սիրաք՝ ի համանիւթըս սրբաից :

Արտասուէլի՛ մարդկութիւն ,
 Ըզքեզ ի քոյդ աւերած
 Հետազօտեմ աչք ի լաց .
 Ունայնութեանդ տամ ողջոյն :
 Ահա ճահաան այն գոռող .
 Ուր չիք թագին արդ կրնիք .
 Ոչ ոսկէհոռ ծիրանիք
 Բաւեն մերժել զուսոյն քոս .
 Ահա բազուկն այն անյաղթ
 Տապաստ արկող ըզբանակս ,
 Որ ըզվրիժուցն յաղթանակս
 Կտիէր ի վէմ եւ յերկաթ .
 Ի հրապարակ ու ի տաճարս
 Կանգնին նոքս սպաղսաջուն .

Կանգնողն եւեթ դողդոջուն
 Յանկէ անկեալ է գաղարս .
 Ահա ճակատն խմաստուն
 Որ խորհրդոց իւր անթիւ
 Կարծէր պակաս զողջոյն տիւ ,
 Եւ զերկնից դաշտ՝ ոչ անհուն :
 Աստ օժեղոց գագաթունք ,
 Երկնաւորաց քան երկրի
 Եղեալ ի կեանս գրբացի ,
 Եւ բեռնակրաց անդ թիկունք :
 Ընդ անծանօթ պանդրխտին
 Ում արտասուք չըհեղան
 Եւ չեղելոց լեալ նրման
 Անհետացաւ ի գեաին ,
 Երնջեն ըզքուն միաբան՝
 Որք ի մահուն՝ զաչս հանուրց
 Արկին ի վէմն իւրեանց ցուրտ
 Եւ ներբողիւք պատեցան .
 Տէրն եւ ծառայ ի մի բարձ .
 Աղքատ՝ ճոխի վանատուր ,
 Առ ոտըս հէգ գերւոյն իւր
 Կայ բռնաւոր տիպ եղբարց :
 Հեռախաղաղ անդ մոխիր
 Հաւուց թռանց մերձ ընդ մերձ՝
 Որչափ յերկին ոչ աստեղց
 Երամակցին հոյլք ի ցեր .
 Անդ հայրենին լուռ բերան
 Ընդ հողակոշան անգամ դուրս
 Ճըգնի շարժել ըզբրթունս
 Որդեացն յեաին օրհնաբան ,

Եւ ընդ վիմուիս իսկ՝ գերի մօր
 Գողարիկ թըւի առ որդեակ՝
 Արտասուածութիւնն երբ պրտակ
 Երթեալ հիւսէ անգանօր .
 Անդ ի մահուն իսկ անմահ
 Սէր փեսայի եւ հարսին
 Մըրցեալ ընդ վէմնն ցըրտին՝
 Ըզհիմենեան քննէ ջահ
 Ի լծակցին իւր չըւառ .
 Յարտասուազէղ յայտ եւ յաչք .
 Եւ զոյգ յերկնից ու երկրէ լանջք
 Թըւին բազխիլ սիրաբար .
 Անդ ճրգնասուն եւ պարկէշտ
 Մենակեցին լուրջ մոխիր՝
 Եւ յանարեւն իսկ երկիր
 Թըւի նրմին տալ հրաժեշտ :
 Անդ օրիորդք նազէլէք
 Որք յոան ի մաան եւ անկոխ
 Պարէին գեր քան ըզհող ,
 Ընորհաց ամանք գեղանիք ,
 Յորոց ի ծոց՝ բովք սիրոյ ,
 Երիտասարդ կորովի
 Գերի մաանիւր կամովի
 Հողին կախէր ըզհողուոյ :
 Լուսալիր զաչարն ծաւիս
 Ըաւղաց սիրոյն ճրադարան
 Բողոր կենաց բաւական ,
 Թըւին շարժել թաղծալիս : . . .
 Անդ միով հընձեալ գերանդեալ
 Իարք եւ հասակք ամենայն ,

Եւ ընդ միով անկեալ կան
 Յաւիտենական հովանեաւ .
 Վասն որոց ոչ եւս ժամանակ
 Յընցէ զգործին կենսաչափ ,
 Ի ոչ կենցաղոցս հապրչտաալ
 Գիմեն բազմադէմ անդ կոհակք .
 Անդ մարտայարդար փողոց վանդ
 Եւ սիրաշարժն հարսանեաց
 Իբրեւ ըզհողմն ամայեաց
 Ոչ գրտանեն խուն մ'արձադանդ : . . . :
 Այլ յանեզրական ի խորոց
 Գիականացեալ դամբանաց
 Մըշտագիշեր թըմբրութեանց
 Հեծութեանց ի վեր հընչեալ կոծ ,
 Առ քեզ , տէր , գոչէ՛ գըթութիւն . . .
 Այս մի եւեթ ձայն մընաց
 Մեռելոց , կենդանեաց՝
 Ի յարքայութեան աստ մահուն .
 Գըթութիւն՝ ո՛վ տէր , ի մեզ տէր .
 Լուր աղերսիս որ միայն
 Ոչ գիտէ կալ լրուելայն ,
 Կարդայ բողոքէ միշտ յեթեր .
 Գըթութիւն . գիտեմք զի հզօր ես ,
 Արդարութեանդ կամք սրատկառ ,
 Չունին տալ սիրտք մեր սրատճառ .
 Պաշարեալք ի մեծ վըտանգէս .
 Գըթութիւն . կորեաք տէր կորեաք՝
 Թէ յանկարծ դատ հրամայես ,
 Եթէ զչարիս մեր քնընես
 Զո՞ք բնաւ դտանիցես արդարակ .

Բայց ողորմութեան առ ի քէն
 Բզխէ աղբիւր յորդառաս .
 Ո՛հ , թէ ցօղես ըզմի կաթ
 Անցցէ բոց վըհիս հուրեղէն : . . .
 Ընդ երկա՛ր եղեւ ընդ երկա՛ր
 Պանդըխաութիւն մեր յերկնից .
 Ե՛րբ լուծցէ սէր ըզկըսկիծ ,
 Ե՛րբ հանդիպեսցուք քեզ յամայր .
 Հողոյ ծնունդք ի հող շաղկեցաք .
 Կըրից ի շունչ հողմավար
 Ըզլոյս աըւաք ընդ խաւար .
 Այլ խոստովանիմք զի մեղաք .
 Մեղաք գրգուանացդ հայրենի ,
 Սակայն որդիքս անառակք
 Զանուն քո ոչ մոռացաք .
 Մեղա՛ք , այլ յուսամք միշտ երկնի .
 Մեղա՛ք , այլ խրատուդ ունկընդիր
 Ձեռն ի յոգիս աղեկէզ .
 Բախեմք քո գրան , Տէր բայց մեզ ,
 Բայց . մի անկցին բանք քո յերկիր :
 Մեղա՛ք , այլ խոնարհք արդ անձամբք
 Բառնամք ըզգեղձս ի նըժար .
 Անգէն աջովդ ա՛ռ յօժար ,
 Ա՛ռ կըշտեա՛ դատեա՛ . . . եւ անսամք : . . .
 Ահա վերացաւ նըժար ձեր յերկին .
 Ո՛հ , վերացարուք հողիք երկնադին : . . .
 Իսկ ո՛ւր արդ իցէ յաղթութիւն մահու
 Ո՛ւր են ո՛վ գըժոխք խայթոցքդ ահարկու :

ԱՌ ՀՐԱԺԱՐԵԱԼՍՆ ՅԱՇԽԱՐՀԷ

- Նաւք ծովածուփք հողմավարեալք եւ անհետք
 Արտալածիկ սաղարթք, ծաղկունք կարկտահար,
 Անդարձականք քաջաղեղանց թուռցեալ նետք,
 Աշխարհաչուաց խուն տխար .
- Ոչք զանձկալին ուրացեալք լոյս արեւուն
 Ի մահագոյնն ըսքողեցան վարագոյր,
 Հակիրճ կենաց յանկարծահասք յերկուն,
 Անձկտք ժամուց լուսաթոյր .
- Բեկբեկէին եւ հեծէին հեղամուռնչ
 Հանգոյն ճրագաց ի կենցաղոյս անցուցեալ .
 Լալով լային եւ ըզվերջին տային շունչ,
 Եւ ըզվերջին տային փայլ .
- Որոց ոչ եւս սիւղ հարաւոյ դարնայնոյ
 Վերածնանել կարգայ հրաւեր ընդ ծաղկանց,
 Ոչ եւս հիւսի սլրասկ, ւ երգէ գէտ կաղնոյ .
 Վայելչութիւն աստեացս անց .
- Որոց ոչ եւս ծագէ զուարթ ջահն ամանոր
 Ոչ եւս զանուանս նոցա թրւէ ժամանակ .
 Խորտակեցաւ առ աղբերաւ ջրոյն սափոր,
 Ծարաւեսցին իղձք անյագ .
- Որոց ոչ եւս հասցէ սրտագամ սիրելւոյն,
 Ոչ եւս սրտիկեր անձկակարօտ երեսաց,
 Ոչ եւս սրնդէ ձեռն որ կայ՝ զձեռն երթելոյն .
 Զյեախն ողջոյնս իւր ասաց :

Հատորք սրբախց մեր, ո՛հ, ողջամբ գնայք ողջամբ,
 Սիրասընու՛նդ ամուլք, եղբարք, մանկրախի,
 Զոյս ի գրրկաց մեր կորզեաց սէր ասըստամբ՝
 Լըւեալ սաստից խիստ բազդի :
 Ձեզ ընկերացդ ասեմ որ կայք ի հրաժեշտ՝
 Դէք ըզճակատս ի բարձրկնեար Յիսուսին .
 Ո՛հ, որ ի նոյն նընջէ՝ զարթնու դիւրահեշտ . . .
 Տեսցո՛ւք զիրեար ի յերկին :

ԾԱՂԻԿՆ ՎԱՅՐԻ

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որ-
պէս ծաղիկն վայրի այնպէս ծաղկի. շնչէ
ի նմա հողմն, եւ ոչ է. եւ ոչ եւս երեւի
տեղի նորա :

ՍԱՂՄՈՍ

Տեսի զծաղիկըն վայրի

Դաւարագեղ եւ սայծառ .

Տեսի եւ զմարդ ի յերկրի

Առոյգագեղ եւ կայտառ .

Շնչեաց խորշակ ի ծաղիկ ,

Յամաքեցաւ ի ծրղին .

Փրչեաց ի մարդ մահ զըրտիկ ,

Տարածեցաւ ի հողին :

Դարձայ 'նդ ծաղիկըն վայրի'

Ու ահա նորոգ ընձիւղէր .

Դարձայ եւ 'նդ մարդն ի յերկրի ,

Ու ոչ էր , ոչ եւս երեւէր :

Եւ ես անցի 'նդ այն տեղի

Ուստի էանց գընաց մարդ .

Եւ զաչս յորդեալս անդ հեղի ,

Անդ ըզըրտիս իմ՝ մակարդ :

Տեսի ծաղկունս գեղեցիկ ,

Հովանաւոր տեսի ծառս՝

Երկարատեւս քան զմարդիկ ,

Եւ ճոխադոյնս արկեալ փառս .

Տեսի զմայրին հինաւուրց
 Քրսան ազգաց հովանի ,
 Եւ իբր ըստուեր մազապուրծ
 Անցանէր մարդ հովանի .
 Լուծան ծըղեք կարշնովին
 Որ գործէին զանդաստանս .
 Կասեաց կասողն ի կալին ,
 Անկաւ արկողն ըզսերմանս .
 Մշակեալն եկեաց քան զմըշակ՝
 Բոյս՝ որ տաշէր տապարաւ ,
 Եւ հողագործն իւր դայեակ
 Ի հող նորին յաւելաւ :
 Շըրջին դառնան յեղանակք
 Նոր ծիծաղին ի դարունս .
 Մարդ ի մահուն ագարակ
 Ոչ յարկեցէ՝ նդ նոր ծաղկունս .
 Սուղեալ ի խորս խաւարի ,
 Արեւ չունի զնորս փոյթ ,
 Ոչ շահասէր ոք վարի
 Խընդրել ըզվայրն այն անքոյթ : —
 Ո՛վ մարդ , երագ քան զծաղիկ
 Յանցդ եւ ի գնացդ յաշխարհէ .
 Տըգեղագոյն քան զկոճղիկ
 Մնացուածդ՝ յոր ոչ ոք յառէ :
 Ո՛հ , զիարդ այսպէս յեղծումս
 Ու ի դարշութիւն մտանեալ մարդ՝
 Հաստուած խնամոցն անախատումս
 Ու արարածոց տէր եւ զարդ : —
 Քանզի զծաղիկ եւ զանբան
 Ազականէ ժամանակ .

Ըզմարդ՝ գործի բանական՝
 Եղծանէ մեղք դրժընդակ :
 Եւ մեղք առ մահըն դահիճ
 Մասնեն ըզքեզ չարաչար .
 Ի միգամածըն մահիճ
 Տապաատ դիցիս գարէ գար : . . .
 Եւ կորիցես մինչ ի սպառ . —
 Աստուած՝ որ ստեղծն ի սկըզբանց
 Ետես ըզքեզ՝ այ չըւառ ,
 Եւ արտասուեաց սիրտխանձ ,
 Արարչական շունչ սիրուն
 Ծաւալեալ հեզ ի սողոխ
 Էանց ընդ վայրըս մահուն
 Եւ սամկացաւ ցամաքն հող .
 Եւ մարդն անկեալ յարիցէ՛ .
 Եւ ոչ վայրին պէս ծաղկան ,
 Այլ յաւիտեանըս կեցցէ
 Ի բոյս ու ի բոյր տիրական :

ՅԵՐԵՍՍ ՄԱՆԿԱՆ ՄԵՌԵԼՈՑ

Որ ի հասկաց բարձեալ զերանգըն դալար
 Զգեցուցանէ յոսկեգիտակ սրամուճանս ,
 Որ արկանէ բեհեզ զալեօք թըխատարր ,
 Եւ յարժւոյն թեւս նորափետուր հանդերձանս :
 Որ ձորձ հինու ճամուկ օձին ծակամուտ ,
 Որ կուսանաց ճակատ սարդէ հերասպանձ ,
 Տէգ մըրբազարդ յայտ սրտանեաց սրաղպաջուտ ,
 Ու ասրաքսասակ սրտէ զճընօտ ծերութեանց :
 'Նա ինքըն տէր կենաց' պըճ"նէ զմահ ինքնին
 Յորժամ զմանուկ մատաղ առ նայն աւանդէ :
 Սըրբեալ յայտից ըզգունապէզ ծկրանին
 Յերեկորին խորնոյ ի ստուերըս սրտէ :
 Զի գեղեցիկ , զի սրբաստուչ ինձ այն գէմք՝
 Յոր կեանք յառին ի հայելոջ գեռ մահու :
 Եւ թողեալ զսիրտ՝ թըլին աշխոյժք հեղաճեմք
 Ի բիւրղափայլ փարեւ յերեսս յանդորրու :
 Ի թերաքամ աչացըն սեաւ եւ կապոյտ
 Ի շիկորակ շրթթունս ու ի խոպըս խարտեաշ՝
 Միջակենցալ իմն ոգւոյ փահ է անքոյթ ,
 Խառնի արտօսը անդ ընդ ժըմիտ , վահ ընդ վահ :

ԶԱՆԳԱԿՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ

Ի խորութեան խոնաւայոյզ գիշերոյն
 Ընդ սեաւ քօղով մինչ թաքուցեալ է բնութիւն ,
 Փարատելով զանձրեւածին ամպոց խաւ
 Եւ մռնչածայն որոտացեալ ընդ հարաւ ,
 Յորմէ գողայ շարժի մշակաց տաղաւար
 Եւ արհաւիրք կըթոտք կանգնին շուրջ ի սլար ,
 Գանգիւն գանգաղ , իբր ուղեւոր ծերունի
 Ընդ ո՞ր դու գաս օդոց շաւիղս խրթնի •
 Եւ յընկրկել հողմոյս յանձաւս բացական
 Ո՞ զպղղընձոյդ շարժեաց լեզու լալական ,
 Զահեղս ինձ զայս եւ սրբաառուչ առնել աղդ
 Յորմէ խառլի հոգի եւ միտք յանրդգաստ : —

Ձեռնն ցրրաին մահու ճօճէ զզանգակս այս
 Ի հասարակքս լրութեան ու ի խաւարս : • •
 Ա՛հ • քանի՛ս եւս արդեօք մընայ ինձ լրսել
 Եւ ըզվանոյրնն գիտակաց հարցանել ,
 Մինչեւ դարձեալ հարեալ՝ հարցցի՛ վասն ո՞յր գա ,
 Եւ ասացի՛ վասն հոգւոյ • • • • •
 Ո՛հ , եղկելի անձնիկ , ցաւէ՛ քեզ ընդ այն •
 Անկցի՛ս ուրեմն եւ դու յանյագն որովայն : —
 Ե՛ս , է՛ս , որ արդ ընդ բիւրուց կեանքս ձրգեմ
 Եւ յանրատոյդ բաղդին ի լասա ծովաձեմ
 Ողբերգելով ըզմահ եղբօր տարածամ՝
 Մերթ խրախուսեմ եւ մերթ սարսէլ սեւանամ :

Այո՛, մեռայց եւ ես • թըւի՛ նձ այժմէն իսկ
 Ի սպառուածոյ ժամանակեան կենցաղիս
 Տեսանել զոք, եւ յայս սպառձէն անքրթիթ
 Ընթեանուլ լուրջ, եւ յողբախառն ի ժրպիտ՝
 Ո՛վ նուագահանդ՝ ասել, հընչեաց-եւ քոյդ զանդ,
 Եւ համարել զամս որք անցին փութաջանք •
 Այո, գնացեր եւ դու ի տուն քո անդարձ,
 Մարմինդ ի հող եւ բաժինդ ել առ օտարս •
 Մատուկդ որ նախ զայս դրժեցին երգ եղեր՝
 Նրման փեարոյն որ ի նոսին՝ դարձան յերր •
 Ի բոյն բրբացըդ բնակեցաւ որդն աղկաղկ
 Եւ ի տաճար խորհրդոց ցեցք կալան յարկ : . . .
 Հընչեաց զանգակ քո, հուսկ զանգակ դիշերին,
 Անցեր եւ դու ի յաւիտեանս ասագին,
 Ըզլիշատակ թողեալ իբր հեռք յաւազին՝
 Որ ջընջեցաւ կոխան ոտից նաւազին •
 Դառնան տատեղք, եւ փողք հընչեն յոբելեանք •
 Քեզ ամենայն ինչ անշարժ, քեզ յաւիտեանք : . . .

Քանիս լրեւալ զազդումն ես զայս ողորմուկ
 Զօրհասական յիշեցի կեանս վաղանցուկ՝
 Հանդոյն ծաղկան յայգուն առոյդ փթթելոյ
 Եւ անժաման յերեկ տօթով խամբելոյ •
 Եւ ասացի, քանի՛ թըւի ձայնս ասեղ
 Որոյ ի սիրտ ունայնութեանց կաթեաց ասեղ : . . .

Հընչեաց զանգակն իմ ասա, զգամ ի սրբուկ,
 Եւ ճոխնչ գրչիս ըզպրդընձոյն թարգմանէ : . . .
 Ո՛հ, եւ քեզ իսկ, եւ քեզ որ զիսն ընթեանուս՝
 Հընչեսցէ՛ եւ քեզ զանգակն այն անխոյս •
 Եւ դու զիմ հեռ կոխես զինչ ես գնախայլոյ •
 Ընդ իս եւ քեզ ժամանակ խուն է խարոյ :

Եւ դու մանուկ՝ ընդ մանկութիւն մի յուսար ,
 Զի ամենայն հասակ առ մահ հաւատար .
 Ժամանակի կրքսեր ու երեց չիք դերի .
 Վախճան անյայտ՝ է մերձակայ քան հեռի .
 Միով ցաւով ամենեքին եմք վարակք :
 Մի արգելուր զարտօսր որ յաչսրդ պարփակ .
 Լացի ես զայլս , լաց եւ դու զիս , այլք ըզքեզ .
 Եւ ի քամել զաղի կայլակդ աղեկէզ՝
 Ասա , մեռաւ նա . վասն ո՞յր զանդս այս , վասն իմ...
 Արկէք զինեւ քօղ , զի եւ ես մեռանիմ : . . .
 Եւ ի գանգիւնս յայս սիրտք սարսէն ու անկանին ,
 Այլ երանի՛ որոց ի Տէր նընջեցին :

ԱՐՏՈՍԻ Ի ՏԱՊԱՆ

- Ո՛վ տէր, հաստիչ բըբաց ու այտից վարդենեաց,
 Որ տեսչութեամբ խորին զաղբերբա լալեաց
 Ի գեղեցիկ լուսոյն աման կառուցեր
 Եւ զարտասուաց շողս ընդ շողոյ սուրբ մըթեր •
 Դու որ նովաւ ըզնորածինս մըկըրաես,
 Եւ ըզկիտուած մարգարտախուռն վարես
 Ի կարմրաբոյս հովիտ գիմաց կուսական,
 Իմոց աչաց տուր արտասուս յայս տապան :
- Որ գուպարեալ ի բեւեռաց սառնասոյզ՝
 Զհիւսիս զհարաւ օգակուտակ բըբայոյզ
 Ամպախաղաց յըղես յերեզ ծարաւի,
 Եւ ըզպասուք տապատոչոր ինչ խըռուի
 Բուժես պակամբք օգայածիկ կայլական,
 Իմոց աչաց տուր արտասուս յայս տապան :
- Որ անբաւիդ անչափութեան խուռն պատկեր
 Մըշտասարսուս զհամատարածս այս հաստեր,
 Հըսկայ ալեաց զեզը եւ զիրար կոծելով
 Յանգուլ լալիս միջացամաք միջածով
 Չայն ուսուցեր ի վեր բառնալ ողբական,
 Իմոց աչաց տուր արտասուս յայս տապան :
- Որ տըխրականս եզեր կարկաջ ծործորոց
 Խոխումաձիգ ընդ հուռն մըթին ամինակոծ,
 Եւ զամլութիւն վիմաց գեաովք ծնուցանես
 Ի կուճս կոչկուս կանաչորակ կապեալ գէս,

Յրբաին ըստեամբք զիես սերմանց հողմնացան ,
 Իմոց աչաց տուր արաստուս յայս տապան :
 Որ ընձեռես ցամաք որթոյ սիրոյ կաթ
 Արաստուաբար ծորել ի յուսա իւր անջատ ,
 Որ տաս շամբից շաչել ի խաղ լրճակաց
 Կըքես ըղկողը եղերամարց ուռենեաց ,
 Եւ սօսափիւնս ի մայրս ազդես լիբանան ,
 Իմոց աչաց տուր արաստուս յայս տապան ,
 Ուր յանրատոյզ կենաց ի ստոյգս այս լոկ վայր
 Կանխաժաման նընջէ իմ գոյզ իմ եղբայր :

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ՇԻՆԱԿԱՆ

Յեկեղեցւոյն սրբոց ի ստուերս հանդարտին
 Չայն կահանմանս ընդէր, եւ ցօղքս ցըրտին...
 Գա՛շա, էր ի խոր լռութեան կաս եւ ի սուգ,
 Չաշնան կապուարս ժողովեալ ցուրտ ի սիւգ :
 Ա՛հ, տերեւոյ նմանեալ արմոյն դալկահար
 Որ ի ցամաք ստեղանց կապտին զանխլաբար՝
 Աւուր աւուր թափին ի քեզ մահացուք,
 Ձի հանապաղ շնչեն ի մեզ հողմք աղղուք :
 Որդի՛ հիւղից, խոնջ իրանացդ ի հանգիստ
 Իցե՛ս նըստեալ երբեք մահուն ի հովիտ .
 Կամ թէ ի ճեմ գիշերապահ աստեղաց
 Իցե՛ս անցեալ ընդ ադարակըն լալեաց .
 Ձի՛նչ աղղեցին յայնժամ սըրտիդ՝ գերեզմանք,
 Յոր թէ զցերեակն ի քէն չելին հառաչանք :
 Տես ըզքարինս անկոփս ի դաշուն համաափիւս
 Աւերակաց տիպ քաղաքի վաղափուս .
 Ձի՛նչ պէտք բըրդանց եւ հոյակապ քաղաքաց
 Որոց կանգուն մի հող վըճիւն հին չափեաց :
 Յըրտասարսուս աստ ի հողմոց ելումուտ
 Հեղիկ ի կոծ ծըփին մացառք եւ թըփուտ .
 Ի թաւ ոստոց եղերամայրն տաարակ
 Գամ գամ առնէ լսելի զմընչիւնն ողբերգակ .
 Տատանի՛ն արխուր նոճիք սեւաթեւք
 Եւ ծայր ընդ ծայր բախեալ հընչեն սըրտաբեկ :

Գոյժ կոչնակին հընչի բացուստ պահ ընդ պահ
 Սուգ եւ երկիւղ, արտօսք աղղի ու ինքքն մահ .
 Հովուին մանուկ հեռաստանէ կացեալ գէտ
 Չեռն ի ճակատ երեսք սնկեալ երկրամէտ
 Գառնայ յանշէնն ի գեղեւեալ դարչապար,
 Չհեա բառաչեն ողորմ անդեայն եւ ոչխար .
 Որսորդն ի սար ձիգ այծեման հեռամուտ
 Ի նպատակէն՝ յայն տես լըխպէ զձեռն հըմուտ :
 Ա՛հ, հուպ երկոցն արատրէից՝ շինից աղղք
 Անկեալք ասորք եւ անասորք գընին հասկք .
 Յալիս հնացեալ խառնի փաղփուն աղուամազ,
 Հարք եւ որդիք յաճիւն փոխեալ խուն նըւազ,
 Երթայ՝ զգահան առ աղգահան անյարիր,
 Խօսի լըսիկ հարեալ ճակատ ի յերկիր .
 Տրտին է վայրն՝ եւ լուցանէ հուր կըսկիծ
 Սիրտ՝ յանջատեալ սիրեցելոյն սիրտ թախիծ .
 Արբունք ծաղկէք քըսեալ զխաակս ի ցուրտ վէմ
 Ողբան ըզյոյսն իւրեանց անցեալ տարադէմ .
 Եւ նորահարսն այրիացեալ երկրապիշ
 Արտեւանամբք զարձանագրին սրբէ նիշ,
 Որ լսկ զանուն անջինջ պահէ զըծակցին՝
 Որով ցանկայրն ըզկեանս հորդել զըժուարին :
 Եւ դու ի դուր մանկինկ մեկնակ եւ արաւում
 Յորմէ զանուն եղբօր հատ մահն ապառում,
 Չընկեր խաղուդ, եւ ըզհացկիդ ընտանի՝
 Ի զո՛ւր ողբովք յառնել առնես երգմընի :
 Եւ մինչ յաւուր տօնից պարեն պատանիք
 Յնցին կուսանք մեռեալք, ոչ եւս գեղանիք .
 Ոչ եւս կայթէ թեթեւն եւ հեղ գարչապար,
 Չի խոչընդոտն ընկիճեաց զայն հովախն քար .

Ոչ եւս հրնչեն լեզուք խօսնակք զերգ հրնձոց ,
 Դ՛ երազ լեզուս քիմք կըցեցան յարմատոց .
 Զհամբաւ մահու հիւրընկալին յԵգիպտոս
 Տանի ծիծառն ի ծակ բըրգանցըն բորբոս .
 Այլ, ս՛հ , ըզնոր դարնան դարձին աւեախ
 Ոչ եւս հեղցի յանարձագանդ լըսելիս : . . .
 Ոչ դադարէ անձեան հոաքել յարտասուաց
 Մինչ ոչ յառնեն որդիքն ի քնոյն թանձրամած : . . .

Այլ սրբբեացին աչք . ահա նշան տերունեան
 Առ դամբանօք հըսկէ ի յոյս յարութեան :
 Օրհնեալ դու յոյս ճաճանչ սիրոյ արտաքին
 Որ եւ ըզուծ մահուն գործես զիւրազին .
 Զարարչականն ի յուշ ամեալ զոգւոց գութ
 Գամ քան ըզգամ լուսաւորես ըղկայս մութ .
 Դու եւ զերկրիս նըպաստ ամես մըխիթար ,
 Որում մընան հոգիքն հեռուստ սիրաբար :
 Քանզի երկնից դատրիկ անձկոտ ու ամօթլեամ
 Քրիստոսի հարսըն կոյս եւ մայր մահացուաց ,
 Եկեղեցի՛ ողբայ ի գութ մայրական
 Զառագաստի մանկունա հովանին արամութեան .
 Իբր անզաւակն այն մայր մանկանց սիրայորդ
 Իարայելի նախն արքայի օրիորդ ,
 Զերգս հրճուելոցն հատեալ յիւրմէ հրնձողաց
 Առ գիտեամբք նստեալ սիրոյն արգասեաց ,
 Ընդ գազանաց զիշերազէն գայր ի վեգ ,
 Փափուկ աջով մանրեալ զանդեղց ճիրանս սէգ .
 Մինչեւ երկինք ջուր գըթութեան իջուցին
 Եւ յարտասուս Ռեախայ ցօղիկ խառնեցին :
 Հարսին սրբբոյ մըտեալ ի սուգ մանկըտւոյն
 Տըխրատեսիլս ընտրէ զաւուրըս կոծոյն ,

Յորժամ հրնչի թեւելիս ի մայրիս
 Եւ տեռաղերձ ծընանին խաղք զուռնիս .
 Առաւօտինք աշնան զարթնուն միգամած
 Որպէս աչիունք առադաստեալք յարտասուաց .
 Ի յայդս այգուն դանչեն պրղինձք յամրավանդ
 Յերկնաբերձիկ աշտարակաց տրխրականք .
 Չայնրն թախստեալ ծաւալ ի մէգ զօղանջէ ,
 Մերթ հեռացեալ յուշիկ , մերթ յամր յառաջէ :
 Ո՞ր դայն լուեալ մահադդեցիկ ծանր հրնչուն՝
 Ոչ յիշեացէ զիւր նրնջեցեալսն համարիւն .
 Ո՞ր իցէ տուն կամ ո՞ր դադար մահացուի՝
 Յոր ոչ նախկին հիւր անկոչ մահ բնակիցի .
 Իարպաս ճըճեաց ու եղեգնաշէն տաղաւար .
 Չիցէն ազատ իւր ճեմելիք բրոնաբար : . . .
 Ամենամուտ է մահ , այլ յոյս յաղթէ նմա ,
 Իսկ ի սիրոյ՝ խապառ լուծեալ կորանայ .
 Սէր որ փոխէ զբրիստոնէից մահ ի քուն ,
 Եւ դաչս որբոց ու այրեաց ուղղէ յերկնից տուն :
 Յայն սէրն յառեալ եւ յանդերձ հարկն օրհասին ,
 Աչք իմ յուսով ի վեր , եւ ձեռքս ասա կասին : . .

ՇՈՒՆՁ ՈՂՋՈՒՆԻ

ԱՌ ՄԱՆԿՈՒՆՍ ՎԱՂՎԱՂ ՆՆՁԵՑԵԱԼՍ

Ողջոյն դառնունակ

Ու անդորր անուշակ ,
 Ո՛վ մանրեալ բողբոջք
 Ի սուրբ հովանեոջ
 Հովախի խաչաղարդ
 Ընդ ծիղ եւ սաղարդ ,
 Եւ քան ըզծաղկունս
 Վաղ թափեալք ըզգոյնս •
 Որք արդ քաղցրաբուն
 Անգիտակք մահուն՝
 Խաղաղեալ նրնջէք
 Ձրւարթնոց հանգէտք •
 Ըզգեռափրթիթ
 Արձակեալ ժրպիտ
 Մայրականն ի դիրկ՝
 Թողեալ ըզծոց դիրդ ,
 Եւ զանուշահոտ
 Ձրատեանցրն կարօտ՝
 Յորմէ կաթն եւ սեր
 Շիթ մարգրրտայեռ
 Կարմրիկ շթնէրոյդ
 Տեղայր փոյթ ընդ փոյթ •
 Ըզհօր քաղցր համբոյր ,
 Ձեղբայր եւ ըզբոյր

Թողեալ ձեր ի լաց .
 Երբ հրեշտակ կենաց
 Ի ջահ ձեր փայլուն
 Շրթամքն երերուն
 Միանգամ փրչեաց
 Եւ զաչսրն ծածկեաց .
 Կենացդ արեւակ
 Ժրմտեալ անուշակ
 Զբարթնոցն ի թեւ
 Եւ սրացաւ թեթեւ .
 Հեղիկ աղաւնի
 Ի դրախան Ադենի
 Ի կենաց ծառոյն
 Արկանել մրնչիւն ,
 Մինչեւ ի խոնարհ
 Յերկրիս ճանասարհ ,
 Յոր ի պահ նըսեմ
 Գան արտասուածեմ
 Մարք ձեր անձկալիք ,
 Ըղճիւթն անուշիկ
 Զոր յանձկակարօս
 Կենաստուն յանօթ
 Թողէքդ ի նոսին՝
 Սփռել կաթողին ,
 Զանմեռ մրտենեօք
 Եւ զաղդ աղդ ծաղիօք
 Որ ծածկեալ ըզլէմս՝
 Ըզթալծանաց դէմս
 Ամօքեալ ծաղու ,
 Փոխանակ մահու .

Անդ զանմահութեան
 Գերարփիական
 Յուցանեն տիպար
 Աչացս ապիկար •
 Եւ ըզձեզ հանգոյն
 Թիթռանց ոսկեգոյն՝
 Ընդ մահացուս հող
 Հազիւ գեանասող,
 Եւ հերձեալ ըզբանս
 Հոգւոց պարաւանդ՝
 Թափեալ ի մայրն իւր
 Զարագախամուր
 Հողոյդ պարուտակ,
 Եւ լեալք ըսպիտակք,
 Յազաա ըցան ի վեր
 Հրճուարար ճախրել,
 Այն ինչ մահացուք
 Գրրեալ յերկրի դուք,
 Յաւերժ ընդ անմահս
 Դառանդելով գահս •
 Վաղամէն մանկուհիք,
 Հանգերուք զուարթունիք
 Ի սիւգ հովածու
 Խաչին կենսատու
 Ի ցօղ սրտաբուխ
 Եւ հառաչս յայս սուղ:

ՀԱՌԱՉՍ ՄԻ

Ի ԾՈՎԱԴԻՒՏԱԿ ՏԱՊԱՆ ՇԱԴՈՊՐԻՄԱՆԱՅ

- Բրեւոնեան քարակոչիո՞ճ՝ ծուխք յորձանայ ծու-
վածուկ ,
Ո՛վ մըրրայօն եւ ձիւնալարս ալիք յաւերժ շա-
ռաչուկք ,
Որ յանհանգիստ յովկիականս ահեղամուռնչ
հառաչանս
Բիւրաբերան ժամէ ի ժամ զարթուցանէք ար-
ձագանս՝
Ի խորափոր խարակս եւ խիթըս դարափանց
Սէն-Մալոյ ,
Ընդ սոսկալի գոչմանդ մըցմանց փանդունահար
ձայն տալոյ •
Արդ զի տապանըն տիրաստրաս առեալ զաւանդ
իւր արխուր՝
Զանձուկ որմնցն ունայնութիւն ելից անուամբն
հանրալուր ,
Զեռանդնաշարժ մինչ արձակէք վակժոյժ խու-
ժանդ ալեւէտ
Կոյտ ըղկուատլ զիրարելլով գէմ տապանիդ ծու-
վաղէտ ,
Որոտալոյս եւ ինձ կայէք հառաչանայրս սրատ-
կատ՝

Որ վաղվաղեալ ծրփինածայր ընդ մրկանունս
հայ բարբառ՝

Գամ յեանոյ Աւսօրիկեայց եւ Բրետոնաց քաջ
Բարդին

Զիմ եւ զիմոց մեծ հայրենեաց զողջոյն ձօնել
ըզյեանն •

Ի՛ խակ Բարդից եւ Դըրուիդաց հայր հինաւուրցն
Այրարատ ,

Որ մինչ հազար ազգ զանց չառնէ զգաղթակա-
նաւն հարազատ ,

Եւ ոչ՝ որչափ բազմամըթեր կացցէ զնովա-
ցուրա բիւրեղ՝

Անրդգայ նոգ սնյաքան կորուստ՝ նա կարծիցի
կալ չըքմեղ :

Շաղոպրիան, հանձար չընիկ, ոգի ստեղծիչ սքան-
չելեաց ,

Քեղ՝ յերկնահուսն – յոր միտքդ հասին – ես ի
ծայրիցըն Մասեաց ,

Զոր սաղնկայ նախակին գրեցեր դու նինջաբեր
զըւարթնոյն ,

Զյաւերժական կարգամ հանգիստ խմասանա-
ճեմ քում գըլխոյն •

Յանմահութիւն հերիք հընչեաց համբաւ հըզօր
քոյդ անուան ,

Ըզնոյն համբաւ քեւ ճարտարեալ քեզոյն դիտեմ
ու ի մահուան :

Օ՛ն , թէ ունկանդ քերդողալուր քաղցր հընչէ
միշտ քան քընար՝

Անհուն ծովու մոլեալ մըռունչ կոհակաշարժն
իւր ի լար ,

Որոց բազում դու յաշխուժից օխս մատուցեր
 լըսելիս ,
 Անասնձեռեաւ երբ հուրբ ձողկեալ գնայիր օտար
 ընդ ալիս՝
 Ըզհնացեալս աշխարհ լըքեալ , նորոց ի նորն ի
 խընդիր ,
 Ձեւիկոնեայ մուսայս ի պրակըս Նաչէից ամեալ
 հիս .
 Մերթ մաղձաւոր յեղափոխեալ զանձին քո դէմս
 ի հռենէս ,
 Մերթ յերկնընծայ կուսին տարփող եւ վկայակից
 յԵւդորէս .
 Ի Թափառիկ եւ տարաբաղդ մերթ ի վայրագըն
 փեայ
 Յանապատի փթըթեցելոյ փափուկ բուսոյն Ա-
 տալայ ,
 Եւ մերթ ի սեպ կոհակահոծ կուսաստանին առ-
 ընթեր
 Ընդ Ամելեայ զգիշերավար ծովն յուղելով լուս-
 նայեռ .
 Յաճախ ապախտ զհայրականաւ քով արարեալ
 բարբառով
 Ըզնրժդէհից վերապատուեր ձայնս , քանզի էր
 քեզ գորով :
 Արդ նոյնս եւ ես սրանդուխտ եւ գամ սիրայորդոր
 ընդ ալիս
 Հառաջ մի լուռ մեռեալ՝ զոր մահդ յարուցանէ
 ի սրբախս .
 Մանուկ երբեմն եւ ես՝ անհուպ՝ օրոճայի զքոյին
 կիրս ,

- Մինչ քաղցրանայր ինձ դարձագարձ ըզհրաշա-
 փիծդ առնել գիրս •
- Յայնժամ ընդ խանդ քո եւ ընդ սիրտ եւ ընդ
 խմաստք սիրացեալ՝
- Զայս հառաչանա երկնեցի, այսքան ամս թաքուն
 յիս եւ մռայլ,
- Որ այժմըս թունդ առեալ վազեալ, Շագո-
 սրիան, դառնայ քեզ՝
- Թաւալելով ընդ քո եւ իմ՝ ակտրժ ծրիանց աս-
 սպարեզ :
- Էին էին երազայոյզ եւ իմ՝ քերդուածք նազե-
 լեք •
- Եւ ո՞յր չիցեն եռանդնալի մըտաց ոսկեակ ապառ-
 նիք •
- Բայց չեւ ի կէս լեալ հասակի՝ ահա բոլոր վե-
 րացաւ •
- Ճըշմարտութիւն ատեայ զցընորս, ցորչափ կու-
 տի ամաց խաւ •
- Այլ տակաւին ընդ արեւմուտըս հասակին ոս-
 կեթոյր
- Աչք կաթոգին ձրկտին խնդրել ըզվառխվառ թե-
 ւոց սոյր ,
- Մինչեւ անկեալ աղօսաբեկ դաշտաց սյտից վար-
 դաձոյլ
- Եւ ցիր ընդ ցիր խուսեն գըլխոյն հովանախիտք
 գեղահոյլ •
- Ըզգայ ն՝ անդարձ մահկանացուացըս վիճակեալ
 ըզգարուն ,
- Անդարձ , աւսող , եւ յեղանակն այն աշխուժից
 իւր սիրուն :

- Այլ քեզ բանոց մեծ , քերդող ճնանել , նոյն կեալ
 եւ նոյն ասնուլ քուն ,
 Զերկին կազմել ի կայս , զերկիր յարձան , լա-
 լիս՝ զծով անհուն .
 Յորչափ ծոցն այն ծրփանուա շարժի զեռայ ինք-
 նայոյզ՝
 Ողջունեսցի տապանդ ի քէն ձեռակերտեալ
 քաջայոյս՝
 Եւ զուարճացի հոգիդ յիշեալ զքերդողականն
 կենցաղ՝
 Քան ըզժրխոր քաղաքական՝ որ լոկ էսծ քեզ
 զըմբաղ ,
 Ոչ գաւազան քեզ Մինովայ , ոչ լիկորդեան տը-
 ւաւ բաստ ,
 Այլ գահոյք գերափառիցն քաջերգուաց ի յե-
 րաստ ,
 Քեզ՝ ս՛վ մեծ , որ գիտացեր զազատագնաց բան
 յահուր
 Ի ներգաշնակ արկեալ ի լուծ՝ մրցել ընդ լարս
 փափկալուր .
 Զի ոչ կերտեալ կիպար եւ ոչ աղիք ըզսիրա ո-
 լորեն ,
 Չափ եւ կըշիռ քերից տաղից չըմոգէ զունկն
 երգօրէն ,
 Թէ ոչ սիրտ ի մասն իջեալ անշունչ նիւթոց
 տայ ոգի ,
 Սիրտ որ ստեղծու , սիրտ որ ըզգայ , սիրտ որ
 խօսի ուղղակի :
 Քեզ որ զաւիւն հրախանդ աղցիդ մուծեր ի նոր
 ճեմարան՝

Ծուփք ծովափին եւ քեզ տրւան քրնարանիդ
 որորան ,
 Իբր անլուսից՝ քոյ սիրելեաց յոնխականն եր-
 գահօր ,
 Եւ Մորուենայն ողբերգակի զՓինգալ , զՈսկար
 եւ Կաղմոր :
 Բարբառք Բարդիդ ծովածաւալք երկնաթրուիչք
 եւ ջերմին
 Յանմարգաձայն յանբրնադատ յամայութեան
 անդ խորին ,
 Յորչափ կըռուին կարկառակոյտք ընդ լոյծ տա-
 րերն ասպարէզ՝
 Յամեհամուղ շաչման միջոյ ելցեն ահեղք սիրա-
 կէզ .
 Խանդակոծեալքն համբակաց ի ստեղծաբան ծով
 անծայր՝
 Շաղոպրիա՞ն , անշարժ շիրիմդ իցէ լապտեր բո-
 ցածայր ,
 Նաւաց փոխան անդ մըրցականս եւ խորտակեա-
 լըս քրնարս ,
 Անդ անրսպառ քերդողութիւն ճեմեցուսցէ զճո-
 վամարս :
 Օ՞ն , անգր ընդ բիւր հարեալ ընդ քար եւ ընդ կո-
 հակ սարսուասէր
 Երթիցէ եւ այս հառաչ գերեզմանիդ առ ըն-
 թեր ,
 Հանապաղօր ընդ ծովածին հրոսակս հարուլ
 բեկանել ,
 Հանասպաղօր եւ յարուցեալ ըզնոյն նուապաց
 առնուլ թել :

Այսպէս դու կեաս . այսպէս լուծցին վեճք
 մանկութեանս խաբանցուկ ,
 Ար յամենայն բարեացն այսպոյնս ինձ եթող
 ձայնս հառաչուկ :

1846

ՈՂԲԻ

Ի ՄԱՀ ԱՐՀԻ ՀՅՐ Ս . Ս .

Փանր է սրտի նդ սովորն երթալ ուղ յառաջ
 Եւ ոչ ի մեղմն համարձակի քնար յաւաջ ,
 Խաւարարդել յորժամ չիշխէ հոգի՝ զակն
 Յաննիւթ յուսոյն կառուցանել յարեգակն :
 Ժամ է դաղթել յանաշխարհիկ ծովափունս ,
 Յորոց զանխուլ գիշերախառն անդաճմունս՝
 Հնչէ հեղիկ ընդ գունն հոգւոյ ձայն թաղուն
 Իբր հեղեղաց հեռաւորաց խոր վանդին ,
 Մինչդեռ ալիքն յանդարձական իւրեանց խորս
 Իաւել ճըգնին զիս ի շաւիղս ահաւորս .
 Սարսեալ ի յայնց՝ որոց ընդ հուպ եղեց կուլ
 Ժամանակին հողմով վարեալ անդր անդուլ ,
 Արդ քառաթեւ ցուպ ընդ անութ պնդապինդ
 Յորձանապատոյս սիրով հայիմ սիրա ի թ ինդ :
 Ո՛վ ծով յամայր , անհետաղօտ մահացուաց
 Անջրպետաւ փոքու անօսրրս կենաց ,
 Ընդ ո՞ր , ասա , դարանակալ քո կայան
 Զերկարածուփ նաւն երկնաչու տարար զայն ,
 Յորում հանգչէր յոյսն իմ եւ սէր , սէր անքոյթ ,
 Յորմէ վրիպել անգամ չկարծէր այսպէս փոյթ .
 Արդ ե՛լ եւ նա կոհակակոծդ ընդ բերան
 Եւ խարբսխեաց յանկրկնաչուն հանդրբւան : . .
 Ո՛հ , հայր իմ , ո՛հ , զատա՞ր գու , չե՞ս այլ ի մէնջ ,
 Եւ ծարաւեալ սրտիցս ոչ ե՛ւս հարցի տենչ .

Չայն հատ , արա սրատասխանիկ , թէ մեռա՞ր ,
 Յանդարձակա՞նքն սիրելեաց անկեալ շար .
 Ասա . . . ոչ , մի ասեր , եւ զի ասիցես
 Որ մոռացօնս առնէ վըշտացս աղէկէզ : . . .
 Ահ , սրտերազմն է ահաւոր ի սրտիս ,
 Կէսըն սիրոյ կէսըն ցաւոց է վերիս .
 Թէպէտ ի բիւր ես անկանիմ քաղցր հընար
 Սակայն ամէնն է խաբ սրտի վայրասպար .
 Ըզգամ գիտեմ զի զցանկալիդ չունիմ հայր ,
 Որդիութեանս արեւակն էջ քեւ ի մայր .
 Յաներկեւան թեւոց զրկեալ ի հովուէդ
 Կորուսի զվտակն իմ եւ մարմանդ ծաղկաւէտ .
 Կորուսի զջերմն հողիդ հողւոյս հովանի
 Կորուսի զկեանս վանն իմ մաշեալ թանկագնի .
 Դու զիս յափանց կորզեալ նանիր կենցաղոյս
 Սուրբ սըքեմաւն ըզգեցուցեր զերկնից յոյս ,
 Դու եռադրօշմն ինձ կընքով տեառն Յիսուսի
 Բարձեր զխաչին փոքրագի բեռն ի յուսի .
 Դու զղեղեւեալ եւ զուրացող գարշասպարս
 Յանըստերիւրն կառուցեր ճանապարհս .
 Դու ինձ զանհասն յերկնից հեղեր օծութիւն ,
 Ըստորաքարչ մըտաց յեռեալ թեւ սրագոյն .
 Դու զիմ բեռինս սրտիդ կըշռեալ ի նրժար՝
 Եւ չասացեր երբեք՝ թէ ծանր եւ զրժուար .
 Եւ մինչ ի հուսկ յեաին յօգուած բերանոյդ
 Որ համարձակ չըթարգմանէր զիղձս հողւոյդ ,
 Կիսահագագ իսկ կարդացեր Ղեւոնդեանկ . . .
 Զի կայ քո երթ հանգիր խնդա՞ ինձ որդեակ .
 Եւ ես անկայ յայնժամ ի գիրկդ երերուն
 Օրհնութիւն ինձ գոչեցի , օրհնութիւն .

« Օրհնեալ », եւ քո բարբառեցան գուժք սրտին
 Եւ օրհնեցայ ի քէն յօրհնիս, ո՛հ, յեափն : . . .
 Խաւարեցաւ ժամն, եղեն սիրտք ոստաքանց,
 Եւ թափեցան հրճուանք հանգոյնրս ծաղկանց .
 Մտերիմք մտերմաց դիպեալք անտեսք դրնային
 Իբր ի մըթին գիշեր յանկարծ ցոլք հրային,
 Ոչ ոք իշխէր զաչս իւր ձրգել աչաց դէմ
 Մի մատրնտու թաքուն կըրից գոլ դժխեմ .
 Իւրաքանչիւր նստեալ ընդ յոյս զահ կշռէր
 Սրտահառաչ զարտօսրն երկնից ցուցանէր :
 Թփթեղնաթեւք ի բոց յուսոյն մաշեցան,
 Մաշեցան սիրտք մեր Աստուած, լէր օգնական .
 Հայր ես հանուրց, սիրես զհայցուած վասրն հօր
 Չիցէ՞ անցումրն բաժակիս հնարաւոր : (բաղդ,
 Այլ էր վճռեալ . ո՛հ հայր, վճռեալ քեւ մեր
 Եւ այնքանեաց ըլծից արար տէրն ապախա . . .
 Եւ ես տեսի զքեզ լըսնագոյն իմ աչօք
 Օրհասակից հայրագորովս անձկանօք,
 Եւ ընդ պահակ մահճացդ անցեալ միտք իմ յիս
 Տեսին ըզքեզ անպարտ յատեանրս հեռիս :
 Տեսի զքեզ ահ ընդ ահ աչօքրս տըխուր
 Մի առ մի զըռնչդ համարելով թաքթաքուր .
 Մինչ մանկըաւոյդ կուտեալ ըզքեւ գուժ եւ սէր
 Կեանս ի կենաց իւրոց ձօնել իղձ լինէր .
 Ըզճակատուդ ոմրն սրբէր քերտրն զով,
 Ոմն համբուրիւ ջեռուցանել ճըգնելով,
 Գնացուցանել այլ ոմն այնու զգարկդ հնարէր,
 Ոմն ընդ գրանդիդ աչաց զարեւդ որոնէր .
 Անդ եւ ես, ա՛հ, որոնէի զթուճդ սրտիդ
 Որ եւ զխնոյս բնաւ չըզգայի ճշմարիտ :

Եւ քո շնչեալ երկոցս ըզհետ շնչոցն այլ
 Ըզուենչ չորրորդ արձակեցեր լուտափայլ . . .
 Լուութի՛ . . . ծանեայ , ծանօթութի՛ դրժնդակ ,
 Հօրդ խնոյ մնայր ինձ անդ պահեսա լոկ դիակ . . .
 Ծըծըմբագոյն իջեալ ըստուեր շուրջ ըզքեւ
 Վարագուրեաց ըզտենչալին սուրբ զարեւ : . . .
 Արդ ոչ եւս ակն ի գէմքդ արկից տերունի
 Յորմէ զերկնից առհաւատչեայն առնուի .
 Ոչ եւս լըւայց գորովալից զայն բարբառ (դայր .
 Որ միշտ որդեակ իմ , որդեակ , ողջ լեր , կար .
 Ոչ եւս հեղցի՛ քէն զուարթութեանն այն աւիշկ
 Հանուրց սրտի ցաւոց երագրն բժիշկ .
 Ո՛հ , եւ վանդիւն մի չըմնաց հայր՝ ի ձայնեդ՝
 Որ զայնքան զիմ՝ հեղձամղձուկ բառնայր խէթ :
 Եւ իւ առնեմ՝ արդ անձկութեանս մըխիթար ,
 Առ ո՞ երթեալ գրտից սփոփանս եւ դադար .
 Ո՞ հանգուցէ զանձն որում դառն է հանդիստ ,
 Ըզհօր տեղի՛ ո՞ լըցուցէ յորդոյ սիրտ :
 Ո՞ կարդասցէ այսուհետեւ մեզ որդեակ ,
 Ո՞ զձեռասուն նրկատեսցէ յիս համբակ .
 Ո՞ կարկառէ զաջ որ գրգուեաց զիս մանուկ ,
 Զոր յետ հաստջին գիտեմ՝ հաստող եւ նեցուկ .
 Ո՞ ի մանրիկ բեռանց զթիկուճս իմ՝ թափեալ
 Ըզձանապարհ խաչին ցուցցէ հեշտաքայլ .
 Եւ ո՞ ծաղկուճս ինձ սփռեսցէ՝ նդ այն քնքուշ՝
 Սեփականեալ անձին ըզխտչն եւ ըզփուշ :
 Եւ խնդասցէ՞ յայամհետէ սիրտս այս տըղայ
 Թէ ունի հայր՝ ընդ որ զաշխարհ գին չըտայ :
 Կորեա՛ւ կորեա՛ւ որդիութիւնս եւ մեաւ .
 Սեաւ ինձ ածէք քող եղելոյս հայրադրաւ :

Գիտեմ երկինք շնորհեն յաջորդ Սուքիայ ,
 Մըխիթարեան սուրբ գահ այրի ոչ մընայ ,
 Այլ որդեկին հիգոյ կայցէ՞ բնաւ հայր այլ
 Որ հովանի տխեղծ հասակին իցէ լեալ : . . .
 Արդ ես լալով գերեզմանին յեց ի ծայր (հայր :
 Զբաղդն իմ անկեալ , զաստղն իմ խնդրեմ յիմըս
 Սահայն ըզմէ՞ սրգալ ըզհայր որ յերկինս ,
 Յե՞րբ ըզշիրմաւս հոսել վըտակըս գառինս .
 Ո՞չ քեզ տօնել մանաւանդ սիրտ անկ է զբաղդ՝
 Որ զհայր յանանց փոխեաց ի կեանս եւ յանախտ .
 Հինգ եւ տասն ամ մեռելութեանն եկն աւարտ
 Դառնակոչկո՞ճ ել՞ող ըզբանտ շունչն ազատ .
 Թերահաւատ զն՞ դեռ հայիս անձկայրեաց
 Իցէ՞ քաղցրիկ դիմօք թէ այսր առնէ դարձ :
 Այո՞ տօնել ըզքեզ հայր սլարտ եւ արժան .
 Շատ վըտացար , հանգիւր ընդ տեառն անբարժան .
 Մի՞ մի եւս գար ի ցաւալի կենցաղս այս ,
 Զի մի զըկես կրկին զորդիսդ եւ ըզհայս .
 Զորս ի յերկրի՞ յերկին կըրեա՞ զնոյնս ի ծոց
 Եւ զառկայծեալ բորբոքեա զմեր սրտից բոց .
 Յուցեալ մեզ հայր քեզ եւ Նախնոյն մեր նըման
 Որ գէթ սլատկերդ կենդանասցի սիրական ,
 Մինչեւ չքնաղ քան զոր թողաք հասցուք քեզ : . . .
 Ո՛հ , զն՞ չըկան այժմէն ինձ թեւք ի վերելս : . . .

Ի ՆՈՅՆ

Ա՛հ, թէ ի վայրս անդ յարազուարճըն խընդից
 Գուցէ վառել ջահ արբամախառըն խանդից, (նիս՝
 Բարձ գուարթնու զիմ սիրտ յանկեանց տապա-
 Զանկեալ բուրլառս զեղուն ի զմուռըն ցաւոց,
 Շարժլեա՛ ի թելս յուսոյ, սիրոյն հար բղբոց
 Ծրխեսցի՛ն սուգք ի կայծակունա ծիրանիս : . . .

Ո՛հ ո՛հ, քանի՞ դառն է, Աստուած, որբութիւն,
 Թէ եւ ի մահ հանապազ յայս արքնիմք տուն .
 Հեծեն հիմունք հողոց ընդ հայր այսգունակ՝
 Երկնաւորին շօշափական հայելի .

Յորմէ հրճուանք ի սիրտս ազգեալ լիուլի
 Գերակայիցըն զուգակիրք կարծէաք :

Իսկ դու գանձուց հողոցն հաստուած սրբոտադին
 Մըխիթարայ տանս եւ հայոց ձիր անդին .

Ա՛յսպէս երագս ի մէնջ սլացեալ թողուս զուրկ .
 Չեւ բողորեալ երկանցդ անմահ մի սլրսակ,
 Բանդ անհամբոյր, ահա ստիպիմք նոր տեսակ
 Սեւասարաս հիւսել սլրսակ, անկամ տուրք :

Օ՛ր բաղձալի, եւ դո՛ւ եղեր ապաժամ . . . ¹

Յաւխտենից՝ մահ չըստացաւ բարեկամ .
 Աքօղի քընար, քստմնասարսուռ կտրին լարք,
 Եւ քաւութեանց բաժակք լըցան արտասուօք,
 Բարեկենդան մաղթանքս եղեն անողօք .
 Ո՛վ երկնից կամք, քանի՞ հիգացս էք դրժուարք :

¹ Յաւուր տօնականի անուան իւրոյ հանգեաւ ի տէր :

Եւ տեսաք , ահ , եւ ընկճեցաք դառն ի տես .
 Զայս առաջին՝ հայր մեր չարար մեզ երես .
 Երբ բոլորեալ զիւրեաւ ի գող սիրա ի կուրծ
 Զանգիտեաք հայել յերկինս եւ յիրար ,
 Զարկ եւ զաչկուենսն դիտելով անդադար ,
 Թէ դարձցի՞ շունչն ի սահմանէն մազապուրծ :
 Բացեալ կային առ նովաւ մեր խսկ շիրիմք
 Եւ նրւաղեալ Թափէին իղձք մըտերիմք .
 Բարձր էր ի մէնջ երկնից վըճիւն անաչառ .
 Ա յիքան օրհասք սրբտից առ մին այն օրհաս
 Ոչ զօրեցին , ոչ այն ճըգունք եւ ըսպաս
 Գարձուցանել զարիւնն ի կէտ իւր սլայծառ : . . .
 Ո՛վ հայր , ո՛վ կառք եւ երիվարք մեր հուր բոց
 Ընդ տէրունի շաւիղ շարժիչք հոգւոց ,
 Դու վերանաս , եւ ճապաղին սիրտքս յերկիր .
 Հիմ երազես հայր . . . երկինք . քո են երկինք ,
 Վարուցդ անբիծ ճանապարհք բաց են վերինք .
 Եւ զի՞ գործեն սյսքան որդեակք վըշտակիր :
 Ո՞ տեսցէ յայսմ հետէ ի մեզ զորդիս իւր ,
 Ըզճեռասուենս , ըզգործս , արդիւնս խնամոց բիւր .
 Ո՞ սրբբեացէ զաչս որ սրբել չառնուեն յանձն .
 Ո՞ յամպամած դէմս ջահեացէ զայն ժրպիտ՝
 Որով զամէն վըշտաց ի մէնջ լուծեալ խիթ՝
 Թեթեւ ըզբեան խսկ գործէիր մեզ զանձանց :
 Երջանկութիւն զոր յորդեցեր՝ յորդէ զցաւս
 Բազմապատիկ ելոցս ի քէն հայրազրաւս .
 Ըզքէն խօսին ըզքէն առնեն աղդ համայն ,
 Ըաւիղ կենացս յոր քեւ մըտաք եւ ուամանց ,
 Զանից եռանդն՝ յոր վառեցեր դուն ըզխանձ ,
 Յարկք խմաստից՝ յաջոյդ օրհնէք աստուածեան :

Լացէք եղբարք, Լացէք մանկուանք զանողոյսն հայր,
 Որ զոսկեղէն նախնեաց դարու եցոյց ծայր,
 Որ զանմահիցն հարազատ գիւտ գիտութեան
 Մեզ եւ հանուրց հայկազանց եւ գիւրահուտ,
 Եւ զանգին տառս յամանակէն ալեծուսի
 Թափեալ ջրնջեաց եւ սերճագոյնս ի լոյս հան :
 Ինքն ի հովաքս երկանց արդ անց տարադէմ
 Յարժանաւորն անձին հանգիստ ի յՅդեմ.
 Պարտ իսկ հանգչել տաժանելոյն վասրն մեր,
 Որ ընդ խաչին իւրում կապեաց խաչս յոքունս,
 Եւ յիւրն ըզմեր ցաւըս հիւսեաց զինչ ծաղկունս.
 Յերկնից միշտ սեամս յածէր, առ գութ աստ
 յամէր :

Հանգիր օժեալ դըլուխ, հանգիր արդ յամայր,
 Հոլաթեւեալ հոգւովդ եւ անդ գոլ մեզ հայր.
 Ահա փոխեմք ի քաղցր ըզդառն արաասուս
 Յօժարագոյնք յայսմ հեռէ աչք ի յերկինս՝
 Ուր յաւելար դանձ մեր՝ ի դանձս առաջինս,
 Յոյց սերն հալեալ ծըխիմք անժոյժ անդրը կոյս :

ԱՌ ՎՐՈՅՐ

Ի ՄԱՀՈՒ ԵՂԲՕՐՆ

Աչք իմ հոսանս երկնէն հեզիկ արտասուաց ,
 Տրորի սրտիկս յարեան ճապաղ ամօթխած ,
 Եւ ի կարմիր թաղանթ ձրգի վարագոյր
 Ըզսեաւ դիմօքս՝ ո՛վ սիրեցեալդ յոգի Վրոյր ,
 Եւ ի յամպոց ստուերականաց թաղծութեանց
 Փայլատակունք սրբիւռ ցայտեն ի թափանց
 Երբ քարտ պարզեալ դէմ քո կանգնիմ սիրտ առ
 սիրտ ,

Աստուած վըկայ ի վեր , եւ վէմն անխըլիրտ ,
 Ընդ ոյր բեռամբ կալ անըզգայ ոչ է հնար՝
 Յորժամ զմարմնոյ կըցորդն հողւոյն լայ եղբայր .
 Այլ բեկանել մանաւանդ էր ինձ զեղեգն
 Ըզմուսայիս թաղուցանել արտօսը հէզ ,
 Որ զայնքանեաւ զանց արարեալ սրատեհիւ
 Ի տխրահանս յածի թեւօքն եւ սրտիւ .
 Սակայն թէ սիրտ նոյն հրամայէ զայս ի սէր
 Մի տըմարդի մի անողորմ զիս դըրեր ,
 Արտասուակցորդ թէ հեզաբար ի սրտէ
 Ըզխուռն մրմուռնջ լարս ողբական քեզ ուխտէ ,
 Եւ ի մածեալ քաղցրը սըրտին քո ի վէրս
 Իբր անըզգոյշ ու անժամ ժպրհի ձրգել ձեռս :
 Ո՛չ ո՛չ լալօնս կեղերջականս է ինձ պէտ
 Սիրեցելոյդ ազգել քաջիդ հողեպուէտ ,

Որ զսակն հոգւոց յամենեցուն կշուեալ յոյս
 հեղիկ նաւես ըզժրփանօք կենցաղոյս .
 Այլ օղբ մրրկին , եզերք ծածկին , հողմք դուան
 նաւհանգստին անհետ ընի նեղ բերան .
 Հայիս ըզքեւ , եւ մի առ մի , — ո՛հ իշխեմ
 Բզարտաբեկն յիշել արկած եւ դժխեմ , —
 Քո սիրելիք մի առ մի գնան ի թաքուստ ,
 Կամ թէ սակաւ դիտես նշխարս ինչ հեռուստ .
 Հաւատարիմ դու կաս ի յոյսն անմեկին
 Թէտէտ ոգի եւ սիրտ քաղի կաթողին .
 Այլ յարտասուացն խկ ի գրրգիւ սրագոյն եւս
 Ակն ի բարձունքս կարկառի յոյսն յանտես ,
 Որ ասէ զինքն խկ յարութիւն կեանք եւ յոյս ,
 Եւ կեալ յինքեան ոյց ի յաստեաց ետուն խոյս .
 Զի առօրեայ ըզգեստ մարմինն էր հոգւոյ
 Ի շնչմանէ մերկացեալ դոյզն ի հողմոյ , (բար ,
 Զորձ զոր թողուն աստ՝ կայ նմանեացն ազգա .
 Թէ հայրենիք մեզ պատրաստին յայն գաւառ՝
 Յոր պահ ընդ պահ նժգեհուժեան ի հովտէ
 Ելանեն իղձք հառաչանացս ի սրտէ :

Իբր ի ծաղիկ թերթ թերթ էղբարք մեր թափին
 Եւ յերթ նոցուն սուղ ճանապարհք մեր չափին .
 Եւ այնչափ հեաք թըւին ի հետըս մահուն
 Որչափ սրբտի վերք ցաւաղինք եւ սիրուն : . .
 Սակայն ասա՛ , Արոյր , ո՛չ յայնժամ ի հողին
 Ամահուժեան նոր իմքն հիւսք անկանին՝
 Յորժամ քեցեալ մահու զճանօթս առ ի մէնջ
 Յարքայութեան թուոցանէ կէս բաղմատենչ .
 Եւ սիրտ ո՛չ յայնժամ իբր ըզգունս ուռուցիկ
 Միով կապով եւեթ յերկիր մածուցիկ

Խունն ինչ ցնցման ակրնհալեալ կայ սրտորաստ՝
 Վերասլանալ ի յերկնաճեմն յառադաստ :

Մի մի արտօսր արուգ եւ սուգ ձօնեցին

Այլ երանիք որոց ի տէր նընջեցին .

Զի՛ բազմավիշտ կենաց հովտէս եղեալ դէմ՝

Առ նըպատակն հասին յազատն ի Սաղէմ . . .

Ո՛վ Սաղէմ սէր սրտի , Սաղէմ հոգւոց կէտ ,

Սաղէմ , ջնջան ցողոյ աչաց անձկաւէտ ,

Ե՛րբ սիրելիք թողեալ զկայանս այս արխուր

Ըզսիրելիան ի քեզ գտցուք ընդհանուր ,

Եւ ի կենդրոն բնաւիցս հասցուք ի յԱստուած

Որ մի մի կրէ զորդեակսն յայն կողմն աստեղաց ,

Մինչ լալահան եղբարքն ահիւ տան համբոյր

Չեռաց՝ որ զմահ գործէ կենաց հըլու քոյր :

Այլ դու հերիք համբուրեցեր զաջն հըզօր

Որ զարտասուսդ եհան ի թաթ շնորհաւոր ,

Երբ ընդ բնութի գործեալ զհաւատքըդ յօժար

Ըզլոյս եւ սէր զոյգ կշռեցեր ի նըժար .

Արդ քեզ Յիսուս՝ զոր ի յեղբարցըդ խորեաց

Շնորհեսցէ յուխտ բազմագոյն սիրելեաց .

Մինչեւ հնացեալ կապոց մարմնոյդ ընդ հոգին՝

Փոխամբ՝ եւ ոչ մահու բացցէ քեզ զերկին :

ՏԱՊԱՆԱԳԻՐ

ՄԿՐՏԻՉ ՄԱՆԿԱՆ ԵՐԱՄԵԱՆ

Որ ի վեժիա նըշխար թառամ
 է Մկրտիչ մանկանս երամ •
 Եւ թնեւտանս ամ ծնողաց իմ յոյս
 Աս ծնողն հանուրց դարձայ ի լոյս :
 Լաց որ զիս լան դէտ արձանիս ,
 Եւ աչք ի վեր՝ աուր երանիս :

Ի ՏԱՊԱՆ Հ . Յ . Ճ .

Մեռաւ Վեղալ • անմահ բնութիւն , խընդս գու •
 Ես լացից զիմ եւ նորին բաղդ մահացու :

Ի ՄԱՀ Յ՝ ՏԻԻԶԵԱՆ

Ընդէր չիցէ լռութիւն՝ ո՛ր տէր, ի գոյժ ողբոց բա-
ւական .

Ըզմէ՛ խօսի քնար աղերեկ ի սեւաստուեր վիմի
սնար .

Ըզմէ՛ սիրտ հեղձամըղձուկ պահանջիցի հառա-
չանս :

Առէ՛ք ոգիք սուրբ տրխրութեանց, առէ՛ք ըզսիրտ
զայս ջախջախ

Իբր ըզցամաք ճահիճարոյս եղէգըն կոր վայրա-
պար ,

Եւ արկէ՛ք ընդ փողս անձուկ ըզհեծութիւն սի-
րաբար :

Գեղածաւալ ի սահմանաց յանպարագիծն ի յու-
սոյ՝

Ըզվե՛հն եւ մեծ՝ յոր քոյդ փայլէր վրսեմական
մեծութիւն ,

Դառըն սարաք Ադամայ, յանկարծօրէն վերառ-
նուլ ,

Զայնքանեաց զուխա եւ ըզսէր սըրաից թողլով
ամայի ,

Եւ նըստատակ կանդնել աչաց ըզվէմ՝ արխուր՝ քո
էր տէր :

Ազոութիւնք հողխահրաշք փոխանակեն ըզկիրս
մեր .

Յիշատակ անմահութեանն զոր աստ նիւթեաց ,
 անդ ագաւ ,
 Եւ մահուն՝ յորմէ զերծեալ ինքն՝ ըղձանօթս
 իւր արգել ,
 'Նոր կառուցանեն , նոր ինձ բանան աշխարհ նոր :
 Ոչ եւս բնութիւն ծիծաղաճեմ , մարգագետինք
 եւ խաղք սուրբք ,
 Ոչ եւս ի ճախր օգտարիկ լուսադրնաց գընդից
 պարք •
 Երկիր փոխեալ յանմարդաձայն ամայագոյն ա-
 նապատ ,
 Եւ երկինք ոլորտացեալ խաւարազգեստ օթո-
 ցաւ •
 Դամբան ամենասպառ արձանանայ ի միջի ,
 Եւ սայրասուր գերանդւոյն յար շքրջածուն ար-
 բանեակ՝
 Ակրնկորեալ յանդութ բազկին յանխօխանակս
 յայս հարուած ,
 Ի պատուանդան փշրել շիրմին խոկայ զժանխ
 կենախուղ ,
 Ոչ զոք մեծին այն կորրստեան գըտեալ առիթ՝
 բաց յիւրմէն •
 Եւ հնազանդելն անմահ բազդին՝ դառն թըւի
 զայս նըւադ •
 Ի վեր ճիշտէ գլուխ ամբառնալ առ հոյս հո-
 գեացն անմահից •
 Թէպէտ հրեշտակք՝ այլ եւ նոքա աղէկիղին ի մեր
 գութ ,
 Կխախըրիիկ շուշանափայլ թեւօքն ի կախ վրա-
 նաձեւ •

Բշտապանաւ՝ որ զպահարան առաքինւոյն սլա-
հէ զհող՝

Եւ հիացեալք ընդ լաւութիւնսն վեհիմաստ եւ
հարուստ ,

Ոչ այնպէս մեք յերկրի զնա մեծ՝ որպէս նոքա
գրեն յերկինս :

Ոչ ի հովտաց հոտաւորաց դառաւօտինքս ծաղ-
կանց

Կամ ի մայրից մենաւորաց մեռելատիպ մանու-
շակ ,

Ու ի խրնկաբեր լերանց բարձեալ բերել զըմունն
հեշտալի ,

Սպիտակածղի մօտն ի յերեր պըսակահիւսք վե-
հաղնին՝

Զեղջերց վիմին մահասեղան կախել դրասանդ
արամայուչ .

Ոչ հեղամուռնչ հընչել մընչիւնս աղանեկաց
տատրակաց

Կեղերջական արտունջ տենչից վարութենեկին
որսադաւ .

Ոչ ցօղագին ահունս , ոչ ծոցրս ճապաղել կաթ-
նաբուխս .

Իւրաքանչիւր՝ ըզլաւութիւն զոր յոյժ ի նմա
սխրացաւ՝

Բոցափայլ անդ գրբեալ ի ծիր՝ եւ ելանէ սու-
հօգին :

Այլ ի շիրմէն սպիտակափառ շեշտեալ սիւնակ ան-
դամանդ .

Արիական սրբտին գուշակ ու անախատականն
հօգւոյ ,

- Եւ յերկնաձեւին սիւնադլուխ բոց ծիրանի սայ-
րասուր
- Շրրջածաւալ ճաճանչաւէտ հրրձրդութեամբ
անըսպառ
- Չանբաւութիւն տարփից սրբաին գեղասիրի
թուուցանէ :
- Իսկ դու վէ՛հ , որ ի զարմանա ամանակաց կառու-
ցար ,
- Որ ի դերեւ ըզփորձն հանցես զ'ի նմանութիւն
քո ճրգնեալ ,
- Ոչ ինչ կրսեր փառօք բարեօք թաղաղարդիցն
հոյակապ ,
- Աննըկուն սրբաիւ , մըտօք լայնատարածը թե-
ւոց
- Քա՛ջ ի բաց գըլեալ զնոքիմք , եւ իբր անհաս ի
բնաւից ,
- Մոռասցիս ժամանակաւ ի ծանօթից քոց ի
մէնջ :
- Ըզքե՛զ Յակովբ , վըսեմագոյնդ վըսեմափայլ ի
տոհմիդ
- Որ ըզկորանըս գիւցազանց թորդումական կանգ-
նէր տան ,
- Ըզքե՛զ՝ որ փառս ի հայրենեան եւ յընտանին
յաւելեր ,
- Մոռասցո՛ւք արդեօք՝ զի մի յիշատակաւրդ հա-
լիմք ,
- Թէ յիշեսցուք , եւ թալացեալք ոգի զողւով ա-
ծիցեմք :
- Վըսեմութիւն անզուգական օժիտ երկնից քեզ
բաժին

- Որով այսքան մեծացարդ եւ ըզգարմանս գրա-
ւեցեր ,
- Եւ նովին միայն նեղեալ ըզսիրտդ ամուր մաշե-
ցեր ,
- Զի թէ նըւաղ էր խմացուած քո վեհ՝ կէկը
արդեօք ցարդ ,
- Եւ ոչ յեռանդն ի յապաժոյժ հարեալ արեանդ
աղնըւի
- Այսպէս երագս առեալ զարձուածս ի սպառ
ծախէր զիւրրն բոյն •
- Վ ըսեմու թիւնդ այդ՝ հրամայէ եւ մեզ կեալ եւ
յիշել ,
- Զի մեծութեամբ ըզ մեծասցուք , եւ նըւաղեալք՝
մի մեռցուք :
- Ի սիւն միառացդ երկնահառոյց որ առաջիս մեր
կանդնեալ՝
- Դարձցուք սիրտք աղեկէզ ցաւօք լըցեալք ան-
բաւիւք •
- Ահա նկատեմք անդ զոյդ անուանդ տարրեալ
զհողւոյդ ուղղութիւն
- Ըզկայկայեալն ի քաղցր երկեղ եւ ի սուրբ սէր
հաստողին •
- Անդ ըզնասանձ ջերմն հաւատոյ՝ որում կացե-
րն թիկունք
- Զհարսին սրբբոյ կուսից ծնօաից զաղու ջրնջեալ
մարգարիտ ,
- Վ արատելոցս՝ ասպրնջահան ճարտարակտեալ
նըմին ծոց ,
- Որով բարձր ի գլուխ պանծայ եկեղեցիս հայ-
աստան :

- Անդ նրկատեմք աղգակեցոյց եւ աղգասէր հնարս
առատ ,
- Իւ առաջին՝ եւ օրինակ կաս սատարչաց հայրե-
նեաց •
- Անդ ըզճարտար եւ հնարագէտ ըզխրատ քոյոց
խորհրդոց
- Որ անվրէպ խոհեմութեան ու իմաստութեան
էին ձայնք ,
- Իցեւ թէ լսողաց միշտ ողջագուրեալ ըզնո-
սին :
- Անդ նուիրական հաւատարիմ սպասարկու-
թեանդ ըզվաստակ՝
- Յոր այլադէնն իսկ ժողովուրդ եւ անկասկած եւ
յօժար
- Սրբբազանի մերոյս կրօնի ողջմըտութեան կայր
սլատկառ ,
- Եւ ըզքոյդ մոռացեալ՝ զիւր տեսանէր փառս ա-
ճեցեալ :
- Նովաւ արուեստք յաջողէին նորոց դիպեալ դիւ-
րութեանց ,
- Նովաւ Տոպայ փոխաբերեալ կրկին հանձար
զարդարիւր ,
- Գիտութիւնք երագէին ի միաս համբակ՝ յա-
րահեա ,
- Խանդք վառէին , լեզու դառնայր յականակիա
իւր ի հուն ,
- Իմաստասէր պանծայր , քերդողն անմահանայր
զոյգ նրմին •
- Նովաւ սարդեալ ի ձրնձոց էջք սպիտակաջինջք
երկթերթիք՝

Զիղճըս սըրտից, զմիարս գիտնոց տառաարպեալ
ճնանէին .

Նովաւ կընիքք արքունականն անուան ի տիպ
վայելուչ

Հաճոյագոյն ընթանային ձեռաց ի ձեռս ի վա-
ճառ .

Նոր իմն հրատոյր լեալ մըթերից գալ համար-
ձակ ի Քաղաք :

Անդ նըկատեմք ըզմեծութիւն հոգիազգեաց քո
գիմիդ ,

Ի բարձր յունից կամար՝ զոգիդ վերամբարձիկ
ծանուցեալ ,

Եւ ի լայն լիճըս լուսոյդ ըզնուրբ սրտիդ ըզգա-
ցուած .

Ըզսարզ ճակատ զանծին զանգէտ խորշոմերես
կընճըոյ ,

Ում մեծարանս հրամայէին սիրոք տեսողաց ի
նէրքուստ .

Ժըսիտ մանր՝ այլ անժըլատ բարեկամաց մըթի-
թար ,

Եւ անամարոս բրբաց շանթիք անուղղայից հար-
թուցիչ ,

Յորմէ ոսոխք անդամ անձանց զընելով մեզ պակ-
չէին :

Անդ եւ ըզսիրտ ազամանդեայ ի հարուածոց կեն-
ցաղիս՝

Որ չետ տեղի յերեսնամեայ վիշտ , արհաւիրք
մահացուաց .

Ոչ ոխութիւնք օձաճասուկ ըզգահոյիւք գաղ-
տաշուրջ ,

Ոչ ժանտ համբաւ քսութեանց , զըկմանց , հա-
 լածանաց եւ մահուան ,
 Եւ ոչ շողեալ սուսեր՝ յադ կէս արեամբ կիսոյն
 ծարաւի ,
 Որ մահաբեր ի մահահոտ զընդանին խորշ կար-
 կաւեալ
 Ընդ խաւար խարխափելով խընդրէր ըզգլուխ
 վեհազնին ,
 Մինչ ցուրտ աչօք մերկանայր նա զլանջ՝ յորմէ
 մահ իսկ չըրտեաւ .
 Ոչ բեկաւ ոչ կործանեցաւ սիրտ հըզօրին , այլ
 ըզգանց :
 Ըզքաջողգած զայն նրկատեմբ վեր քան ըզբը-
 նաւս՝ ըզսիրտ մեծ
 Որ առ աղէտս իւր ասպառաժ՝ այլոց թըւեր
 բամբակեայ ,
 Զի զնոցայն ամփոփեացէ կիրս՝ տալով զիւրն
 ըսփոփանս .
 Որ զընտանեացն համօրէն սիրտ յիւրում կըրէր
 ի սըրտին :
 Անդ , ո՛հ աղէտք , ո՛հ մորմոք , դուք զերանու-
 թիւն ձեր տեսչիք
 Վըշտահար կըցորդք կենաց , անձեռընհասք ի
 վայելս .
 Եւ դուք փոքրիկ նըմանութիւնք նըմին աղէք
 քաղցուենիք ,
 Զուարթածաղիկ մանրր մանկուէք , օրիորդիկք
 հեզանազք ,
 Որոց յետ մօրդ ըստեանց՝ սընուէդ քաղցրիկ էր
 սէր ծընողին ,

- Ձհայրենի ծոցոյն գրգուանս, զհամբոյր շքր-
 թանց, զաչս աղու,
 Սիրուն որբիկք, ո՛ւր յայամհեակ գրասնկցէք՝
 բաց յերկնէ :
 Եւ դուք համայն քորք եւ եղբարք, եղբօրոր-
 դեակք քեռորդիք,
 Որք ի քաջին սպաստանեալք յամբարձուղէշ
 հովանի
 Կեանս հեշտագոյն համարէիք վարել՝ նա կեալ
 իսկ նովաւ,
 Ձի՛ գործիցէք անմրխիթարք եւ զուրկք յեաին
 համբուրից .
 Կեանս ընդ կենաց նըւիրիցէք . մի, խնայեսջիք
 յարեւ տանդ :
 Ի վրսեմն յարխանրն հայեսջիք սիրայնոյդ
 Ի հաստարմատն հաւատովք սիւն ծիրանածայր
 բոցավառ .
 Անդ բոցակէզ սիրա Յակովբայ բառնայ բողոք
 ընդ եթեր,
 Անմահաբար ձեօք խարուկեալ յարքայութիւն-
 սրն վերին :
 Սպասահարուք վէհին՝ լերուք վէհս, հարէք լացս՝
 այլ վրսեմս,
 Ի բարձր հողին անդ ի բարձունս ցընցըղկելով
 սրբաբուխ .
 Սիրան այն երկնիւք եւեթ պահաս էր, արդ լըցաւ
 լիացաւ .
 Թեթեւութեան երկրիս չէր մարթ տանել ըզնա
 'յնքան փառօք՝
 Ձոր դուք եւ աղքն եւ թագաւորք հանդերձէին
 յեւեւելս .

- ՁՅակովբ՝ երկինք առին, միակ արժանաւոր
վարձք եւ կայք :
- Ձըրկեցայք ո՛ սիրելիք, այլ կորուսէք ո՛չ զՅա-
կովբ :
- Կենդանի է նա ի սիրտս, ի միտս, յատեանս, ի
տաճարս,
- Կենդանի՛ ի գոգս աղքատաց, յերախտապարտ
բիւր անձինս,
- Կենդանի առ աղգայինս եւ առ օտարս եւ առ
վէպս :
- Եւ ի քէզ մանաւանդ տուն Մըխիթարայ կեայ
Յակովբ
- Որ սրատուեցար լինել յետի նմա ճեմարան հա-
ճութեան,
- Որ ծանեար քաջ զանհամեմատն յակընկալիս
համազունս,
- (Թէպէտ աւանդ յոյժ տարածամ եւ վաղ եւ գուն
զըրկեցար),
- Եւ ծանուցար քաջ մըտերիմ եւ սիրեցար ի վեհէն .
- Որ քան զամէն սիրելիս նախ արբեր զբաժակ
դառնութեանն,
- Եւ նախըսպաս հարկանելով յուլարկաւոր մեծ
հողւոյն,
- Յորչափ ըզնոյն հողի յեթերն ի վեր գիտես ընդ
անմահս՝
- Սեամս վերելից նորա զքոյդ յարկ գիտելով միշտ
պանծասցիս : —
- Յիշատակ քանցր եւ տըխուր, անմահացար .
լուռ լիցուք :

Ի ՄԱՀ

Հ. ԵՂԻՍՅ ԹՈՎՄԱՃԱՆ

Յերկրէս գնացից՝ ոյր եւ օթք անցք են պատիրք ,
 Անցեր գնացեր Հայրդ Եղիաս եւ գո՛ւ լռիկ՝
 Ի յաւիտեանց ժամագրութիւնս անդր ի վեր .
 Յանկալի կայք , այլ անջատմանն ազգու վեր .
 Գեր յՈլիւմպեայ վայրաց քաղցր արդ վայր հայիս
 Ուր զՈլիւմպեայ երգիչս հաներդ ի Մասիս .
 Եւ առ սրբութիւն որ քեզ ծածկոյթ է վիմոյն՝
 Ըզհովերոյն , հերոնիմոյն եւ Քերոյն
 Քեզ բողոքեալս յերկրիս յուսոյ յիշատակ
 Եւ արամեան տառից պայծառ մըրցանակ . (կիր .
 Այլ յԱստուած ակն արկեալ մերժես դու զեր .
 Հանպա ի հուր կառս հումանուանդ ել թըռիլ :
 Թըռիլ , եւ զհեա թօթափելով կայծակունս
 Յամաքեցո՛ զորակացեալ ցօյն յաչկունս .
 Կամ պատառեալ աստուածակիր մաշկեկաւ
 Անցո՛ նդ արտօսր ըզդեղեւեալ յոյսն անձկաւ :

Ի ՊԱՏԿԵՐՆ ԵՄՄԱՅ

ՎԱՂԱՄԵՌԻԿ ԴՍՏԵՐ Ա. ԱՂԱՆՈՒՐԱՅ

Խօսեաց դիմակ տարփալի
 Աչաց , մըտաց եւ սրտի .
 Է՞ր թէ զուարթուն՝ զհոլաթեւս
 Աքողեալ ի մէնջ եւ ծածկես .
 Թէ մահացու՝ հիմ՝ զերկիր
 Մերժեալ բըբացդ աշխոյժ հիւ՝
 Շեշտ ընդ շաւիղ եթերին
 Ձհեա անմահից դեղերին :
 Երկրածընունդ զքեզ հաղիւ
 Վըկայեն տխաբդ այդ աղնիւ
 Այգուց ամսոյն պէս թեթեւ
 Կալեալ զհոգւոյդ սուրբ արեւ .
 Իսկ շողք փայլմանցդ այդ Ե՛մմա
 Որ յարեւուդ Եդեմայ՝
 Յանձինս հարեալ մեր թափանց
 Յականողաց լուսապանձ ,
 Որոց խայտայր բարձր ի դէտ
 Սիրա քո վեհից ըղձաւէտ ,
 Նոքա զերկայն , աւանդ մեզ ,
 Յուսացուցին քո վայելա : . . .
 Հընդիկ ծովէն ցըհանդրին
 Ծաւալացան աչք քոյին ,
 Եցոյց երկրիս չորս ոլորտ
 Ըզփափկութիւն իւր բոլոր ,

Եւ ոչ գրտաւ ի խոնարհ
 Բարձու սրբախիդ այդ դադար •
 Ոսկեծրղի և երկնաճեմ
 Խընդրեցին թեւքդ օդ վըսեմ,
 Վակժոյժ ի սիրտ եւ յաչկունս՝
 Յայլ սէր ուղղեալ ի բարձունս
 Յանկարծ զուարթնոց լեալ գողօնս
 Յերկնահանդէս մուծար տօնս :
 Հասակ փափկիկ իրանիդ
 Նրման ծաղկին դեռփըթիթ
 Անկեալ ի դաշտրս հընձոց՝
 Նա եւ զմահուն պըճնեաց ծոց •
 Եւ ի ճաճանչ շնորհաշուք
 Յանմահ հոգւոյդ խուսափուկ՝
 Բողոր փայլէր սըխրալի
 Յարթնութեան քուն սիրալի :
 Աչք կէս առեալ վարագոյր
 Թըւէր զնրնեւ զհոգին իւր •
 Եւ ըզըքնաղն իւր աման
 Չկամէր թողուլ լոյսն ունայն •
 Յասպարիղին երկբացիկ
 Դեռ խաղային բացխըփիկ
 Բարեաւ մընայքն եւ համբոյրք •
 Ո՛վ, զե՛ քաղցունք զե՛ տըխուրք •
 Եւ յերեսացն ոսկեգոյն
 Կաթէր ժըպիտ մի հոգւոյն •
 Թերթք նրունենեացն անուշակ
 Հարեալք ի գոյն մանուշակ
 Չանանց գարնանըն նորուստ
 Յուշ ածէին ի հեռուստ :

Մահ էրջանիկ մահդ Եմմայ
 Կոյս օրիորդ Սաղեմայ .
 Մահ ծանրակիր մեզ անկաւ
 Քաղցրիկ տեսոյդ կեալ անձկաւ :
 Սակայն ի գիրկ թէ ոչ եւս՝
 Սիրով գրթոյն էջ ի թեւս .
 Ո՛հ , էջ սրբալից յօթեւանս
 Մըշտապաշտօն ի սեղանս ,
 Ուր յիշատակ քո մաքուր
 Բուրէ զողձիցրս զրմուռ .
 Է՛ջ առ ամէն որ ըզքեզ
 Լացին գրթով աղեկէզ ,
 Եւ որ ի վէմդ եւ յեթեր
 Յար փոփոխեն զսիրտ ու աչեր :

Ի ՉԵՌԱՍՈՒՆՍ

Ո Ր Ք Ո Չ Ե Ի Ս Ե Ն

Ընդ միգամած քողով երկնից դալկագոյն
 Ընդ որ հազիւ շիկնի վատեալ արշալոյս ,
 Ի սաւառնել ցըրտասարսուռ աշնայնոյն
 Յանհովանի միայնութեան երեկոյս ,
 Յաղգել հովոյն ի դիմիս ,
 Ո՛հ , ո՞ր քսամուռք ի սրտիս
 Եւ յիշատակք զարթնուն յիս .

Յոր անցանեմս՝ անցին ծաղկունք քան զիս վաղ ,
 Խորշոմերես թողեալ եւ մերկ ճանասպարհ՝
 Յորոյ յանկիւնս հողմնավարեալ աղաւաղ
 Կրմախք գարնան կաղան գըլոր եւ գալար ,
 Մինչեւ յանել որոգայթ
 Տարուբերեալ գայթ ի գայթ
 Լուծցին ի ցուրտ ի հողդ այդ :

Փոխան եղկիկ ցողոյ զգամ պաղ եղեմունս ,
 Ընդ հովանեաց դալարի՝ ստուեր հողանի ,
 Կակուղ թերթից փոխան դժնիկ ընդ շրթունս ,
 Ընդ առ ի կեանս վերելից՝ էջք տապանի . . .
 Ո՛հ , ո՞ր կայտառ գարնան բոյս .
 Ո՞ր մայխսին կարմիր լոյս .
 Ո՞ր իմ սանից կենաց յոյս : . . .

Ըստուերաշուք աւուրց իմոց նուաղելոյս
 Ծայրակարմիր լուսակարկաջ առաւօտ ,

- Եւ անբարոյցս երեկոյի զնոսա լոյս ,
 Եւ քնարանիս կարծէի ճրագ ընդ աղօս .
 Ու տհա նմանեալ փայլական
 Շողեալ շեղեալ եւ սլացան
 Եւ այլ ոչ եւրս դառնան :
- Ո՛հ ոչ եւս , ո՛հ ոչ եւս . իմանա ապառու՛մ . . .
 Այլ քաւ յինէն ոճիր եւ խօլ սօսափիւն .
 Յիմ՝ ձեռնընդելս աղէկիղեալ ես ջեռնում ,
 Եւ բռնագոյնս ըզգամ՝ նոքօք բաբախիւն .
 Արդ ըզգամ իմ ըզնոսին ,
 Արդ քաջ դիտեմ զիս նոցին ,
 Արդ սիրելիս սրտագին :
- Քաղցր արգարեւ , եւ քանի՛ քաղցր էր ինձ տէր ,
 Ըզգէմս՝ զոր ես իսկ աննրմանս՝ մարդեցի
 Անբրծութեամբ նախատրպիդ դող սրտակեր ,
 Եւ զառ ի քէն ձրդեալ գիծս անդ մատնացի
 Հայել դիտել սխրանալ ,
 Աւ նոյնս ու առ քեզ յար դառնալ
 Ու զմութս ի լոյս մերկանալ .
- Քաղցր ինձ զըզգաստ հոգւով՝ հաւան լրծակից
 Խոհեմացեալ բարգաւաճել իրանանց ,
 Արիական կորով լանջաց լայնալիճ ,
 Վարդք երեսաց եւ տեղք աչաց կայծականց ,
 Խաղալ կայտուել ողջասուն
 Երիտասարդըն դասուն՝
 Յոր ներեցերըզ նոցուն :
- Քաղցր ինձ իմոցըն պատահել անադան ,
 Զերկչոտ դիտել համբակն անահ բարեկամ ,
 Յիշել զիմ քիրան ինչ եւ զնորին ցօղ ական ,
 Եւ յերկոցուն խայրիս հրճուեալ միակամ՝

Հօր հանգուևակ առ որդի
Մի հաղ եւս տալ կաթողի,
Ողջոյն՝ յերկրի պանդխտի :

Այսու յուսով լեալ ժամադիրք ի հրաժեշտ . . .

Եւ փութացաւ բերանաբաց դերեղման .
Հեաախազաղ հարթեաց զհասակսրն պարկեշտ ,
Եւ ի վերայն նըստաւ անլոյծ մահարձան .

Ոչ առ ժըմիտ լոկ դիմաց
Նա եւ զլացաւ յարտասուաց .
Կախոյց ի ծոցն իւր անբաց :

Յամենայնէ զոր տեսի՝ ոչ ինչ մընայ .

Եւ որ դիտէր զիս խայտակն աչք նորալոյս՝
Յոր յոյսք կայտառք եւ խինդ խաղայր յարակայ՝
Քան ըզգիշերն իսկ անէակ անց եա խոյս .

Խոյս եա փայլակն անորոտ
Դեռ ի կենացն առաւօտ
Թողեալ անգիւտ ինձ կարօտ : . . .

Ո՛հ , երբ զլարբան յիշեմ՝ ու Ալեկն իմ մանուկ ,

Առատալոյս աչիունք , շրթունք ճոխաբանք ,
Ըզհեզդ հաւուկ , եւ զքեզ Բուժիկ խարտիշուկ՝
Սեաւս ի սրբախա բանան վիհս հուր հառաչանք .

Եւ ճարակեալ ինքնատապ
Ծախիմ՝ ծըխիմ ի խուճապ ,
Ու ի բաց վաղեմ հապըշտապ :

Բոց վերաւոր սիրտս ի հեռուս թափանցիկ

Ընդ բովանդակ անցեալ հանդէս կենցաղոյս ,
Չանխուլ վիմօքրն ճապաղեալ պինդ սաստիկ՝
Եւ յարհաւրաց անգամ մահու թափէ յոյս ,

Պաշտէ զտեղին ատրորակ
Յոր սեւեռի պընդափակ
Յաւերթութեանն յիշատակ :

Յաւերթութիւն ու անմահութիւն, սուրբ իմաստ,
Գու զցաւս ցընդես դու լուծանես զարտասուս :
Ոչ եւս հիւժեղ նըշխարս մանկանց խնդրեմ աստ
Այլ գերագոյնս ոմանս անձինս երկնաչուս՝

Չունելով բիծ մի մըրուր,

Շողալ փայլել սուրբ մաքուր

Քան զարեւ յամպս յիս արխուր :

Քանին արգեօք, ո՛վ սիրելիք, դուք ծաղրունս

Արձակիցէք արդ ի կայից վերնապար՝

Առ ցաւս, յորոց կամօք կարթեալ ի տոռունս

Տեսանիցէք ըզկենակիցս ապիկար,

Որք աղիտից իւրեանց գէտ

Եւ ձեր բաստիդ անհանգէտ,

Տակաւին լան ըզձեր հետ :

Քանի՛ արգեօք երջանիկք դուք զի մեռայք

Ըզբաղցրաթոյն կենացս առեալ լոկ ճաշակ,

Եւ ընդ յորձանս անդնդախորս յոր անկայք

Թեթեւակի թռուցեալ զառոյդըդ նաւակ՝

Յափնէ ի յափն յայն հասէք՝

Յոր ալէկոծք ճըգնիսք մէք

Խիթալով դո՛ւ նաւաբեկք :

Ձի՛ սքանչելի կորզել ըզսիրտ վաղ կանուխ

Ի փառամոլ եւ յընչաատենչըն խայծէ .

Փակել ըզմոռոս առ մեղկութեան օձ կակուղ,

Ձերծուցանել յերկար հողոց կասկածէ՝

Որ դարանեալ զարամուր

Ըզկարծեցեալ կեանս ամուր

Կըրծեալ կոխէ առաթուր :

Այնքան չարեաց փոխան՝ զոր ծանր է կըրել

Եւ ծանրագոյն տալըն կըրել առ սիրտ այլ,

Չիցէ՛ն նըւաղ չարիք , կամ լաւ եւ վայել՝
 Զանպարտ կենաց թողուլ մի բիծ ակրափայլ ,
 Մի յիշատակ սեւորակ ,
 Զառկայծ մոխրոյն սրահստանակ՝
 Ըզցերեզմանն այն երազ : . . .

Դագարեցէ՛ք դառնահոսան արտասուք .
 Բոց սիրակայծ ի կոյս շիրմէ տան նըշխարք .
 Խարոյ՛կք սըրտիս նուաղելոյ՝ օ՛ն վառեսցուք ,
 Օ՛ն անդր աչաց աղաղելոց քաղցր ամբարք .
 Օ՛ն անգր աստեղք ու արեգունք ,
 Օ՛ն անդրը ձօնք եւ ծաղկունք ,
 Օ՛ն անգր համայն իմ սիրունք :

Քաջալերեաց գողտր եւ դողգոջ յիշատակ
 Որ հողեխառն յածիս յերկիր եւ յերկին .
 Դանդաղելոյս քայլք քեւ սընդին համարձակք
 Ընդ փըշուտ հեաս՝ յոր վարդ թափեն ցողապին
 Իբր ի պսակաց կիսայեռ
 Իմ ձեռասունք վաղամեռ ,
 Մըշտամանուէք սրտիս ծեր :

Ո՛հ , ես չասեմ զնոսա ծաղկունս վաղանցուկ
 Իբրթողս կենաց գիւրախորտակն ոլորոյ ,
 Այլ ցողաթուրմն յայդու քաղեալ փունջ փա-
 փուկ՝

Եւ անշոշափ ի ծոց ծածկեալ մօր սիրոյ ,
 Զի կուսափայլ անթառամ
 Յարիցեն յօրն յամերամ
 Աստուածութեան համասպրամ :

Ի ԲՈՒԺԻԿՆ

Վ Ա Ղ Ա Մ Ե Ռ Ի Կ

- Ի գարնայնում պահուց խաղաղ նորալոյս
 Յառաւօտուցն սպրիէլ՝
 Նորափրթիթ կենաց զիւրդ քաղցր է յոյս •
 Բնութիկ , զի՛ քեզ ըշտապել :
- Ձի՛ քեզ՝ խոնջեալ ի խուն շրջան ծաղկածիր
 Ամիսփել զոտս յանկարծու ,
 Հայել ընդոտս ի վեր , խոտել զերկրի ձիր
 Թմբրել թմբիրրս մահու :
- Ա՛հ ա՛ հատաւ սիրտ Բուժկան ի՞ղձ ի բարձունս ,
 Վա՛ջ ինձ խարտեաչ արեւուն •
 Նոր այգածինս ետես , գիտաց նոր դարունս ,
 Բարեա՛ւ մընայ մանկուծիւն :
- Ընդէր հայիք յառերեւոյթն այն պատկեր
 Եւ հիմ՝ ի շունչն այն բեկբեկ •
 Քանի՛ վրսեամբ բարբառի սիրտ անեպեր
 Ի հուսկն ի հեղն ի հեկեկ :
- Ո՛չ տեսանէք զանանց տուրնջեանն արփենի
 Զահեալ յանոյչն յայն աչկունս •
 Նա ուխտադիր ընդ լաւագոյնրս լինի ,
 Չլրսէք ի հեղն յայն շրթոունս :
- Ո՛վ զի մեզ դառն այդ քաղցրր քուն քո Բնութիկ ,
 Որ լոկ անսասդ առ Յիսուս •
 Քանի՛ մեզ ծանր են թիւք հողւոյդ անուշիկ
 Որ ոչ եբարձ սեաւ մըրուրս :

Ո՛վ գեղեցիկ սիրոյն հաստուած դեղանի •
 Նախանձաբեկք քոյդ բասաի
 Բիւր քեզ Բուժիկ կարդամք անժամ երանի ,
 Քեզ երանիս հաւասաի •

Այլ ընդ հրեղէն հառաչանաց ճանապարհ
 Ելանէ զքէն մերըս բան •
 Յողատարաւ քո յուշն ի սիրտս առապար
 Յայտէ գունակ կայծական :

Քանի՛ խարոյկ ի խորս սրտից կիողու քեւ •
 Ծառացաւ ծուխ մեր յեթերս •
 Առ մահ մաղթել թ' առ հրաժարեալքս արեւ ,
 Անգիտանամք մէք զառնելս :

Լըսե՛ս , եղբարք զեղբայրդ և հարք զքեզ որդեակ
 Կարդամք առ կոչ մեր հըլու •
 Մի՞ քան զՍահակ լըսես անզէն դու զենլեակ ,
 Իջանէ սուրն , եւ կանս դու •

Կաս դու անթրոււող , աչք սիրտ մարդեալ ընդ երկին
 Ի խըշտեկիդ ցաւակոյտ •
 Հուրջ շողայ խիստ կարոց կենացդ այդ անգին ,
 Խոժոռիմք մէք , քո չէ փոյթ :

Դարձիր աղէ որդեանկ սիրուն , տես ի մեզ •
 Եհաս յուսոյն ժամագիր •
 Հալածեցան հարթեցան բուքք ցրտագէզ ,
 Նորոգ շնչեաց շունչ յերկիր •

Եհաս դարուն , գըգուէ զմարմանդ մեր եւ ծառս ,
 Ծաղկէ խընձորն եւ մամխի ,
 Ուռք արտասուեն եւ ուռենեաց կազմի վարս •
 Սարեակ սիրով կըղկըղի •

Հողան այերք , իջանէ ցող հանդարտիկ ,
 Բոյր եւ դալար արձակի •

Համայն դարձեալ ի կարգն անկեալ դայ ծաղիկ .
 Մեզ մէն Բուժիկ չըծաղկի . . .
 Լուծան եւ թուխ կնճխոք ի ժայռս ապառուս ,
 Կրուի կանաչ ի դօս դէս .
 Զարթնուն բնութիւնք թմբրեալք յանլոյս լու-
 տուերում . . .
 Բուժիկ , միայն դո՞ւ նրնջես :
 Դո՞ւ մեզ միայն եւ վաղանցուկն եւ չըքնաղ
 Իցես ծաղիկն այն ծաղիանց ,
 Յայդու փթըթե՛լ բերկրե՛լ բաւե՛լ վաղ ընդ վաղ ,
 Եւ յերիկուն՝ անկ եւ անց :
 Ա՛հ , Բուժիկ , դու ո՞չ յարիցես այլ բրնաւ .
 Զարձակիցես կենաց բոյր .
 Եւ ըզխամբեալ եւ զանկելովքս զիմաւ
 Ո՞չ հարցի զուարթ քո համբոյր :
 Եւ յորժամ սիրտ յամենայնէ անապաա
 Անձկաւ սիրոյդ ծրփելով
 Ի զուր կոծեալ բախիցի 'նդ վայր յուսահատ ,
 Ո՞վ լըցուսցէ զխորն այն ծով :
 Ո՛հ , եկ բացիր Բուժիկ , բացի՛ր մեր ծաղիկ . . .
 Այլ մի , ո՛հ , մի 'նդ վայր յերկիր .
 Բացիր փթըթեաց նորաբողբոջ 'նուրբ ծղղիկ
 Յօդեալ ի աունկն խսկակիր :
 Ահա փթըթեալ Բուժիկ ի շունչ նպղելի .
 Թըմբիրք մարմնոյն լուծանին .
 Մերկանան կեանքն հանդոյն ամառոյ ապրելի ,
 Օդք նրբադոյնք ծածանին .
 Զուարթունք դարուն գործեն Բուժկանդ իմ հա-
 մեսս
 Սարեալ ի սէր փեսային ,

Վառել վարել ի վարդաթեւս հարսնադդեստ
 Ի յառագաստ երկնային : . . .

Ահ, սրբոտահար ական թօթափդ այդ հուսկ մեզ՝
 Զխորդ վայլէ դերարիին

Լուսով յոր ինքդ համբուն կերտեալ սրբակէզ
 Երկնանանս, աչք մեր նուաղին :

Կարմիր հողեակ, քանի՛ ճեպիս բարձր ի մէնջ
 Ընդ ճանապարհս ճերմակ .

Դարձիր հայեաց, զակրնկառոյցքս ի քո տենչ՝
 Տես յոր լքեր խոր եմակ .

Հայեաց յուրուդ՝ յորմէ զբարձեալդ յուղեմք խաղ
 Իբր յանջրդուջ հետս առուաց .

Հայեաց յոր մեզ թողեր նըշխարքրդ խաղաղ
 Ճարակ անյագս արտասուաց :

Տես յարտասուս զոր յանարտասր աչքդ անբաց
 Հեղեալ՝ կրնքեմք խաչափակ .

Տես, եւ դու զհուսկ ի մեզ ու ի սա զհեռագնաց
 Նըշխս հողւոյդ՝ հար անքակ : . . .

Իսկ դու՝ որ մասն ի լանջ հարեալ ներդաշնակ
 Կոչես՝ Յիսուս՝ ըզտըղայս .

Ընկա՛լ եւ դու զգառն ոգւոյս մասն անուշակ,
 Եւ քաղցրացո՛ զոր մընայս :

ՄԻՀԻԱՆ

Յ Ա Յ Գ Ա Խ Ո Հ Ք

Ի ՏԱՊԱՆ ՄԱՆԿԱՆ ՄԻԱՆՁԻՆ

Ա.

Կիսով սրբախա առ ըզքընար քո տըխուր ,
 Դարձ մանկութիւն յամանակին անել կուր .
 Առաւօտուց զըւարթ այլ զինչ պէտք անձին՝
 Որոյ սահեալ զբօսանք կենացն եւ անցին .
 Զխարդ զաղիս կայտառ տիոց լարէ յերգ
 Ոյր չիք նըւագ՝ բայց տրամութեան լոկ եղերք .
 Որ թինչ ի դրախտ յուսոյ ճեմէր յոսկեծիւղ ,
 Եւ բարդաւաճ սիրան իբրեւ մուրճո նորընծիւղ ,
 Յանկոխ աւերս անկաւ մահուն սեւադէմ ,
 Ի քոս շիրմաց դրոշմել համբոյր յեղբօր վէմ :
 Մահ՝ որ յայդուն կենաց յանկարծ ճեպի՝ մայր
 Տարաւ զՄիհրան ի խաւարին իւր ի վայր : . . .
 Տարայք եւ զիս ուր վէրք սրբախն իմ խամրած
 Ի յանդաճմունս խաղաղական գիշերաց ,
 Նըստիւ ի սուգ յեղանակել ինձ աւանդ
 Ի սիրտ համբակ եւ ի քընար աղաւաղ :
 Ո՛հ , ցօղեցէք ցօղեցէք դառն արտասուք ,
 Յահանողացս ի ծոց՝ շաւիղ տրամասուգ .

Նրման ցօղոյն՝ զոր հեղաշունչ յօդ թեթեւ
 Յոստոցն ի վայր կաթի նոճի անտերեւ . . .
 Շիփող մահուն հարեալ յեղբայր սիրանունդ
 Դեռ որոտայ ի լանջս համակ սըրտաթունդ .
 Արիւն եռայ ջերմ յերակունս ապրտամբ .
 Մեղամաղձին ծաւալացեալ ի նուրբ ամբ . . .
 Վահք եւ եղուկք կոծոյ շնչոյս սըրտակէզ
 Յառաջեցին թրուան Միհրան իմ առ քեզ .
 Յաւոց զրմունն անոյշ առ քեզ բազմահոծ՝
 Կենդանական ծրխէ սըրտիս խրնկանոց .
 Եւ աստեղաց ու արեգական անկարօս՝
 Լապտեր սիրոյ առնէ զշիրմաւդ առաւօտ . . .

Բ

Փանրաբեռնեալ սրգով ի ժամրս լրօին
 Էր ինձ գընալ ի լուրջ ըստուեր տաճարին ,
 Ուր սօսաւիւնք հընչեն ծայրից բաղեղանց ,
 Յաւիտենից քընարան հարց եւ թոռանց .
 Խաւարանայր աճէր պատէր թուխ գիշեր
 Ըզտաճարաւ միայնութեանց սըրբանուէր .
 Անդ հողակոյտ փոքրիկ կանգնեալ առ ժամայն՝
 Հովանանայ՝ նո սուրբ նըշանաւն ի տառան ,
 Մերթ խոնարհեալ քաւէ հանգիստ նընջեոց
 Մերթ ամբարձեալ՝ աղգէ զկայանս զըւարթնոց :
 Ո՛հ , խոնջ ճակատս յայն խաչ սիրէ խոնարհել ,
 Զերմ արտասուօք ընդ հողոյ զհերբս խառնել ,
 Եւ կալ ի սնար շիրմին արձան շնչաւոր ,
 Հուր բոց յերկնից ժըտեալ կենաց ի խայծ նոր

Իբր ըզտեսողն յօթեւանին Սարեփիթայ՝
 Աղղել մարմնոյն , որ անդ ի խոր ի քուն կայ : . . .
 Սակայն թէ քաղցր են կեանք , քաղցրիկ չէ եւ լաց
 Ի վաղամեռ եւ սրբաասուն սէր եղբարց .
 Թող երգեսցեն հոմերք ըզգոռ նահատակ ,
 ՁԱսողիկ գողցէ մոլար սիրոյն արբանեակ .
 Գողար եւ վրսեմ ինձ միայն մահ՝ Ամբրոսեայ .
 Նա ինքն առիթ երգոյս իցէ եւ մուսայ :
 Հեղգ ինձ հոգեակ , դու զսիրտս ուղղեա եւ լալիս .
 Եւ թէ աշխոյժ աստեղց շնորհես վառել յիս ,
 Բամբխուն՝ հարցէ լուսնակս հայկիւն ոսկեթել ,
 Երգ ոգեշարժ սիւս սիրելւոյ ինձ աղղել .
 Ըզհրաչէիցն ի վայր ցողեալ բրբաց թօն՝
 Ի սպիտակ քոց նըշխարաց սուրբ սիրեգոն :

Գ.

Հաւուն բարբառ ի ծովափանց զարթոյց զիս
 Ի զարհուրանքս հասարակ գիշերիս .
 Չայն սահանաց այլեաց խորուստ հեծելոյ ,
 Ըզմըկանամբք ճեմք եւ շաչիւն հարաւոյ .
 Ի խոր խարակս հընչել ճայից ըզվճւ վճւս ,
 Չայն յանձանօթ աշխարհէ հաս իմ հոգւոյս .
 Եւ ի ճայնէն հատեալ ճայն խոր ճայն զգայուն
 Խոռվեաց ելից սրգով սիրով զիս համբուն : . . .
 Ո՛հ , թէ յանկարծ մի լոկ մընալ ի քարտէս
 Տային երկինք ճայնիցն հընչեալ ի սըրտէս ,
 Յաւերժ , Միհրան , ըզքեզ հընչէր մարդկան աղք ,
 Եւ ես անմահ քեւ թողուի յիշատակ : . . .

Դ

Օրհնեալ աւուրն այն անձկալոյ լոյս եւ ժամ
 Որ առաջին մեզ ցուցար տես անթառամ .
 Երբ զըւարթունք ըզըւարթունդ ի կրղզիս
 Հանդրին գոգոյն շրջեցուցեալ ընդ ալիս ,
 Վեհին ցուցմամբ ձօն հասուցին անարամ
 Իբրեւ փեայ ի հեղութեան առագաստ .
 Ի զուր Վոսպոր սիրահարկաջ վէտ ի վէտ
 Բողոք բառնայր եւ թաղանայր մեղկաղէտ .
 Ընդէր սրանդուխտ վարի սիրուն իմ կարափ ,
 Ոյր ցանկացան ձայնին ամուսնքս այս ի տարփ :
 Իբրեւ ցողոյ քաղցր է հանգչել ի դալար ,
 Ամահին դուժք ի մանկրաի հեզ խոնարհ .
 Նորա եւեթ դիմացրն ջինջ հայելի ,
 Աստուսա եւեթ ձայնին դարձուած լրսելի .
 Աւ գուժ ջներէ աշխարհական երանգոյ
 Խառնել ի տիպսրն տարփալիս զըւարթնոյ .
 Յամաքաթեւ նաւու հանգէտ ի հանգիստ
 Յաշխարհական ծովուս հողմոց թափեալ խիստ ,
 Ի նաւակայս հասուցանէ մենակեաց ,
 Ուր խաղաղիկ տատանին նաւք անկասկած .
 Տեսեալ ըզլոյս կանթեղակիրն յաշտարակ
 Որ կանոնաց սրբոց են խրատք անվրիպակ :
 Ո՛վ ժպրհուժեան վիսին . եւ անդր իսկ յաճախ
 Գայ զարամուր նըհանգ ծովուն փրփրերախ ,
 Որ յեղեմին իսկ ի սարակզ լըրբեցաւ՝
 Օծեալ լեղեաւ զլեղուն՝ ծնողացս առ ի դաւ .

Որ խոստանայ մեզը եւ ծորէ մահադեղ,
 Հէգ մահացուաց պաճուճապատ ժանտագեղ.
 Ծիծաղախիտ վառեալ կոհակ նենգաւոր
 Կենցաղասէր մարդկան հրաւէր անդր ի խոր,
 Թիակապուտ յանկարծ լեալ նաւն եւ անշունչ
 Հետախաղաղ ի խորչ հիւսոյ խեռաշունչ:
 Փառք եւ հաճոյք քան ծուխ թեթեւ անհաստա
 Գանձ փարեւի կարծին մարդոյ անհաւատ.
 Վ իշտք արտաքոյ վիշտք ի ներքուստ դարանին,
 Կոյր մահացուն կայ յինքնակապ ի լարին:
 Զիմ՝ խաբուսիկն այն ջրպատրէ զգօն մանուկ,
 Միշտ ընդ ծրփանան հայի աչօք երկեղուկ.
 Ծով աշխարհիս, ասէ, վայելք քոյին քեզ.
 Կերպ տատրակին ըզձերպ թաքուն սիրեմ՝ ես.
 Եւ զիմ՝ մակոյկ յօարս կապեմ նըշանին՝
 Զոր տէր Յիսուս կանգնեաց ի մէջ անդընդին:
 Ծովն յաչաղկոտ յառնէր ալեօքն հողմակոծ,
 Ճակատ ի թեւ խաչին՝ եւ ձեռք իւր ի ծոց
 Թըւէր Միհրան ի բեմ նաւուն ի թըմբիր.
 Ծովըն գոռայր, եւ նա նընջէր անյարիր...
 Ո՛հ, երանի՛ որ զայս նընջեաց քուն ի տէր.
 Աչկունս եւ սիրտ յանմահութիւն բացցէ վեր:

Ե

Ո՛հ. սիրելոյ թէ սիրելին է միւս ես,
 Յետ սիրելոյդ՝ յիշատակաւ լոկ կեցցես.
 Չիք այլուր, չիք, բայց ի սրբախդ գիտել զայն՝
 Թէ ողջախոհ գունակ հաւուն կաս միայն: ...

Աստուածաստուանկ սարգին նրման յԱհերմոն
 Տեսի աճեւ ըզնա ի դար երկնայօն ,
 Եւ էր վափուկ իբր արշալոյս ցօ զազին ,
 Եւ էր զըւարձ իբր այգաստեղն եթերին .
 Զեփիւռ զըւարթ խաղայր թեթեւ ընդ բողբոջ ,
 Քաղցրախօսնասկ քան զաղբերաց զով խոխոջ .
 Անմեղ , նախանձ բերեալ ըզսուրբ հրեշտակի ,
 Յորոց թըւէր մին պանդրխտեալ յիւրն հողի :
 Խանդայր ընդ բաղզն իւր խնամակալ զըւարթուն ,
 Պաշտպանօրէն թեւադարեալ իւր սանուն ,
 Յորժամ յէէն էջ ի մարմին սուրբ հողին ,
 Նախ քան ծնողաց որդեգրելով ի յերկին :
 Օրհնեսցի՛ վայ՝ զոր հընչեցին սուրբ շըրթունք ,
 Օրհնեսցի՛ հիւ՛ զոր նախ առին արեգունք
 Գանգուրքն եւ յունք հեղանազիկ շիկորակ
 Եւ ցօղ աչացն ըսփիւռ յայտին կարմրորակ .
 Ո՛հ , օրհնեսցի օր յորում նախ ըզՅիսուս
 Թոթովախօս կրկնէր Միհրան մօրն ի յուս :
 Քանիցս արկեւ զուարթնոյն քուն քաղցր ընտուաւ
 Ընդ իւր յերկին բերէր զհողին շուրջ կարգաւ ,
 Ի մէն սըրբոց մինչ ի վերին պատըշգամ
 Յուցեալ ըզաէրն եւ ըզկուսան Մարիամ .
 « Տէս աստ սիրուն սանիկ , կայտառ ըզմանկաի ,
 Յիսուս առնու զսոսա յերկրէ յիւր խայրի .
 Եւ թէ երբէք ցասնու՝ նդ աշխարհ զոր գընեաց ,
 Յերգս ալէլուս ասեն սոքա , մի , հաշտեսնց .
 Յիշեա՛ զի մէք զարիւն թողաք եւ զարեւ
 Եւ ի նընջեւ համբուրեցաք զխաչիդ թեւ :
 Սիրուն սանիկ , ընդ Սիոմի աղաւնիս
 Եւ դու ընտիր լաւութեամբ գաս եւ խառնիս » :

Այսպէս ի թարմ տիտց Միհրան ընդ երկնից
 Կրթութիւն կրուել դաշն եւ թեւել անդր ամբիծ :
 Ելիւք ամաց բողբոջեցաւ սիրունակ ,
 Եւ դագաթանն հերաց ածաւ սուրբ պրասակ .
 Ըղտատրակաց թերայիդայ ձեւն էառ ,
 Եւ Ամբրոսիկ զըւարձ կոչուին եւ յարմար :
 Քանի՛ յակճիռս ժողովն ընդ նա հիանայր՝
 Ի տաճարին քաղցրերգելով մինչդեռ կայր .
 Մինչ ցող սիրոյ որպէս ձագուն ի կրտուց
 Ինքնին Յիսուս ջամբէր յառատ իւր դանձուց :
 Արբ զօրացաւ , ծանեաւ զի քաղցր է յոյժ սէր ,
 Ինքնին ի նոյն խրնդիր սլանալ իղձ լինէր : . . .
 Սիրոյ թէ գոն յանցանք՝ թրոխչքն են երագ՝
 Զի զգիրկ մտերմաց յաճախ թողու նա դատարկ .
 Սակայն սիրոյն ոչ , անձին մեղ՝ լինել ցուրա . . .
 Աղէ սիրեաց , թրոխր , գրացես քեզ յագուրդ :

2

Ոչ առիւծու յահուր ընդ օդ է սլանալ ,
 Ոչ սրավարել կիտի նդ աւազ տապացեալ ,
 Եւ ոչ արծւոյ յալիս մրցիլ կասրուտակ .
 Անձնիւր յիւրում ասպարիզին նահատակ :
 Ինձ որ ի ծով նաւեմ դառնից թաղճանաց ,
 Նաւահանդիստք ո՞ր , բայց դագարք դամբանաց .
 Ճախրել յայերս տենչ է հոգւոյս եւ խրնդալ ,
 Այլ ընդ երկիր տուամբ սրգոյ հարկիմ կալ :
 Այն ինչ դառնայ երեկորին մեղմ հողմիկ՝
 Յեղանակի սիրտ իմ ի սրինդ ողորմիկ .

Եւ զքեզ կարդամ, ըզքեզ ողբամ Ամբրոսեակ
 Յարուսեկէ մինչեւ ի նոր արուսեակ .
 Յօրէ՛ յոր զաչս առեր ու առ լոյս կափուցար՝
 Լըռութիւն մեծ ճառէ զքէն լոկ սիրաբար .
 Ես գողուղի մենիկ եկեալ ի տասանդ .
 Ի բաց վարեմ լալով զտերեւս ցիր աստ անդ ,
 Եւ զարակնեայ թելս որ զխաչիւղ անկեալ քօղ
 Տարտամ մատամքս առեալ՝ համբոյր տամ ի դող :
 Անդ սօսափիւն հողմոյն ի խիղբ բաղեղանց
 Նոր տրամութիւնս ի սիրտ ածէ , ցօղս՝ աչաց ,
 Մինչեւ ցաւոց խորասուզեալ ի յատակ՝
 Ըզքաղցրութիւն յայնմ հետէ զգալ ինձ ճաշակ : . .
 Ե՛կ նուրբ թախիժ , յողիս , յաչկուճս իմ հանդիր ,
 Քեւ ծարրեսցի մաշեալ բրբացս աղօտ ծիր .
 Ընդ սիրտ տրխուր՝ բանաս պայծառ ասպարէզ ,
 Որպէս վըտակն ընդ քարանձաւ փրփրադէզ .
 Քեւ՝ կէս սրբախ մարդոյ սնանի յայս հովիտ՝
 Ուր ցայդական ցնորից հանգէտ ցընդի խինդ :
 Ա՛հ , ընդաբոյս հատաւ ժըպիտն ի դիմաց
 Երբ զօձաջամբ պտղոյն ճաշակ մարդն ըզգաց .
 Չըւառակահնք , արտալածիկք յարեզդէմ
 Ըզվայր խնդիցն հարցանէին միշտ զԵդեմ .
 ՉԵդեմ , ուր վարդք անկան յԵւայ ծիծաղկոտ ,
 ՉԵդեմ՝ հովէլն ի շունչ զուարթնոց խնկահոտ :
 Ըզծայրից սուրբ խաչին՝ պարկէշտ ի հանգոյց
 Ըզբանալիս դրախտին Յիսուս եղ թաքոյց : . . .
 Խաչին ի տես Միհրա՛ն , քանին խայտայիր ,
 Ըզփրշազարդն որոնելով Տեառնըդ ձիր :
 Փափուկ ներբանքս , ասէ , լիցին քստմնափուշ ,
 Չի ուղեկցել Յիսուսիս է ինձ անուշ .

Բոսոր բեւեռքն իցեն եւ իմ սանդալիկ ,
 Գանդուր հերացս իցէ շուք՝ Թագ տատասկիկ .
 Վէրքըն սիրոյ յանձն իմ հարցին ծիրանիք
 Մինչեւ մեռայց յանմահութեան նորին գիրկ : . . .
 Որպէս սողոխ ընդ օդս՝ անցեր դուն ընդ խաչ ,
 Ի ծայրս անցիդ զՅիսուս գլուխ ընդ առաջ :

Է

Չիք դալարեաց առանց ցօղոյ սարարել ,
 Ոչ անձաշակ շքնաւորաց է ապրել .
 Եւ ոչ հոգւոյ առանց սիրոյ կեալ երբէք .
 Եւ թէ Աստուած սէր չէ՝ քան զայն չիք որ հէզ .
 Ոչ կիրս ուրէք իմացաւ սիրտ մեծ քան սէր ,
 Եւ ոչ քընար երգոց առիթ գեր ի վեր :
 Սէր քոյին՝ տէր՝ եւ ի քնարիս իջցէ թել ,
 Սէր՝ որ մարդոյ գեր քան ըզմարդ տայ ձրկտել .
 Որով ամուլ դաշտք՝ ծաղկաբեր ծիծաղին ,
 Հասկաց հանգոյն անդորր անդունդք ծածանին .
 Սիրով խորշոմք զգեհուն զաստիս մանկութեան ,
 Պատուար կանգնէ զլանջ իւր փափուկ՝ գիրդ
 կուսան :
 Սուրբ սիրոյ հրատ՝ ի սիրտ մատաղ թէ վառի
 Ո՞ր տեսարան չքքնաղ քան զայն ի յերկրի .
 Աստուած ինքնին տարի ընդ նրմին խառնէ զոյգ ,
 Չեն բաւական անմահութեան իւր դահոյք .
 Ե՛կ աղաւնեակդ իմ ձայնէ , եկ գեղեցիկ ,
 Եդեմ դրախտին քեզ ընծիւղին վարդենիք :
 Սուրբ կասկարճիցն ըզնա թիրախ իւր ընտրէ . . .
 Զի՞ քեզ Միհրան , առեր եւ դու զվերն յերկնէ :

Ահա հանգոյն տրխեղծ թըրթըոյ գեանասող
 Զինքեամբ մածեալ յիւրեան բըջիջ կաշկանգող,
 Յերանաւէտ ճըգնի փոխել կեանս յանձն իւր
 Յողջոյն ծաղկանց վերձեմելով ընդ գեփիւն .
 Այսպէս փութայ անձամբ յանձնէն թըռանել,
 Առ սէրն անչափ՝ չափոյ սիրով մեռանել : . . .

Որպէս ողկոյզ սլայծառ յոսկին ըմպանակ
 Թոքքըն ճմլին սրբտին կարմիր ի ծովակ .
 Երկցս անդէն տատանի ծոցըն փափուկ ,
 Երկցս ոտնու յերակաց ուխ խուսափուկ՝
 Չայնըն քաղցրիկ ճընշեալ ընդ էլս ըստըգան
 Յալապատրին փող բեկբեկի անագան .
 Եւ սրտաբախ կուրծք լայնելով ծըրարին ,
 Շունչք համառօտք ի կէս շրթանց մեռանին : . . .

Ահ աղէխարչ ձայն , ահ հեծումն ողորմուկ
 Յունկն իմ փակեալ առ ի զբօսանս հընչէք դուք .
 Հանգոյն մնչմանց քաղցրախառնից տատրակի
 Որ յամայիս լայ զառագասան ամայի :
 Ինձ երգարան սիրան է շափիղ կարմրալար
 Զոր մասն հարու փրկչին , ոչ ախտ վայրապար .
 Եւ զհետ ձայնին ըզսիրան աղու ինքն ի վեր
 Գամ քան ըզգամ վերաբառնայ ի յեթեր .
 Հողւոյն ի դէտ երկինք թըլի՝ նո գաւն անփոյթ .
 Քաղցրիկ է ձայն մընչմանցն , այլ ո՞ր ինձ օգուտ ,
 Զի պակասիս մաշիս Միհրան՝ յափոյ յափ ,
 Կուրծքըդ ցածնուն և համբառնան հասըշտապ .
 Այտք ամփոփին որպէս կեղեւ նրոնենեաց ,
 Եւ մանկութեան ծորեն ծիծաղք ծիրանեաց :
 Սուրբ ակնարկիդ ի միգամած սիրտս անկաւ ,
 Որպէս նըշոյլ մի սողոսկեալ ի յանձաւ .

Տեսի յանկիւնս աչացդ երկու արտասուս ,
 Ի ճակատուդ մըթարս ամպոց տըրտմածուս :
 Ո՛հ , թէ չէ մեղք , անէ՛ծք ի ժամըն տըխուր՝
 Յոր կարծ մահուդ մերկեալ ըղնուրբ վարագոյր
 Զխմով աչօքս արկ , որ ըզու՛նչդ ի ծոցի
 Հողմակոծեալ ծաղկանց հանդոյն դիտեցի ,
 Եւ ծուփ ի ծուփ ըզծովդ հարեալ ծիրանի
 Ընդ մարդարտեայ խիճս ի փրփուր վարդենի : ..
 Յաւէ՛ ցաւէ՛ ինձ ցաւս անբաւս անդարման ,
 Ո՞ որ ջերմիկ արեամբ թանասդ ըզբերան .
 Ընդ այդ խոժոռ թըւին եւ յօնք անմահից
 Փետրովք սըրբովք սըրբեն ըզդէ՛մս բոցալից .
 Եւ բողոքեն ներդերդ ինքնին դեռափթիթ
 Ընդ ապաժամ վառնու՛մս հիւթոյն կենսառիթ : ..
 Այլ նա խռովի ոչ , եւ հեզիկս հայեցեալ
 Բոլորս վարդի զշիթսըն գըրէ կարմրափայլ .
 Խառնէ սիրով յաւիշկ մանկանցն ի Բեդդէ՛մ
 Ի մայրենի ստեանց թուուցելոց երկնաճեմ :
 Այո՛ Միհրան , այո՛ , ահա էջ զուարթուն
 Զոսկե՛ծըղի մասն հարեալ՝ այդ ջերմն յարիւն .
 Համբերողաց դրոշմեաց զանու՛նդ ի յերամ
 Եւ փթըթեցան ծաղկու՛նք փառաց անթառամ :

Ը

Զինչ ծիծառնուկ կաղնոյն խոցեալ յանըզդոյշ ,
 Զի իւր արժան չիք ողբերգուի ձայն անոյշ ,
 Երթեալ զօղի սաղարթախիտ ի բոյն իւր ,
 Զըզէ՛լ զաչօքըն թաղճանաց վարագոյր ,

Հէշտ եւ արխուր քան զիւր զամէն եղանակ
 Երգէ զփախուստ արեւակին քաղցրունակ .
 Թըռչի ծաւալ շունչն հեղինկ շուրջ յանտառին
 Ոստ ի յոստոց ճախրեալ ի Թեւ զեփիւռսին .
 Բեկաւ քընար Ապոլոնինն օդաչուաց ,
 Չիք որ զաստեղս հիացուացէ գիշերաց .
 Փափկիկ գըլուխ երաժըշտին յուրն կոր
 Փող կըճափայլ կըացին ի ծոց վերաւոր ,
 Թեւք իւր ամփոփ իբր ըննաւու խարրսխեալ
 Եւ աչքն աղու ի ստուեր մահու քողարկեալ . . :

Սա եւ Միհրան գիտաց՝ երկիր չէ այլ իւր ,
 Յիշեաց ըզգուծ ծնողաց , զեղբայր եւ ըզքոյր .
 Մաշեալ սրբաին Թարգման առեալ լուռ քարտէս
 Գորով ընդ տառարն յերիւրէր մեծապէս .
 Չեոք ի յընթաց կասին , ջընջեն արտասուք
 Ըզգիծ դաստաց , դէմք անկանին քաղցրասուգ .
 « Խաղաղութիւն փրկչին , առէ , սիրելիք .
 Կա զիւրն եւ զձեր ի ձէնջ կոչէ զԱմբրոսիկ .
 Մեկնիմ գընամ սիրովս ի ձէնջ անբաժան ,
 Յանտի կենաց բարեխօսեմ անվախճան .
 Ժըրացարուք զիս ընծայել կամովին
 Եւ վասն հողուոյս յունկըն մաղթել Յիսուսին » :

Չայս դու Միհրան առ մերձաւորս ընդասուն ,
 Բազում ողջոյնս եւ առ եղբարս քո դասուն .
 Իսկ հարեւոյս քան զամէն՝ ցաւըս սասաիկ՝
 Ընդէր ոչ մի ողջոյն յեաին Թ՛ եւ ցըրտիկ : . . .

Այլ դու զասախ անյուշ , սնտեացն ի խընդիր ,
 Կըրկին մահունց ճաշակս առնուլ տենչայիր ,
 Չէրձ ի յընչից հողոյ , յիրաց , յընտանեաց ,
 Ոյր ընտանիք՝ ո՞րք էին , դանձք՝ գործք բարեաց ,

Մանկիկ բարուք զուարթնոց, տրխեղծ ապիկար
 Սարսեցուցեր ըզգեւ, զմարմին եւ զաշխարհ :
 Ո՛հ, զի գորով յայնժամ ցուցար Ամբրոսեակ,
 Երբ ի մահճէդ իբրեւ հեղիկ նոր Սահակ
 Ուխտ կրուցեր ընդ սիրելոցդ Յիսուսի
 Եւ յորդեգիրս յաւելար մօրն այն Աուսի .
 Քո սուրբ հրեշտակ մաանիկ ի շուրթն հիասքանչ
 Յարվւոյն պարզէր ըզյաղթանակ դրօշդ ի խաչ .
 Ծափ ըզծափի հարեալ եհան զիղձդ ի վեր,
 Զողջակիղիդ ծաւալելով ծուխ յայեր :
 Կենցաղասէր դու զի գործես ի մահուն .
 Զանդամբս հին հնարիս տածել գրգասուն,
 Միթէ որդանց փափուկ կազմել ի խորտիկ .
 Թէ կալ անմահ կարծես ի վէմ գեղեցիկ .
 Աղէ յանձին լեր . հող՝ ուստի եւ հատար
 Անդուլ կարգայ զքեզ ի նոյն գիրկ խատավար :
 Տես, քանի՛ ականակուռ գաղաթունք
 Յազգ օրհասին՝ եղեն անփառք եւ ցածունք .
 Ծանեան զաշխարհ, ցընորք անուրջք ցայգական,
 Հատին ըզջօղս, եւ ընդ նըմին կապեցան .
 Անփոփեցին ըզսիրտ յախտից ընտանի,
 Հարցանելով զանձուկ շաւիղ տերունի .
 Թողեալ ըզվարդ՝ վազվազեցին ընդ տատակ,
 Ըզպատուանդան խաչին դրեցին ի սրսակ .
 Մազեղինօք իբր ի բեհեզ փափկացան
 Եւ ի մոխիր՝ քան ի հեշտոց քրքմացան .
 Լուռ աստեղաց ի տիպ անցեալք յաշխարհէս
 Ընդ Քրիստոսի ճախրեն հեղիկ արդ յեթերս :

Թ.

Եւ դու հաւատք զըւարձացիր երկնընծայ, (նայ՝
 Զանյաղթ գրօշուդ սրարզուած զմահճաւ Միհրաւ
 Տես թրուցեալ յամուր յուսոյ առասան ,
 Սիրոյն ի շունչ գոգաւորեալ անասան : . . .

Զարտօսր ընդ իւղ զանգեալ անմահ ասրրսամ՝
 Անդ հայր զորդւոյն կնքէ զմատաղ հիւժ անդամ .
 Ամուտք չարի փայլեն դրրունք զգայութեանց ,
 Բարւոյն եւեթ լեալ վանատուրք անկասկած : . .

Իբր անաղօտ առաւօտուց արշարոյս
 Անձկաւ մընայ զարեգահան ըմպել լոյս ,
 Վայ եւ Միհրան կառուցեալ զաչս առ Յիսուս ,
 Թ՛ երբ խառնեացի նոց նա յաղցաւոր կենցաղոյս .
 Զեղծերց կախեալ մահճին երգէ ճարան պէս
 Պանդուխտ շընչով ըզհայրենեացըն հանդէս .
 « Հոգիս առ քեզ անձկայ թեւել սիրասուր ,
 Տէր Յիսուս , մի զԱմբրոսիկ քո թողուր » :

Ո՛չ , ո՛չ թողու , գայ այցելու ի սրբաին ,
 Վընքել զխոստումն օթեվանացըն վերին : (հրան ,
 Զինչ յայնժամ նուազ քան զհրեշտակ էր Մի-
 Բայց զի շընչէր ընդ իս ըզսիւղ օդահան :
 Ահա նա ձեռք ի լանջ փարեալ ողջախոհ
 Աչք ցողագին , շուրթն ի ծիծաղ եւ սիրտ գոհ : . .

Արդ ես ընդ քեզ ի դատ մատչիմ ով Աստուած ,
 Մի՛ զիմ մերժեր աղերս սրբաի խոր ցաւած .
 Անդարձ է մահ , այլ դու նորին սանձակալ ,
 Տես յիմ եւ քոյդ Ամբրոսիոս տաղնասպեալ .

Յաչարն մարութ անկանի լոյս ընդ խաւար ,
 Յիսուս գոչեն շրթո՞ւնքն եւ կան անբարբառ :
 Ո՞չ դու ետուր մարդկան ըզո՞ւնչ տէրունի
 Անբիծն ընդէր ընդ հուսլ ի քեզ գայ խառնի .
 Արդարք ի քեզ միշտ կեան , կեցցէ Ամբրոսիկ ,
 Խնայեա ո՞վ տէր՝ դեռաբողբոջդ յայդ ծաղիկ .
 Կեցցէ . . . կեցցէս , ընդ քո մեռայց ես Միհրան :
 Զի մահացուաց՝ իցեն քո կեանք մեծ խրախճան .
 Ըզքեզ կոչեն ուխտ սիրելեաց , ո՞չ լըսես ,
 Ծերն եւ տըղայ քեզ գորովի միապէս . (կունա ,
 Բայց բայց Միհրան ի կեանս յամայր բայց զաչ-
 Ծաղր արձակեա եւ մըխիթար ի շրթո՞ւնս : . . .
 Բանայ յուսով , եւ խնդրէ զտուն անմահից ,
 Ուր կէս սրբաին սպասէ կիսոյն սիրալից :
 Ո՞հ սէր , թէ քո փոքր էր բորբոք ի Միհրան
 Ն՝ անշուշտ վարէր այսօր կենացս ըզսրայման :
 Այլ ըզմէ՞ բնաւ զըրկել զերկինս յ՛իւրայոց ,
 Ըզմէ՞ անյագ թողուլ ըզսուրբ սիրոյ բոց .
 Պաշտեսցին կամք քո տէր , ընկալ զոր կամիս ,
 Իցէ՞ թէ զոյգ եւ զլար տըխուր քընարիս ,
 Մի նըւագեւ զաշխարելին զայն գրբուսագ ,
 Ըզտարփալին ի մոյն գըծեալ ըզգլխակ .
 Մի զմանկական մարմնոյն կազմած գեղեցիկ՝
 Հետախաղաց ծածկեալ ի ցուրտ մօրն ի գերկ . .
 Այլ մի , մըղձկեալ սրբոսիկ , Ժուժեայ և համբեր ,
 Հանդէս մահուն ըզգեցուսցէ քաջալեր :

Ժ

Ընդ սանդխաձեւ անիւս արդ խոնջ դառնային
 Ժամք չորրորդ, լոյս եւ մութ մըրցէր ի յերկին .
 Միհրան վարեալ խաղայր մահուն յասպարէս ,
 Զօրհասականին կրրէի տագնապ ես .
 Նա խոնարհեալ ըզգլուխն ի թունդ իւր լանջայ ,
 Ի կենսաչափ անօթ ի դարկ՝ ըզձեռն ամ .
 Ծանեաւ զի ժամ մեծին հասեալ կայր աւուր ,
 Անբիծ հողին յայնմհեռէ զելս հայցէր իւր .
 Ահ , հառաչանրս խոր հանէր ի սրբաէն
 Եւ օժանդակ մաղթէր յիւր քաղցր հրեշտակէն :
 Հանգոյն դառին պատեալ լարիւ ընդ ծառոյ
 Ոչ զօրելով այլ շքրջշքրջէլ յանկողնոյ ,
 « Հայր , մընչէր , հայր , ի խըշտեկէն զիս հանցես ,
 Եւ յաթոռակն այն զիս ո՞վ հայր , հանգուսցես .
 Ըունչ իմ թասէ . . . փախչի սրբաիկս երերուն . . .
 Ո՛հ ո՛հ , օգնեա՛ , զի նըւաղիմ ես համբուն » : . . .
 Ճերմակ բազուկն ի բարձրկնեարն անկեալ թոյլ ,
 Ճակասն ի թեւ՝ սրփուէլ խարտեաշ վարսից հոյլ ,
 Հեզիկ հեզիկ հազ ընդ շքրթունս ի վեր դայր ,
 Հազ՝ որ երբեմն ի լանջն հընչէր մահու լար :
 Փութայր դիմէր հրեշտակն ի սիրտ իւր սանուն
 Նրստուցանէր ըզծուփս ի շունչն սիրուն .
 Իբրեւ ըզբոյր ծաղկանց խըմբէր ի թերթից
 Ըզգօրութիւնս հողոյն յամանն խմաստից .
 Քիրան ըզյօնիւք մարդարտախիտ պատեցաւ
 Եւ շուրջ գալի բոլոր աշխարհըս ցուցաւ :

Իբրեւ ըզբոց առկայծ ճրագի տաճարին
 Ընդ մէջ շրթանց շրջնից շունչն յեաին .
 Աչքն եւ շրթունք ի ճիգն յեաին ցանկացան
 Առ մեզ հրաժեշտ՝ ապա առ Յիսուս հըլու ձայն .
 Ժըպիտ փոքրիկ իբրեւ կայծակն եւ յաչկունս
 Էջ զերեսօքնն շուրջ հանգեաւ ի շրթունս .
 Եւ համբուրել ջանան շրթունքն ըզհողին
 Մինչ ի նոցունց զերծ սա սլանայր ընդ երկին :
 Չեւ ըզնիւթոյն կրտրեալ աննիւթն ըզհանգոյց
 Շրթունք շափիղ եւ աչք զամբուխտ ի կափոյց՝
 Կրկին բացան ի հուսկ հայեաց ու ի համբոյր . . .
 Կրկին զուարթունք յայնժամ յայերս երեւիւր .
 Զուգից հանգոյն ջինջ աղաւնեաց թեւ ի թեւ
 Ընդ օդ եւ լոյս ճախր առելոց յամսլ թեթեւ : . .
 Թըսիր համբոյր դու առ թռուցեալն Միհրան ,
 Բիւրդեայ աչացն եւ շրթանց լէր փակարան : . .

ԺԱ.

Ոչ թուխ ամպրոպք յորոց շանթիք տեղացին ,
 Ոչ թռուցեալն յաղեղանէ սուր փրքին ,
 Ա յնպէս զանօթ իւրեանց թողուն լոկ թափուր ,
 Որպէս ի թիւ քո՝ Միհրան , սիրտ իմ տըխուր :
 Ահա խաւար , թախիծ , լըսին ու ահեղ ժամ .
 Յանկիւնս սրահից անքուն կանթեղք լուսերամ
 Նըշոյլ գիջին ըզցուրտ որմովքն հարկանեն ,
 Իբրեւ յեաին յոյս չըւառի առ սըրաէն .
 Անժոյժ վաղեալ յիմոց շրթանց հառաչանք
 Ի սիրտ անդրէն զիւրեանց լըսեն , արձագանդք : . .

Լուր . . . աւանիկ ողորմ նըշխարք Միհրանայ . . .

Ո՛հ, թէ յանկարծ շունչ իմ մեկնէր առ նրմա . . .

Իբրու քաղաք սլատեալ յերկիւղ յեղակարծ՝

Աստ ամենայն լըռէր արեան անցուդարձ :

Տիպ քրովբէից տասրանակին թեւապող

Չոյդ մոմեղէն զմարմնով կանգնեալ առկայծող՝

Թըւին սլատդամք ի սրբտեկէն դաբիրայ

Չյաւխտենից սլատմել եւ զսուրբն Եդեմայ .

Այլ դէմք սլայծ առ կանանշարժունք զինչ բիւրեղ

Եւ ոչ շրթունք բանին ի բան քաղցրազեղ :

Անցեալ տեսից մօտադոյն , տե՛ս հիասքանչ ,

Յոր՝ ահ ի բաց եւ սէր կոչէ զիս յառաջ : . . .

Միհրան . . . եղբայր . . . հալեցաւ սիրտս աղէկէզ .

Ա՛հ , հանդիսան յաւխտենից առցէ դքեզ .

Եւ մի յերկնից ցասնուա՝ թէ դամ ցուրտ շրթամբ

Յուրա նըշխարացդ ասել զյետինն այն ողջամբ .

Ո՛վ դու ի կեանս ինձ առաւօտ միշտ զըւարթ ,

Եւ ի մահուդ արդ երեկոյ հեղ հանդարտ :

Իրչաւ ոսկեաւ յրստուերս ասորժ խառնեալ լոյս

Թըւի զայս դէմս ինքնին զըծեալ տէր Յիսուս .

Խարախչագեղ ի վարս՝ զըլուխն ըսպխտակ

Իբրեւ շուշան անկեալ ի հասկ գեղնորակ .

Երեսք գոգեալք լուսնոյ անլոյս են մահիկ ,

Փակ կապուտակ զաչկուճս ամպէ գեղեցիկ .

Շրթունքն օծեալ մանուշակի մելանաւ՝

Կարծես Յիսո՛ւս մընչէն անշունչ հադադաւ .

Պարանոցին գեղ ալտադասարբ սիւնակ ,

Լանջք շափիւղայ խորհրդակիր սուրբ տախտակ ,

Ձեռն ըզձեռօք զոյդ աղաւնեայ թեւակից

Որ ի Սաղէմ ընծայէին ձօն ամբիծ :

Ո՛վ, զիանորդ սլարզ ճակատուն սուրբ դաշտիկ
 Ուր եւ ոչ մի հող անձկութեան ամ կրնիք : . . .
 Միհրան . . . լուէ ժիր ժամացոյց կենաց քոյ
 Որ քաղցր ի ճոխնչ լարէլ հրնչէր ընդ զուարթնոյ
 Եւ կարմրաթեղն անշարժ սրբաիգ ճօճանակ
 Ո՞չ եւս բաղխէ զլանջաց կամար ներդաշնակ :
 Այլ փրզոսկրի մասն ի դող դիրդ քո դրրկին
 Հոգետաւիլ փանդեանահար Յիսուսին՝
 Երգէ՛ թէ ես նընջեմ եւ սիրտս արթուն կայ : . . .
 Ո՛վ քուն զուարթուն , ո՛վ արթնութիւն Մի-
 հրանայ : . . .

ԵԲ

Հողմըն հրնչէր , եւ կոծէին ոսաք դափնեաց ,
 Եւ մըռնչէր հանդրին հրոսօք բիւր ալեաց ,
 Եւ համօրէն հծըծեալ հեծէր բընութիւն .
 Համատարած ապշոս եւ մէդ բալագոյն .
 Եւ ձայն ասեղ որպէս շանթից ամպոց կուռ
 Գայր դուալով , եւ այլն ամէն կայր ի լուռ .
 Եւ գոչէր . հող էիր , ի հող եւ դարձցիս : . . .
 Եւ տըխրազգած ի չու յանկարծ դրախ զիս :
 Քող գիշերոյ զգահաւորակըն սլատէր ,
 Լըռութիւն՝ համըր կարապետ , սուգ՝ ընկեր ,
 Եւ երկրապիշ ընթացակիցք անգրուվարք
 Ի սիրտ եւ յուս բարձեալ զանյոյս մահուն կառք .
 Անդ առկայծեալ ջահից խոնաւ ճարճատիւն ,
 Խորախորհուրդ մըրմունջք դանդաղ ծերունւոյն .
 Անդ գերարտօսը անմեղ մանկանց աշխարան ,
 Եւ սեւամաղձ ի սպտանեաց լուսարան :

Եւ ահաւոր քան լրուածեանն ըզսարսափ՝
 Զարհուրագոչ երգոյն վանդիւն սրբաթափ...
 Փոքր միւս եւս անձնանրէր զոհից տիպ
 Անկանէի 'նդ կառօք, զի մութ էջ յիմ բիբ :...
 Այլ ի բարձման տրխրականի քօղոյն բաց
 Յաղճամրջէ անտէ Միհրան լոյս ծագեաց .
 Անբիծ գիւմօք ի դագաղին կայր ի քուն
 Յերգ հրաժեշտին մեծի յեղբարց ընդասուն :
 Խանդայր ընդ մահ թողին՝ կրթոտ ծերունի .
 Յուսայր մանուկ՝ թէ կայ եղբայրն յարթմընի :
 Ի քաւարան վէհին ածեալ օրհնեցին՝
 Աչք անբըթիթ ի նա, եւ ուս մատուցին .
 Տրխրահանդէսք եւ խընդամիտք ի դամբան
 Յաղթանակաւ տանէին զիմըս Միհրան :
 Ո՛վ յաղթանակ քաջի՝ ոյր չեք ինչ կասկած ,
 Ուր մահ ինքնին ըզդերանդին հար վըշտեաց :
 Ի թինդս ոտից զօրաւորացն Յիսուսի
 Տարածեցին դափնիք դողգօջ հովանի .
 Եւ զօրութեց տեանն ի վերուստ բարձեալ վաշտ ,
 Արծուիք լուսոյ՝ զսուրբ դիտելով մարմնոց դաշտ ,
 Որք անդ երբեմն ի կենսառիթ վէմըն յեց
 Ըզյարութեան երկրի տային զաւէտ մեծ :
 Փող սրարտութեան մահու օրոտ առ օրոտ
 Ի մեր հանդէս զերկնից խըմբէր չորք ոլորա .
 Մինչեւ բացաւ հանդիսարան տապանին ,
 Եւ չէր որ ոչ դիտէր ըզլոյս Յիսուսին :... :
 Ա՛հ, ոչ բընաւ այնպէս շքեղ ինձ Միհրան
 Որպէս ի յէջս իւրում յանելն ի դամբան .
 Երբ ըզթիկունս մտտաղօրեայս տայր ի հող ,
 Յողորմ ի հուսկ ժամուն եւ իմ խանդից գող :

Աշխարհելի՛ ժամ, ոչ մահուն քաղցուենի,
 Այլ թաքրստեան տեսոյ դիմացն արիենի :
 Մըշտագիշեր աջօք, ձեռօքն ի կրրծին՝
 Զանդորրութիւն կենացն ունէր անմեկին •
 Մահու կենաց թրւէր նրկար զուգահրաշ,
 Եւ հողմ կայտառ քրքրէր ըզվարսըն խարտեաշ,
 Յորում չըկայր մանիշակաց փունջ ընդ վարդ,
 Դեռափրթիթ ինքն էր ծաղիկ հոգեզարդ :
 Կայր հողանեալ դաշտիկն այտից տարփալի
 Անբրծութեան հոգւոյն յեաին հայելի,
 Եւ տակաւին փայլ մի թրւէր անդ շողալ,
 Եւ զասլաժոյժ զայն զանջատումն մեծ լալ : • •
 Ո՛հ, իջանէ կրնիք բաղդին Ադամայ • • •
 Ա՛հ, հիմ ծածկէք զանգին աւանդ Միհրանայ • • •
 Խառն ընդ հողոյն ի դէմս ի ծոց նազենին
 Այդպէս դիմէք իղձք եւ համբոյրք իմ յեաին •
 Ապաժամանս արտասուք բուռն առեալ հիւ •
 Զխաճրդ թանան զապառում ցուրտ զայս երկիր • •
 Աւա՛ղ զինեւ • • • հանգիր դու ա՛հ, խոնջ տատրակ
 Ի ցօղս օրհնից փրկչին հանգիր յայդ տընակ •
 Ծուփ կենցաղոյս ըզքեւ փականս արկ յամայր,
 Այլ բանալեօք սրբախ բացցիս աչացս յար •
 Յերեկախառն արիււոյն չըւել ծովասոյզ
 Եւ ի սփռել յերկին ջահից բիւրարոյս,
 Աչք աստեղաց արտասուակաթ լուսալիւր
 Իսկեւիսկ լան իսկեւիսկ կան քեզ յակճիւր •
 Յորժամ յառնեն ի ծով ալիք բարձրածուփ •
 Եւ սօսափիւնք հողմոց փարին ի թաւ թուփ •
 Մինչ լըռութիւն եւ քուն կապեն լար ամուր
 Նընջեցուցեալ ըզուռնչ ու անշունչ յարամուր •

Մինչ արբանուծիւն եւ սէր միայն արթուն կան
 Նոքիմք եկից քեզ յայց յուշիկ եւ միայն .
 Եւ դու թափեաց գամ մի զայդ քուն սեւորակ ,
 Տեսցուք մի ժամ , հանդիպեսցուք սիրունակ :

ԺԳ

Սիրտ ի տասան զարթիր , զարթո՛ եւ զաժխոյժ ,
 Զականողեաց մըթերեալ ցօղ ապաժոյժ
 Բարձ ընդ կապարձ քո ընդ քընար սեւասքօղ ,
 Հար ըղյետին նեա գըթուծեան եւ անդ թող :
 Օ՛ն , չեւ տըւեալ լարիցդ անէճս երդմնակու
 Հիւսեա բեկբեկ ի թելս ըղձայն քո տըխուր ,
 Տըխուր եւ քաղցր իբր ըղլուանոյդ այդ մահիկ
 Որ յամսոց ծալ կըրկին գիմօք բացխըրիկ
 Զերկաքանչիւր զարթուցանէ յիշատակ ,
 Զայայծառ կենաց եւ զհեղ մահուդ Ամբրոսեակ :
 Ո՛հ , մեծ վաստակք եւ ցաւք են յիս , ո՛վ եղբայր ,
 Թըւի թէ ոչ խոնջէր սիրտ յար թէ զքեզ լայր .
 Այլ քաղցուենիդ դու շընչեաց հեղ յիս զեփիւռ
 Անսանձ վըշտաց չափ եւ կըրից դընել դիւր : . .

Յօրէ յորում կափուցար զաչս առ ի մէնջ
 Ո՛հ Ամբրոսեակ , եւ լուսոյ յիս բարձաւ տենչ .
 Սեաւ է զըմբուխտ երկրի եւ կայծ եթերին ,
 Յորմէ զմահու գոյժ սիրելւոյդ իմ հարին .
 Ա՛հ , ասէի , ո՞ տայր աւուրս բաղմարիւր
 Առ քեւ նըստել լըռիկ աջօք դառնաղբիւր :
 Գիտացի՛ զի 'նչ մի անդարձ ել ի սըրտէս ,
 Յերկինս ու ի հող բաժանեցաւ նորին կէս :

Ծիծաղախիտ Առապոր հանգրեան ընդ ալիս
 Կապոյտ շքրթամբ անգուշ հարուն քեզ լալիս •
 Քորքդ եւ եղբարք ընդ թուխ նոճեօք բիւզանդեայ
 Ըզճեմ առեալ ցողից ի յեռ մարդարանայ՝
 Զուր յերդմբնի զծովակն առնեն գեղեցիկ
 Երագասահ նաւուքն ածել յիւրեանց գիրկ •
 Ի տարի սիրոյն արկեալ ըզմահ քո յանյուշ,
 Իցէ՛, ասեն, տեսցուք զեղբայր մեր անոյշ •
 Եւ ասա նորոց եկեալ եղբարց քեզ դասակ
 Լըսեն սիրով ըզքէն, կասեն թարմ սրասկ : • •

Լըսեն ; հանգչին , խաղաղիս սիրտ աղեկէզ ,
 Ասակք յուսոյ ծագէն եւ գան բոցադէս •
 Սուրբ են ասա երկինք , ոչ եւս գայ դիշեր
 Կերպարանել քեզ արհաւիրս տըխրաբեր •
 Հողմիկ կայտառ խաղայ ի բոյսքրս քրնքուշ ,
 Եւ նուրբ ըստուերք ոչինչ ծածկեն՝ բայց ըզմուշ •
 Լըսիկ ցողէջքս ի մարմանդին դալարւոջ
 Բանս անուշուս հայցեն եւ զեղջ ի յողւոջ : • • •

Ո՛հ մանկըանակք , բոլորեցէք բիւր նարոտ
 Ի ծայր խաչին՝ զոր կանգնեցիս երերկոտ :
 Յայգուն կենաց առաւօտեաց նա զմութ մահ ,
 Եւ ի սրբաէս բաղում լըւաւ գող եւ աս •
 Անկեալ ճըգամք եւ լաւութեամբ լոյս փետուր
 Յարեգակունս ի վեր թըռեաւ ել մաքուր :
 Արդ Օ՛ն եւ մէք զհեա ցանկալւոյն թեւեսցուք •
 Եւ գուք լալիք , հանգերուք , ան՛ , հանգերուք •
 Սուրակնապոյնք թափ ընդ կապոյտն անցել տուն
 Հանդիպեսցուք կերպարանաց սիրելւոյն •
 Մինչեւ ի խորս խառնեալ սիրոյն յառադաստ
 Աստուածութե՛ն դէմ յանդիման կալ յերաստ : • •

Անդ բոյր զըմուոյ , անդ կասիա կուսանաց ,
 Շուշանաւարդ յատակք որմունք այնց յարկաց .
 Ծաղր եւ ժրպիտ խինդ եւ հրճուանք անտանօր
 Երանութիւն եւ կեանք եւ սէր նորանոր : . .
 Ա՛հ , յայդ տեսիլ ոչ որ ըզմահ արտասուէ ,
 Այլ զոչ բարձունն ի մահացուացրս դասուէ .
 Երանեսցէ նա 'նդ իս խնոյ սիրելոյս
 Որոյ ի տէր նընջեալ եբաց զաչս ի լոյս .
 Փայլակն անկեանք հատեալ զկենացն ասպարէս
 Ամփոփեցաւ յանմահութեան արեւելս .
 Մըխիթարայ որդւոց աւանդ զինքն եթող ,
 Բազումս՝ յեղբարց , շատ եւս յինէն առեալ ցօղ :

1811

ՄԱՀՈՒ ՄՐՄՈՒՆԶԻ

The first part of the report
 deals with the general
 situation of the country
 and the progress of
 the war. It is
 followed by a
 detailed account of
 the operations of
 the army and
 the navy. The
 report concludes
 with a summary
 of the results
 of the campaign.


APPENDIX

This appendix contains
 a list of the
 names of the
 officers and
 soldiers who
 were killed
 during the
 campaign. It
 also includes
 a list of the
 names of the
 officers and
 soldiers who
 were wounded.

ԲԱՆԻՔ ԳԱՆԴԻԽՏԻ



ԲԱՆՔ ՊԱՆԴԻՍԻ



Ա.

Մէն միայնակ եմ ես անոք անոքիկ ,
Եւ կեալ մեկնակ անընկեր՝ մահ է սասաիկ .
Ոչ կամիմ կեալ միայն , հերձում զիս ինքնին
Ի սրբաբեկ սուսեր գործիմ ես կրկին .
Երկու երեսք ի թաղծագինըս դիմի ,
Լարք արաճայնք երկու ի նոյն քընար մի :
Որպէս յունայն յաննաւագնաց ովկէան
Իջեալ հիւսսի թոպէ զալիս անսահման ,
Եւ չիք որ անդ ըզբօսնու , չիք որ սակչի ,
Այլ ովկէան ընդ ովկէան մարտընչի .
Կամ փոթորիկ թափառական ընդ այերս
Կարկառելով քարակըտուր յապալերս՝
Ընդ դալարեալ սեւասարոյր լայն շըրթունս
Գուայցէ 'նդգէմ' ապառաժից ձայնս անհունս ,
Եւ ձայնքն ընդ օդն արձակալայր հընչիցին
Եւ արձագանդք ըզհեա անդրէն ոչ դարձցին .

Ոչ բարձրաձողիք անդ կըքիցին ծեր կառարք
Օգայածիկ հաւուց տընակք օգապարք •

Ոչ ի սորոց անդ սարսիցեն ձագք արծուեաց ,
Ուր ոչ գուցէ եւ նըշմարիկ մի կենաց •

Ոչ վայրենոց մամուց արկեալ խիղքս անդէն
Եւ ոչ փողեակ խըլըրտիցի 'մերկ վիմէն ,

Այլ վայրապար գուպարելով հողմոց գոռ
Հարկանիցին ընդ հոլանին չոր կոչկոռ •

Այսպէս յունայն սրբախ ու ի լայն ասպարէզ
Հողմուճիք կըրից եւեթ հընչին գէղադէզ •

Եւ չիք քան զինքն որ կրկնիցէ արձագանդք ,

Յորմէ ելին նախ՝ անդ դառնան եւ հուսկ վանդք •

Ես իմ լեւմ՝ ձայնիս եւ ոչ խաղաղիմ ,

Լեզու կամ ունկն օտար խնդրեմ մըտերիմ •

Եւ մըտերիմ չիք ինձ , ինձ չիք աստ ծանօթ •

Ո՛հ , պանդուխտ եմ ես յերկիր անծանօթ : . . .

Բ

Անձանօթից ինձ հանդիպեալ եւ ասեն , (ցեն :
 Ողջոյն ընդ քեզ պանդուխտ , զխաբդ վայրքս է .
 է՛հ , պանդրխտի մի տայք ողջոյն , զի ոչ է .
 Չայն ողջունիդ առ ունին իմ՝ զօդ լոկ հընչէ .
 Ես չըզիտեմ ինչ ըզվայրաց կերպարան ,
 Բայց զի օտարք եւ հայրենեացս աննրման :
 Ողջոյն , ո՛հ , այն ողջոյն՝ զոր տան սիրելիք .
 Վայր՝ այն եւեթ վայր՝ որ կոչին հայրենիք .
 Այն ողջոյն՝ դեզ է սրբախ՝ ցօղ զովարար ,
 Որ ըզարտմեալս առնէ ծաղկունս իսկ դալար .
 Իսկ այս ողջոյնք՝ են ինձ դառինք աստանօր ,
 Զի զյիշատակ հին ողջունից բերեն նոր .
 Բերեն ըզյուշ ողջունատու սիրելեաց ,
 Այլ ո՛հ , զվայելս նոցունն ո՛չ , ու ո՛չ զհայրենեաց :
 Ա՛հ . պանդրխտի ողջոյն մի տայք մի ասէք ,
 Մի զսիրտ յարեան իւր թաթաւեալ տապալէք ,
 Եթէ չիցէ չըւառին լուր հայրենի ,
 Թող յիշատակն անգամ յանյուշ հարկանի :
 Յօտար երկրիս ո՛չ , ո՛չ կամիմ ես ողջոյն ,
 Մինչեւ լըսեմ զայն յիմ՝ երկրիս երկնագոյն :

Գ

Ի Ղ Չ Ք

- Խըրեալ ի խորշ մ'առլանդական համատարած
անդրնոց
Հաղար հրասախ յիմ հայրենեացս հեռի՛ լինիմ
ծովակոծ ,
Հողմունք , հողմունք ի ծաղկաճեմքս զիս ամիանց
կորզեցին
Եւ յանգալար ի ծրխամած ի փոշեշունչ վայրս
արկին .
Հողմնն հրնչէր քերեալ զերկնաւ , թէ եւ , բար-
ձուստ է հրամանս ,
Եւ սօսափմամբն հոլաթեւեալ եհան հասոյց յայս
սահմանս .
Սահման՝ որ հուսկ եւ անդրագոյն Թուլեայ թըւի
սրանդրխտիս :
Յիմ ծանօթիցրս զուրկ՝ որ շահ թէ ի կենդրոն
կամ երկրիս .
Ոչ ահա կեամս ի քաղաքի բազմամարդում քան
զհամայն ,
Բիւրք յաջմէ բիւրք եւ յահեկէ , եւ ես մընամ
մէն միայն .
Սիրտ սիրաբաւ՝ յազամանտիկն իւր զըզըրդեալ
զըղեկէն՝
Ոչ զըտանէ իւր իջեւան եւ յարբունիս ոսկե-
ղէն .

Պանդրխտարան է նրմա վայր՝ որ չէն իւր վայր
 ընդասուն ,
 Թէպէտ ի դահ հանես՝ վազէ խոնարհ ի կէան
 իւր սիրուն .
 Երբ զիւր բընիկ թողու 'նդ թիկունս՝ մէն քայլ
 թըւի մըղոն բիւր ,
 Երբ յիւր բընիկըն դէմ դընէ՝ քայլ մի հաշուէ
 զմըղոնս իւր .
 Իսկ յապառուժ թէ ի հարկէ ստիպիցի կալ ան-
 դընայ ,
 Աւոյ՛ղ , անդ ոչ եւս չափ , այլ կիւրք անբաւք . ի
 մահ աննու զկայ :
 Յայսգոյն կըրից ես ծանրացեալ յովկեանու նըս-
 տիմ դուրս ,
 Բերան կընքեալ , եւ չըգիտեմ հառաչանքս յոր
 հընչին դուրս .
 Աչք իմ ճապաղ յալիս բազումս որ յար սահին
 առ ինեւ՝
 Հանգոյն խամբեալ խոտոց խոտք խոտք դըլկոյս
 կոծին հողմաթեւ .
 Ծով ի վերայ ծովուս մեծի ծաւալեալ սիրտըս
 կապոյտ
 Ի մաղձայոյզ թուխ մըկանունս կոծէ զեզերս
 շըրջապոյտ .
 Կամ յիմ տեղին ասէ երթամ , կամ թէ բերեմ
 զխմորն աստ .
 Եւ զուր խոնջեալ՝ յինքն ոլորի որպէս անհողմն
 առագաստ :
 Իսկ դո՛ւ հողմիկ երկնահրաման աստուածաշունչ՝
 իբր ասիս ,

Ե՞րբ յայց ելեալ յամպոց պարզեց՝ ե՞րբ միւս ան-
գամ հընչես յիս •

Ե՞րբ յանբընուստ կորզեալ վայրաց՝ տանիս ի
քաղցրն իմ բընիկ •

Ե՞րբ հանդիպեալ իմ ծանօթիցս՝ ոչ եւս եղեց
միայնիկ :

Ա՛հ, մի արդեօք տեսնից դարձեալ ըզհող եւ ջուր
հայրենին •

Ընթացցի՞ ոտն ի հետարն վարժ, եւ ձեռք ընդ
դունն իմ հարցնն •

Տեսնից հեռուստ ըզպատուհան երանաւէս սե-
նեկիս,

Վարկառեցնից ձեռն ի ծաղկունս՝ զոր եւ անտուս
դիտէիս •

Տեսնից արդեօք հեռուստ յիմ կոյս վազվազել զիմ
սիրելիս,

Եւ արտասուք յարտասուս, խինդ առ խինդ՝ հա-
սնից յանձկալիս :

†

ՊԱՐՏԷՉ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ուստի այս ձայն քաղցր ու սպառու՛մ .
 Ասէ՛ . Պանդուխտ , աւետիս քեզ ,
 Գարուն եհաս երկրի մերում ,
 Ե՛կ եւ իջցուք մեք ի պարտէզ :
 Ըզմէ՛ խոտիւք զայր մ՛անաշխարհ ,
 Եւ հիմ՛ ձայնէք ձայնս աղէկէզ
 Աւ բացական անմըխիթար ,
 Թէ եկ իջցուք մեք ի պարտէզ :
 Ո՛հ , սրբաառուջ ձայնիդ ի լուր
 Յիշեցի զվայրս եւ զանցեալ ամս ,
 Յոյց բացական նրստեալ տըխուր
 Քամեմ արտօսրր դառնասամս .
 Եւ յիշեցի զբաստն երջանիկ
 Զոր՝ ճանաչէ վրիպեալն եւեթ .
 Եւ յիշեցի զքաղցր իմ՛ դրախտիկ ,
 Զամէն ցաւոցրս սեթեւեթ :
 Ո՛հ , երանի՛ որոց ի տան
 Ու ի հայրենին կան սասարէզ ,
 Ոյք կարկառին ընդ սպառուհան ,
 Եւ իջանեն յիւրեանց պարտէզ :
 Զինչ քաղցրագոյն , զինչ ցանկալի
 Է՛ մահացու , գուցէ բնաւ ,
 Քան թէ գրտեալ զոք սիրելի՛
 Ասել իջցուք մեք ի պարտէզ :

Զխորդ հեշտին է ճանապարհ
 Որ ի դաշարս անդրը տանի .
 Զխաբի երբեք անդ դարչապար
 Եւ բիւր շրջեալ ոչ տաժանի .
 Անդ օդք ազատք շնչին ազատ ,
 Եւ օշարակ կենսանորոգ
 Արբուցանեն քեզ անընդհատ
 Քոյինատունի ծաղկանց բոլորք .
 Դրախտին վայելք , վայելք դրախտին
 Ահաւազիկ կայ քեզ անդէն ,
 Բարձեալ եւ ահ մահու տրնկին ,
 Օձին շաւեղ խրցեալ անդէն :
 Ի հաշտ ամպոց անդ քեզ աղբիւր
 Զօնէ բաժակ ընդ երեկոյս
 Մատրուուակել ըզմարդաց հիւր
 Զերփինուռնակ ծաղկանցըդ բոյլս .
 Անդ մայրաբար արկեալ խընամ
 Մերձիս ի ծիլս եւ ի ծաղկուռնս ,
 Իբր յաղարծի մատաղերամ
 Դարմանելով ըզմէն պրտկուռնս .
 Զամբն կանգնես յիւրըն նեցուկ
 Թէ սարսեցոյց ինչ հողմ կայտառ ,
 Զայլում սրբէս խիտ տերեւուկ
 Զի տեսցէ 'նդ այդն արեւ պայծառ :
 Անդ զանազան տիպք եւ հասակք
 Եւ բոյր եւ երփն եւ ձեւք պէսպէս՝
 Զեղեալ ի քեզ հեշտ անուշակ ,
 Ըզթաղծաղկինս ոչ յիշեսցես .
 Յայս քո վայելս ու ի հայրենեաց
 Զայն ամիցես սիրելոյ քում ,

Թէ անց ձրմեան եւ անձրեւած ,
 Ծաղիկ բուսաւ յերկրի մերում .
 Հաս ժամանակ յատանելոյ .
 Չայն տատրակի լու եղեւ մեզ ,
 Ետուն ըզհոտ գընդակք որթոյ .
 Ե՛կ եւ իջցուք մեք ի պարտեղ :
 Ո՛հ , զի՛ ակորժ զի՛ եւ արխուր
 Հընչէ հեռուստ հրաւերդ այդ յիս .
 Յիս որ անվայրս եմ թաքթաքուր
 Եւ շուրջ ունիմ ցուրտ ամայիս :
 Չրմեան աստի չկամի չըւել
 Եւ յար ամբոխ խրժից օդոյ .
 Ծուխ եւ փոշի աստ յելեւել
 Ունի գընութիւն համակ ի կոծ :
 Երկիր յոր կամ՝ չէ հայրենիք .
 Չըկայ ծաղիկ աստ , չըկայ սէզ .
 Չըկան ընկերք ինձ ցանկալիք
 Ասել իջցուք մեք ի պարտեղ .
 Բայց են եւ աստ են ինչ մարմանդք ,
 Երեւին խմբն եւ ծաղկունք ,
 Այլ երկաթի զնոքօք կան բանդք ,
 Ձըրկեալ են աչք , զըրկեալ սընդունք .
 Եւ ատեցի ես ըզնոսին .
 Ձիմ հայրենեաց վայրին ծաղիկ
 Ընտրեմ սիրով քան զհոյլս անդին՝
 Ձոր աստ գըգուեն դարպասք ջերմիկ .
 Ձիմ հայրենի սօսուն սաղարթ
 Ես մեծարեմ՝ քան սիգանաղ
 Յալապաստրի տընկեալն աստ վարդ ,
 Քան մըրտենի՝ դոյն աննըւաղ .

Զ' անդ առաջուք կոխեալ տերեւ
 Յանկամ խամբեալ դըլխոյս իմ հիւս ,
 Զաստ ջովացեալս ի լոյս ու արեւ
 Չըտանիմ մերձ իսկ ճակատուս : . . .
 Ա՛վ որք ի տան իմ հայրենւոջ
 Ըեմիք յայգուն կամ ընդ երեկս
 Ի ծաղկաճեմն յայն դալարւոջ ,
 Աւ ասէք՝ իջցո՛ւք մէք ի սարսէզ ,
 Ծիւ մ' ի ծաղկանց տուք իմ դրախտին ,
 Հոտտեցայց հոտ հայրենի .
 Խունկ հայրենեաց տուք սրանդըխտին՝
 Զի տարաշխարհ մի մեռանի :

Ե

ՎԻՆԴՍՈՐ ԴՂԵՍԿ

Սհա զըղեակն այն որ ձաքար հիմն ի բըլուր
 Յորմէ հընչէ յաղիս հրաման աշխարհալուր . . .
 Եւ ես անցի 'նդ ոսկեձեղուն յարկօքն այսօր ,
 Տեսի զանքոյթն ապարանից եւ ճոխ Վինգսոր .
 Ըզփարազանց Բրխտանիոյ սլաակերս յորմունս
 Մերթ մանկածեւս , մերթ արքաշուք տեսի յար-
 բունս .
 Տեսի զգահլիճս՝ ուր բաղմեցան յատեան՝ դից
 պէս ,
 Ուր ցայգական տօնք , ցերեկի վըսեմ հանդէս .
 Ուր փառք , զաւեշտ , սէր , մահացուաց կարծե-
 ցեալ բաստք՝
 Կարծեցուցին վայր մի զնոսա յանմահ էրատտ .
 Տեսի զհեշտոցս՝ յորում զաշխարհ մուանային ,
 Եւ զարթուցեալք դարձեալ ըզթագս որսնէին .
 Առ սընարիւքըն կախ տեսի զէնս յաղթարերս ,
 Որք դաշնակիցք ոսկւոյ՝ կալան զերկրի եղերս . . .
 Ձեռն ի ճակատ հարեալ՝ ի վեհն իջի տաճար .
 Եւ հիացեալ մինչ կայի 'նդ գործ ձեռին ճար-
 տար ,
 Արկի խոնարհ զաչրս խոնջեալս . . . բա՛րէ , զէնչ
 այս
 Ի կըճասալ դեանի ու ի խորչրս մերձակայս . . .

Շիրիմք անշարժք եւ մահարձանք թապաւորաց,
 Արք ի դահոյսն անդ ցուցին՝ ու աստ ծածկէն
 ըզփառս .

Եւ մինչ որդիքն հըրճուեալք՝ ի սրահս անդ ի
 պար դան ,

Սոքա՛նդ վիսօքս անայցելուք անյարկըք կան : . . .

Այս է ուրեմն եւ ծովու տեարց յերկրի պայ-
 ման .

Խընդալ պարել առ վայր մ՛ ասպա դընիլ կոխան .
 Թողուլ այլոց ըզթագ , ըզուք , ըզսէր եւ կեանս ,
 Նրկարիլ յորմն ու անհետ լինել ի լուս տա-
 սանս : . . .

Ա՛հ , եւ Վինգսոր սանդրխտարան արքայ մարդ-
 կան ,

Ես ղի կոծիմ՝ , թ՛ աստ հայրենիք ումք չըկան :

2

Ի ՀՈՎՆ ՀՈՎՏԻՆ Հ՝՝

Յիշատակաւ բարեաց աւուրց
 Որք ի կենացքս մաղապուրծ
 Անցեալ զնացին ու այլ չըզանան ,
 Թողեալ լոկ հեարս տըխրութեան .
 Յիշատակաւ խմ սիրելեաց
 Եւ հեռացեալքս հայրենեաց ,
 Սիրտըս խոցեալ ի խուն խըղիս՝
 Նըստէր ի սուգ եւ ի լալիս .
 Ծուխըն մերձ էր , մեզըն շուրջ էր ,
 Եւ մըխիթար ինձ՝ ոչ որ չէր : . . .

Յանկարծ հարաւ ընդ սրտուհան
 Թեւիկ հողմոյ թափառական .
 Բացի փութով ես զապիկիս ,
 Սիրտըս ծըփաց , ծըփաց ոգիս .
 Հոմն ի հովտէն վայրավատին
 Ըզծայր թեւոցն եհար ինքնին ,
 Ծայրիւ թեւոցն հոմն հար սըրտիս
 Ու ի ճեմարան իւր ձըգեաց զիս :
 Օրհնեալ իցէ հովիկն հովտիս
 Որ զիւր դընէ ցաւոց սըրտիս :
 Եւ ցաւք սըրտիս էին բիւր բիւր
 Եւ ոչ ուստէք հըպէր յիս դիւր .
 Փոքրր միւս եւս մտանայի
 Թէ կայ բնութիւն ըզբօսալի .

Սիրա իմ սեւեալ եւ միայնակ
 Նրման լինէր հաւուն վայրագ՝
 Որ յաւերակս եւ յամայնս
 Ղօղեալ հիւսէ ճիչս եղկելիս :
 Ո՛հ, թէ հողմոյն հասեալ յիս չէր,
 Կարծեմ՝ վասն իմ վըճարեալ էր : . . .
 Օրհնեալ իցէ հովիկն հովախ
 Որ կեանս եբեր իմոյ սըրախ :
 Հարեալ հովոյն սեաւս երեսաց
 Ի դեղեցիկ վայր այսր էած : . . .
 Ո՛հ, այս ո՞րքան ժամանակ անց
 Ու առեալ չէի ես հօս ծաղկանց .
 Չէի տեսեալ բընութեան դէմս
 Եւ ոչ մարմանդրս ծաղկաճեմս .
 Ձըմեռն եւեթ էր շուրջ զինեւ
 Եւ կիսակոյր հայէր արեւ,
 Աւերակ մեծ շուրջրս թըւէր,
 Ու ես ի միջին՝ դէմք կիսաւեր .
 Առուրք յաւուրս յաւելուին
 Յաւք ըզցաւօքրս կուտէին .
 Եւ ծանրացեալ սիրտըս թընդայր
 Եւ տասալէր յերկիր ի վայր : . . .
 Օրհնեալ իցէ հովիկն հովախ
 Որ ցուպ եղեւ անկեալ սըրախ :
 Ահա հովիտս աստ ծաւալի,
 Ահա դաշտակըս ծաղկալի,
 Եւ հորիզոնս ահա՝ նգարձակ
 Որ յուշ առնէ զխոս հայրենեակ . . .
 Ա՛հ հայրենիք, այդքան հեռի
 Չխորդ իսկ կեամ՝ յօտարս երկրի .

Ա՛հ, էր շունիմ՝ վարազաթեւ
 Գառնալ ի քեզ յօղբս թեթեւ .
 Է՛ր շունիմ՝ աչքս քաջասուր
 Աննել զոլորսս հերձակրատւր ,
 Զանց արարեալ շուրջանակի
 Զըկաիւ պըշնուլ անդր ուղղակի
 Անդր՝ ուր իմ առն ուր իմ բընիկ ,
 Անդր՝ յորմէ կամ բացընկեցիկ .
 Տեսաննել դամ մի զսիրելիս ,
 Եւ հաստատել ըզդէլ աղիս .
 Ըզսիրելիսն իմ տեսաննել
 Եւ ապա կեալ կամ մեռաննել : . . .
 Այլ հորիզոնս թաքչի յինէն ,
 Արտասուք յաչս իմ դարձ առնեն . . .
 Մի մի , էկ հողմ իմ անուշիկ
 Ե՛կ սըրբեա վաչքս նըւաղիկ .
 Զէ չէ այս վայր՝ վայր արտասուաց
 Շատ խակ այլուր ես եկի՛ լաց ,
 Ե՛կ էկ հովիկ հեզահամբոյր
 Բարձ զարտասուացրս վարագոյր .
 Բաց բաց զաչկունքս անդրէն ի լոյս ,
 Աւրախարար մատո խրախոյս :
 Օրհնեալ իցես հովիկ հովախ
 Որ սըրբես աչս արտասուալիս :
 Օ՛ն , աչք եւ սիրտ իմ վերամբարձ
 Բարձող հողմոյդ երգեցից վարձ .
 Ո՛չ , ո՛չ ես դու շունչ մի նանիր
 Կամ վայրասպար օդոյ թըրթիւ .
 Ըզքեզ առ սիրտ իմ սուրհանդակ
 Զով զով փրչէ հրաշունչ հրեշտակ .

Ծայր քո սուեալ յանծայր ծովէն
 Եւ վերջքդ ի խոր հովտաց ծոցէն ,
 Նազկս շքրթամք յայերս ի վեր ,
 Արշունջդ անոյշ է իբրեւ սէր :
 Յորժամ ի ծառս սաղարթուն
 Թեւածելով սօսափես դուն ,
 Չըզխեամ զն՛նչ անս՛ ինձ ազգի
 Որ սիրտս անդուլ վեր վեր թընդի .
 Յորժամ իջեալ սրբոխս յովիս՝
 Ծաւալի զհեա քո եւ իմ սիրա .
 Եւ յորժամ շունչդ սուհասարակ
 Ազգէ ի ծառ ու ի ջուր ու ի մարդ ,
 Եւ շարժի դաշուն ալեաց նրման
 Եւ շառաչիւնքդ յօղրս ծըփան ,
 Յայնժամ օփռի՛նք քեզ սիրտս ըսփիւս .
 Լինի զդացուած մի՛ կերբքս բիւր .
 Կէս մահացու եւ կէս անմահ
 Ես յերջանիկն այն թըւիմ սպահ .
 Թէ չեմ՝ յերկինս՝ չեմ եւ յերկրի
 Այլ իբր ի կայս միջավայրի .
 Թըւիմ յաւուրս յամս սուաջին
 Այլ եւ հասեալ յեզր ատառնին .
 Ի տեսութիւնս իմըն մըխիմ
 Զոր թարթմանել ի բան չունիմ .
 Քանզի յանկարծ լռուէ քո ձայն
 Ու ես գրտանիմ գարձեալ ունայն .
 Այլ դու օրհնեալ հովիկ հովախ
 Որ դիւր դընես ցաւոց սրբախ :
 Արդ էկ հովիկ միշտ իբր սյժմիկ
 Սիրուն սարամամք սրբաեա՛ թեւիկ ,

Փարեանց զինեւ շրջաբոլոր
 Խօսեաց շրթամբդ ոլոր ոլոր •
 Խօսեաց , զի կայ քո սուրբ սրտագամ ,
 Ոչ մըտառեմ , այլ սրտակառ կամ •
 Ո՛հ երկնաշունչ Խօսեանց հողմիկ
 Առ երկրամածս անկեալ սրբաիկ ,
 Խօսեաց մի հաղ մի վանդ սրբաիս
 Ու ահա սրբբի սեւեալ ըսպիս ,
 Ըսպիս սրբբի եւ ողջանամ
 Ու ոչ մեռանիմ ես տարածամ : . . .

Ահա սրբաիկն իմ առեալ հով
 Թեթեւացաւ լին այն ցաւով •
 Ահա բառնայ զքօղ սեւասուգ
 Եւ ցամաքին յաչս արտասուք •
 Պանդրխատութիւնս ահա մեզմի
 Եւ զիւրանամ գէթ առ վայր մի : . . .
 Օրհնեա՛լ օրհնեա՛լ հովիկն հովաիս
 Որ հեշտ եբեր ցաւոց սրբաիս •
 Օրհնեա՛լ օրհնեա՛լ հրեշտակն հողմոց
 Որ զիւր փրչեաց սրբաիս ցաւոց •
 Օրհնեա՛լ օրհնեա՛լ գուժ Արարչիս
 Որ այց հողմովն արար սրբաիս :

Է

Ի ՍՈՅԼ ՍՐԸՆԳԻՆ

ՅԱԼԲԻՆԻ տարագիր
 Գեգերեւոլ սրգակիր՝
 Ելի երբեմն ի հովիտ
 Խորհրդակոծ խռովամիտ •
 Գարուն սրբուեալ էր պայծառ ,
 Ծաղկունք անկեալ ի դաւար ,
 Հովանային ծառք թանձրոսա
 Եւ ի նոսին հողմն ընդոսա :
 Անդ առ սակաւ սակաւիկ
 Իմ կիրք եղեալ խաղաղիկ ,
 Նըստեալ ընդ լայն մի ծառով
 Ծրծէի զհողմնն զով զով •
 Ու ահա յանկարծ ձայն հընչեաց
 Եւ սիրտս ի նոյն վեր վազեաց •
 Սոյլ սըրբնգի էր որ գայր
 Եւ ի հովտին զօրանայր •
 Ու առեալ տանէր զիւ ընդ իւր
 Ձրգէր բըլտոյ ի բըլուր •
 Գերերկրեայ խմբն թըւէր ,
 Իսպառ ըզսիրտ իմ թովէր •
 Հընչէր սըրբնգն այն սոյլ սոյլ •
 Գեղոր զաղիս իմ թոյլ թոյլ •
 Ըրրջան յարձակ վայրն առնոյր
 Եւ յիւ բախէր զիւր պարոյր •

Եւ առ յեօինն իւր խոնջ վանդ
 Յինէն կրկնիւր արձագանդք •
 Երբ նա հակիրճ մի հընչէր՝
 Ի սրբոհա ինչ մի Թըռչէր •
 Եւ երբ վըչէր մեծողոր
 Յառհասարակն ընդ ոլորա՝
 Խաղ ըստ խաղէ ներդաշնակ
 Չայն կոտորեալ գերունակ ,
 Եւ յանհաս իմն յելեւէջ
 Կոխեալ յերկնի ու երկրի մէջ ,
 Իմ սիրտ ոչ եւս էր ի ծոց ,
 Այլ ի հովտին Թաւալոց •
 Մինչեւ խոնջեալ՝ ապաստան
 Ի նոյն լինէր սրբինոյն այն •
 Ի նոյն բաղմէր անմեկին
 Եւ շուրջ յածէր ընդ նրմին •
 Ի սրընդին էջս անդր ի ձոր՝
 Սիրտս իջանէր յանդունդ խոր •
 Ի սրընդին ելա անդր ի վեր
 Սիրտ իմ յարփի Ժամանէր •
 Իմ սիրան ի փող այն սրընդին
 Թըռչէր զօղեալ գրչխովին •
 Կամ Թէ զսրբինոյն յինքն առեալ
 Գուսան կրբիցն արարեալ •
 Աքանջեւադորձ այն սրընդաւ
 Սիրտ իմ սրփուէր ընդ բընաւ •
 Ըստ բընուԹիւն անդրափաղ
 Ոչ յարԹնուԹիւն ոչ յերաղ՝
 Թըռչէր յաշխարհ խմբն նոր ,
 Խեղաց ծըփումն եւ ցընոր :

Միթէ հրեշտանին այն հովտին
 Ածեալ էր ձայն ի սրընգին •
 Կամ ի նքրն տայր շունչ հովտին
 Ըզսիրտս առնել կաթողին •
 Ես ոչ գիտեմ • բայց այն հունչ
 Յիս ներգործէր երկնաշունչ •
 Կիրք քան յանձին հընչողի
 Յիս ազդէին աւելի :
 Սոյն այն սրընգին յոգիս անդ
 Իբրեւ ընդ հեշտ դահաւանդ՝
 Դարիւ դարիւ հոսէր ուխ
 Փափկափրփուր սիրաբուխ •
 Իմ սիրան ինքնին գեաահեա
 Օժանդակէր զնորայն վեա •
 Պարզեալ ըզդէմարն խոժու ,
 Ընդ սեաւ կըրիցըն կոշկոս
 Վաղէր հեզիկ կարկաջուն
 Համատարածն յանդորրուն •
 Խառնիւր յալիս անխրոսով
 Բուժէր ըզտապ , լինէր զով •
 Աւ առեալ շքջան հանդարտիկ
 Հանգուցանէր զիւր ծըփիկ : . . .
 Աստուած իմ տէր , զի՛նչ այս հրաշ •
 Յեզէզն ի խուն կիսամաշ
 Հունչ մ' ոլորեալ եւ բեկբեկ ,
 Աւ ի նրմա մատրն թէքթէք՝
 Հարժէ զոգիս վեր ի վայր
 Սիրահալած եւ անխայր :
 Ա՛հ , թէ ծըղօս մի ջախջախ
 Այսքան զննու առնէ խաղ ,

Եւ ծղղրխնոյ նրման կուռ
 Շուրջ բերէ զսիրաս յընդհանուր ,
 Զինչ լինիցի սրբափն այն
 Յորժամ զերկնի առցէ ձայն .
 Զինչ լինիցի այս սրբափս
 Երբ ի հովտէ կենցաղիս
 Ուր պանդրխտիմքս յարասուդ ,
 Եւ յեղս աչացս արտասուք ,
 Երբ թըսիցէ նա ի վեր
 Աս պատրաստեալն քո սէր ,
 Եւ լուիցէ զբովանդակ
 Յաւիտենիցն նրւադ : . . .
 Օրհնեալ իցես ո՛վ սրբինդ
 Որ յուշ ածեր ինձ զերկինք ,
 Քո սուղ սուլիկ սրբոտահան՝
 Եղեւ երկնի նձ պատուհան :

Ը

Ի ԲԱՐՀԱՄ ԳՂԵԿԻ

ԸՆԴ ՀԻՆԱԻՈՒՐՅ ԿԱԳՆՈՎ

Աղնիւ ի զարմ եւ ի սիրտ, - քան զոր չեք գուն -
բարեկամ՝

Ըզսեաւ քողով նրժգեհիւ երբեմն արկեալ ոս-
կեծամ,

Իշտանակերսլ յօրինեաց յանկարծ ըզկեանս իմ
խրթին

Ի խուն խրդէս ի Բարհամ մուծեալ զըղեակ մեծ
եւ հին .

Ի վայր սիրուն, ուր բնութեան ճարտարակեալ
նուրբ գործեաւ,

Յիշատակք բաղմադէմք ճեմին ընդ լայն հովա-
նեաւ .

Զէնք դիւցազանց դահլըճին աղգեն ըզփառս եւ
կորանս,

Եւ հրնութիւն՝ նուիրական ինձ յարգարէր ըզ-
տահմանս :

Որպէս կուսան մի հըսկայ սրբուեալ զօթոց դի-
րուտար

Տարածանէ զգեղանխատ սա դիրս հազար արտա-
վար,

Բըլուրք եւ գաշտք եւ հովիտք ի սմա նկեալ
խառն եւ լըճակք

- Զանազանեն ըզգեղոյն գեղեցկագոյն եւս որակ .
- Աճեն փիճիք ընդ կաղնեաց հինաւուրց , շոճք
Թաւոսառնիք ,
- Ղօղանըստիկ սոխակաց պատգամաւեղք հովասունիք .
- Են են աստ Թառք մուսայից եւ քերդողաց գիտարանիք ,
- Բանասիրաց հովանիք եւ սիրելեաց ճեմարանիք .
- Համարձակ է տեղիս ու անբան սրգոց բընութեան .
- Արօտականք բաղմերամք պէս պէս բքջեալ ճեմ գընան .
- Սիղաճարակ աստ նախիր հայթհայթէ կաթնանուշակ
- Մատրառակել ի սեղանն առաւօտին հեշտ ճաշակ :
- Կայտուէ զուարակն ի մարմանդ շարժեալ ազի ապիսեան .
- Անձկաւ ըստեանց մայրենեաց գընան գառնիք հեղաձայն .
- Վազեն պառակք եղջերուաց աճիւնաճիւղ բարձեալ սար ,
- Մերձին զուարթունք , հեռանան զարհուրանաց հաւասար .
- Յեղակարծուց ի խարձէն կանգնէ զականջ նապաստակ
- Եւ յըստուերաց խակ խեթկեալ լինի ' խըշախի փախըստեակ .

- Խառն ընդ դասակ քառասնեայց աստ ճարակին
 փեարաւորք ,
- Ընդ հաւուց ընտանեաց դոն սիրամարդ թագա-
 ւորք •
- Դրախափն եւ իմ հայրենի գեառափանց հիւր՝ փա-
 սեան հաւք ,
- Սագք սուաղիլեակ .ք եւ նազողք արծաթ ալեաց
 սէգ կարասք :
- Ընդ ազգ ազգ կենդանեացս հայեցեալ՝ նոր ըզգամ
 կեանս ,
- Եւ նորանորս ինձ ածէ հաճոյս փոփոխ մէն վայր-
 կեանս :
- Ի մենաւոր դարակիս նըստեալ մենիկ հաշտա-
 կիր
- Յարձակաւայրրս խաղաղ հեղիկ շարժեմ՝ աչաց
 ծիր՝
- Հովիտ տարած ընդ դարիւս ախօսաբեկ սնդ կա-
 նաչ ,
- Մայրք եւ սուրակք մերձ ընդ մերձ ինձ երանեն
 ընդ առաջ •
- Հարթածաւալ ագարակ զոր սափրեաց սուր
 գերանդի ,
- Եւ ալէճեւ ի գեփիւռ շքթեալ խարտեալ գէսք
 անդի •
- Ընդ մէջ սասոց ծածանին արծաթեգոյն մըկա-
 նուհք
- Որպէս անձայն մի կիթառ թէ՛ւ հանասալ
 թըրթըսուհք •
- Իսկ յայն կուսէ սեւակերսլ ծառաստանին՝ շէնք
 հեռի

- Պէս մահարձանք ի լերինս սրբուեալք՝ աչաց նը-
կարի . . .
- Ո՛հ, մարդիկ բազմակիրք խաղան շարժին անդ ան-
դուլ,
- Եւ ճիկ մի ոչ ժամանէ նըկատողիս ինձ զանխուլ:
Սարսին զինեւ դաշտամած կաղնոյ կողերքըն
կայտառ,
- Զորով դարուն ինն հարիւր է՝ նդելուզեալ ձորձ
սայծառ .
- Զէր տակաւին ծովակալ Նորմանդին օտն ե-
զեալ աստ,
- Մինչ երկրագրաւ ընդաճէր ի հող արմատ սորին
հաստ .
- Ազգս երեսուն ետես սա՛նդ տերեւս տապաստ
ի յերկիր,
- Եւ տակաւին պանդրխախ հովանանայ ինքըն
ժիր : . . .
- Ա՛հ, սպազատ երկրի մարդ, զինչ քան ըզքեզ
անհաստատ .
- Փոխոխին ազգք պետութիւնք, եւ կայ՝ նշարժ
ծառ հաստարմատ .
- Հրոսակք հիւսիսոյ հոսին ի մուտս արեւու,
Սընընդակիցն եղենեայց՝ լինի ալեաց սանձար-
կու .
- Եւ ծովակոծ մօրափանց մանկուէք վարեալ տա-
րադէմ՝
- Ի մէջերկրեայն ազարակ ձրզեն արօր յամբա-
ճեմ : . . .
- Յայս անդաճմունս ելի՝ լեառնըն հուպ՝ դիտել համ-
արձակ .

Ո՛Տ, երկնածոր սիւգ բարձանց, ո՞վ շուրջ սահ-
մանք ընդարձակք . . .

Այլ յ՛ն, յ՛ն, զի՛նչ անդր ի վայր . . . չիցէ՛ն ծո-
վու այն ալիք .

Չիցէ՛ն եւ յայնկոյս ծովուն՝ իմ հեռացեալ հայ-
րենիք . . .

Ա՛հ, ըզձով տեսի ես եւ ծորեաց սիրտ ի ծոցիս,
Ծանեայ՛ զիս նրժգեհ՛ եւ յիշեցի զհայրենիս : . . .
Բարեա՛ւ մընայք Բարհամայ բարձք եւ բաստք
դուք երջանիկ ,

Գաւնամ՝ երթամ՝ ես հանդէլ ի հայրենին իմ
խրղիկ :

Թ

ԱՌ ԾՈՎ

Ի ԴԱՐԵԻԱՆԴ ԲՐԱՅՏՈՆԻ

Մո՛ւլ, ծո՛ւլ, ծո՛ւլ, մեծ եւ գեղեցիկ, տաշտ Աստու-
ծոյ եւ սրտիկեր,

Դու որորան իմ մանկութեան, տանս եւ սրբախ
միշտ ընկեր •

Այս հընգերեակ լուսինք ըզքեզ ի պանդրխակս
գողացան,

Անտես ալեացո՛ղ ես յուզեցայ, ալիք յոգիս վե-
րացան •

Ողջո՛յն ընդ քեզ՝ զոր գըտանեմ դարձեալ՝ հող-
մոյս ձայնակից,

Եւ ընդ երկուցըդ մեջ՝ ըզսիրտս արկանեմ լար
դաշնակից •

Այլ սա խոտիկալ, դու հաշտ եւ հեզ կասու-
տաղգեստ զինչ կուսան

Ստորոտ սիւեալ շարժիս շիկնիս շքթիս, համ-
բոյր տաս բըլրան •

Շերտ շերտ շըրթամբք շառաչադեղ մընչես մընչ-
չես հանասադ,

Ծրփածըղիկ բաղիօք գըրիկես թողուս դափուհիքս
անաւադ •

Եւ ի կակղիկդ իսկ ատամանց տատանախաղ ի
համբոյր

Ճըմլեալ ըզկող ճերմակ բըլխա՝ զալիսդ անևս
կաթնաթոյր ¹ .

Քո զբօսանք լոկ , ըստառնալիք չեն ասա , ալիք՝
ոչ կոհակք ,

Գան պերճողունք , այլ ընդ խիճի հարեալք՝
խուժին ձայնարձակք .

Եւ ձայնն այն սրահ ընդ սրահ հընչեալ շառաշա-
